

№ 5 ՄԱՅԻՍ

ԱՆՍԱԼԻՇԻԿՈՒՆ

«ԱՆԴԵՍ՝ ՄՇԱՍՏՈՂ ԵՎ ՈՐ ԱՆՆԱՐՔԵՐ ՄԱՐԴԿԱՆԿ ՀԱՄԱՐ



Համարի թեման՝

ՀՐԱԴՂԱԴՂԱՐ. 15 ՏԱՐԻ ԱՆԿ

Սեֆանակերտ 2009

Շապիկի լուսանկարի հեղինակը լուսահոգի Ռուբեն Մանգասարյանն է, որ այս դրվագն անմահացրել է պատերազմի ժամանակ՝ Զարվաճառում: Մարտական գործողությունների կարճատև դադարի ժամանակ հայ զինվորը առիթը բաց չի թողել բնական տաք ջրում ցայվելու համար:

Յրադադարի 15 տարի. խաղաղ փոխակերպման հնարավորությունները

Մասիս ՄԱՅԻԼՅԱՆ
Ստեփանակերտ

2009 թվականի մայիսին լրացավ դարաբաղյան հակամարտության երեք կողմերի միջև Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ կնքված հրադադարի 15 տարին: Սույն հոբելյանը, կամ, ինչպես դեսպան Վլադիմիր Կազիմիրովն է անվանում՝ «կիսահոբելյանը», պատեհ առիթ է այդ իրադարձությանը գնահատական տալու եւ փորձելու ամփոփել հետպատերազմյան տարիների որոշ արդյունքներ: Ի՞նչ է արվել հրադադարի ռեժիմի ամրապնդման համար, ի՞նչը չի արվել, եւ ի՞նչ դեռ կարելի է անել: Բայց սկզբում անդրադառնանք նախապատմությանը: Որպես իրադարձությունների ականատես եւ պատերազմի ու հետպատերազմյան տարիներին անցկացված բանակցությունների մասնակիցներից մեկը՝ կարող եմ արձանագրել, որ դարաբաղադրբեջանական հակամարտության գոտում 1992-93 թվականներին հրադադարի մասին պայմանավորվածություններ ձեռք են բերել մոտ տասնյակի չափով. որպես համաձայնությունը ստորագրողներ հանդես են եկել պատերազմող երկու հիմնական կողմերը՝ ԼՂՀ-ն եւ Ադրբեջանը: Բայց, ի տարբերություն հրադադարի մասին համաձայնագրի, որ վերջնականորեն ձեւակերպվել է 1994թ. մայիսի 12-ին, նախորդ պայմանավորվածությունները կարճաժամկետ բնույթ են կրել:

Երկայումս գործող անժամկետ հրադադարի ձեւակերպման հիմքը դրվել էր 1994թ. մայիսի 5-ին՝ Ղրղզստանի մայրաքաղաքում, որտեղ ԼՂՀ, Ադրբեջանի ու Հայաստանի խորհրդարանների ղեկավարները քննարկել են տարածաշրջանում առկա իրավիճակը եւ ընդունել «Բիշքեքյան արձանագրությունը» (ադրբեջանական կողմն արձանագրությանը միացել է եռօրյա ուշացումով եւ որոշ վերապահումներով): 1994թ. մայիսի 16-ին Մոսկվայում, Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի միջնորդությամբ, կայացել է ԼՂՀ, Ադրբեջանի ու Հայաստանի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների հանդիպումը: Այդ հանդիպմանը Սամվել Բաբայանը, Մամեդռաֆի Մամեդովը եւ Սերժ Սարգսյանը հայտարարել են կրակի դադարեցման մասին ձեռքբերված համաձայնությունը պահպանելու՝ իրենց երկրների հակվածության մասին: Նույն թվականի հուլիսի 27-ին եւ օգոստոսի 28-ին կողմերը նորից հավաստեցին իրենց ձգտումը՝ պահպանել հրադադարի ռեժիմը ընդհուպ մինչեւ խաղաղության պայմանագրի ստորագրումը: Դարաբաղյան հակամարտության գոտում հրադադարի ու դրա ռեժիմի պահպանման մասին կողմերի ձեռք բերած համաձայնությունը եզակի է իր տեսակի մեջ: Նախ՝ հրադադարը ձեւակերպվել է ռուսաստանյան միջնորդ Վլադիմիր Կազիմիրովի միջնորդությամբ, օգտագործելով «Ֆաքսիմիլային դիվանագիտությունը», այսինքն՝ առանց փաստաթղթի ստորագրման առանձնակի արարողության: ԼՂՀ, Ադրբեջանի ու Հայաստանի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները ֆաքսիմիլային կապով Մոսկվա են ուղարկել կրակը դադարեցնելու մասին համաձայնության նույնական տեքստի իրենց կողմից ստորագրված տարբերակը: Երկրորդ՝ հրադադարի ռեժիմը պահպանվում է առանց այսպես կոչված «կապույտ սաղավարտների» մասնակցության եւ խարսխված է կողմերի ուժերի ռազմաքաղաքական հավասարակշռության վրա: ԼՂՀ պաշտպանության բանակի հետ միասին հետպատերազմյան հավասարակշռության կարելու բաղկացուցիչ են հանդիսանում Արցախի լեռնային եւ հարթավայրային մասերի տարածքները, որոնք ամրագրված են ԼՂՀ Սահմանադրությունում:

ԼՂՀ եւ Ադրբեջանի միջև մարտական գործողությունների դադարեցումն, անկասկած, դարաբաղյան կարգավորման հիմնական, շոշափելի ձեռքբերումն է մնում: Կարելու խնդիր է հանդիսանում ժամանակ առ ժամանակ խախտվող հրադադարի ռեժիմը պահպանելը: Յրադադարի ռեժիմի ամրապնդման մասին 1995թ. փետրվարի 6-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ հակամարտության բոլոր կողմերի ընդունած փաստաթուղթը, որը նախատեսում է իրավիճակի օպերատիվ վերահսկողության

կոնկրետ մեխանիզմ, չի կատարվում: Պաշտոնական Բաքուն, իրեն հատուկ ոճով, խուսանավում է ստանձնած պարտավորությունների կատարումից: Ադրբեջանական կողմը, ի տարբերություն հայկական երկու կողմի, չի ընդունել սեփական պաշտպանական սահմանագծերի առաջապահ դիրքերից դիպուկահարներին հետ քաշելու մասին միջնորդ երկրների վերջերս արած հրատապ առաջարկը:

Հրադադարի ռեժիմի ամրապնդման շուրջ կոնկրետ առաջարկություններ հնչել են նաև Ստեփանակերտից: Ավելորդ չի լինի հիշեցնել կողմերի գինուժի շփման գծում այն դիրքերի վերականգնման մասին առաջարկը, որոնք առկա էին պատերազմից անմիջապես հետո (այսպես կոչված՝ status quo post bellum), ինչը թույլ կտա ընդլայնել չեզոք գոտին: Հայտնի է, որ վերջին 10 տարում ադրբեջանցի զինվորականներն իրենց առաջապահ դիրքերը ջանացել են մոտեցնել դարաբաղյան դիրքերին, եւ դա հակամարտող կողմերի միջև գտնվող չեզոք գոտու հաշվին: Փորձը ցույց է տվել, որ ինչքան քիչ է դիրքերի միջև հեռավորությունը, այնքան մեծ է հրադադարի խախտումների թիվը, խախտումներ, որոնք երբեմն վերածում են լոկալ մարտական ընդհարումների: Այնպես որ, նախնական դիրքերին ադրբեջանական զորամիավորումների վերադարձը էականորեն կկրճատի սահմաններում խախտումների դեպքերը: Հրադադարի գծում կողմերի նախնական ստույգ կորոդինատները կան այն ժամանակաշրջանի ռազմական քարտեզներում ու արբանյակային լուսանկարներում, որոնք պահվում են միջնորդ երկրների համապատասխան գերատեսչությունների պահոցներում:

Հրադադարի ռեժիմի վերահսկման միակ միջազգային մեխանիզմը մնում է ԵԱՀԿ մոնիտորինգը: ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակը պարբերաբար դիտարկումներ է անցկացնում ԼՂՀ ու Ադրբեջանի զորքերի շփման գծում: ԵԱՀԿ կողմից իրականացվող այս միջոցառումներն անհրաժեշտ են, բայց ոչ բավարար: Անձնակազմի փոքրաթվության պատճառով դեսպան Կասպչիկի գրասենյակը հնարավորություն չունի հրադադարի ռեժիմի առավել հաճախ եւ մշտական դիտարկման համար: Արդյունավետ վերահսկողության համար նպատակահարմար է ԵԱՀԿ առաքելության կազմն ընդլայնել միջազգային քաղաքացիական դիտորդներով:

Վերջին տարիներին եռանդուն կերպով առաջ է քաշվում մեր սուբտարածաշրջան խաղաղապահների տեղաբաշխման անհրաժեշտության մասին գաղափարը: Թեեւ դարաբաղյան հակամարտության կարգավորման այսպես կոչված մադրիդյան սկզբունքները չեն հրապարակվել, այնուամենայնիվ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առանձին հայտարարություններից երեւում է որոշ երկրների ձգտումը հակամարտության գոտում միջազգային խաղաղապահ ուժեր տեղաբաշխել: Համանախագահների կարծիքով՝ այդ ուժերն ապահովելու են Ղարաբաղի ժողովրդի անվտանգությունը՝ իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներից ԼՂՀ պաշտպանության բանակի ստորաբաժանումների հնարավոր դուրսբերման դեպքում: Միջնորդներն ըստ էության մեզ առաջարկում են ռազմական անվտանգության ունեցած սեփական համակարգը փոխարինել «կապույտ սաղավարտների» անարդյունավետ մեխանիզմով: Որեւէ տարածք զիջելու գաղափարի անընդունելիության մասին քանիցս հայտարարել են ԼՂՀ քաղաքական ղեկավարության ներկայացուցիչները եւ քաղաքացիական հասարակության առաջնորդները: Այս հարցի շուրջ Ղարաբաղում արդեն ձեւավորվել է հանրային լայն կոնսենսուս: Արցախցիների այսպիսի դիրքորոշումն աջակցություն է գտնում հայաստանյան հանրությունում ու Սփյուռքում: Ստեղծված պայմաններում ազատագրված բոլոր տարածքներում վերաբնակեցման գրագետ մշակված եւ արդյունավետ իրականացվելիք պետական ծրագիրը միջնորդներին եւ տարածաշրջանային մյուս խաղացողներին կօգնի հրաժարվել ԼՂՀ կողմից տարածքային զիջումների հնարավորության մասին խաբուսիկ կարծիքից: Ինչ վերաբերվում է խաղաղապահներին, ապա Ստեփանակերտում կա ընկալումն այն բանի, որ ԼՂՀ տարածքում օտար զինված ուժերի հնարավոր հայտնվելը՝ թող որ նույնիսկ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների դրոշի տակ, անկասելիորեն կհանգեցնի հանրապետության ինքնիշխանության կտրուկ սահմանափակման: Այն հանգամանքը, որ ԼՂՀ ինքնիշխանությունը դեռեւս չի ճանաչվել միջազգային հանրության կողմից, եւ երկիրը ներկայացված չէ նշյալ կառույցներում, կարող է հանգեցնել նրան, որ Ղարաբաղը չի տիրապետի այդ ուժերի վրա ներազդելու միջազգային իրավունքով երաշխավորված որեւիցե լծակի: Այս պայմաններում խաղաղապահ ուժերի հնարավոր տեղաբաշխումն արմատապես կհակասի մեր ազգային շահերին: ԼՂՀ-ն չի կարող սահմանափակել իր պետական

ինքնիշխանությունը՝ չստանալով դրա համապարփակ միջազգային իրավաբանական ճանաչումը:

Ավելին, 2008-ի օգոստոսին մենք ականատես եղանք Հարավային Օսիայում մարտական գործողությունները դադարեցնելու եւ բնակչության անվտանգությունն ապահովելու՝ խաղաղապահների անընդունակությանը: Խաղաղապահ ուժերի առկա մեխանիզմն արդյունավետ ու ազդու չէ: Միայն այն բանից հետո, երբ Ռուսաստանը, իր քաղաքացիների պաշտպանության պատրվակով, Ցխինվալ եւ այլ բնակավայրեր մտցրեց 58-րդ բանակի խոշոր ստորաբաժանումները, հաջողվեց վերահսկողության տակ վերցնել իրավիճակը: Բալկանյան ոչ վաղեմի պատմությունից հիշում ենք, թե ինչպես Սերբական Կրահնայում ՄԱԿ-ի խաղաղապահները չկարողացան ապահովել տարածաշրջանի բնակչության անվտանգությունը:

Այսպիսով, անվտանգության պահպանման անմիջական պարտականությունները, իսկ դրանց հետ մեկտեղ էլ՝ կոնկրետ տարածքները երրորդ կողմին փոխանցումը չի երաշխավորում նույն այդ անվտանգության բարելավումը եւ իր մեջ նոր վտանգներ է պարունակում: Ղարաբաղցիները խորհրդային շրջանի «խաղաղապահների» հետ շփվելու սեփական փորձ ունեն, երբ բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով 1980-ականների վերջին ուղարկված զորքերը պարբերաբար չէին կատարել իրենց պարտականությունները եւ չէին կարողանում ապահովել Ադրբ. ԽՍՀ հայազգի բնակչության անվտանգությունը ջարդերից ու բռնություններից: 1991 թվականին, ԽՍՀՄ ղեկավարության հրամանով, նույն այդ զորքերը հայ բնակչությանը նույնիսկ վտարեցին Արցախի որոշ մասերից («Կոլցո» օպերացիա): Հակամարտության գոտի խաղաղապահներ ուղարկած կառավարությունների համար իրենց շահերը եւ իրենց իսկ խաղաղապահների անմիջական անվտանգությունը միշտ էլ ավելի կարեւոր են լինելու, քան տեղացի բնակչության անվտանգությունը: Սա եւս իրողություն է, որ ընկալվում է Ստեփանակերտում:

Ցավոք, հակամարտության կարգավորման նպատակով միջնորդների ներկայիս առաջարկություններն իրատեսական չեն եւ հակասում են Հայաստանի ու ԼՂՀ-ի շահերին: Դրանք կենսագործելու փորձերն ավելի շուտ կհանգեցնեն հանրությունների ներսում խոր հակասությունների եւ լարվածության սրման նոր ակիբի, քան հաստատուն խաղաղության: Ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում կարեւորագույն առաջնահերթությունը, հակամարտության լուծման փոխընդունելի սկզբունքների որոնումներին զուգահեռ, պիտի դառնա հակամարտության խորացման եւ նոր պատերազմի կանխման միջոցների ձեռնարկումը:

Հակամարտության կարգավորման ոչ հայանպաստ սցենարների չեզոքացման եւ ԼՂՀ անվտանգության ամրապնդման համար երկու հայկական պետականություններին հարկ է գործարկել հիմնախնդրի լուծման «երկրորդ հարթակը», այսինքն՝ ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում բանակցային գործընթացին զուգահեռ եռանդուն եւ նպատակասլաց աշխատանք տանել ԼՂՀ միջազգային ճանաչման ուղղությամբ: Դե-յուրե անկախ Արցախը նոր հնարավորություններ կստանա սեփական անվտանգությունը քաղաքական-դիվանագիտական միջոցներով ապահովելու համար: Այսպիսով, մենք թվարկեցինք ոչ քիչ առաջարկություններ, որոնց իրականացումը միջնորդների ու հակամարտող կողմերի իշխանությունների կողմից կնպաստի հրադադարի ռեժիմի ամրապնդմանը եւ տարածաշրջանում կայունության պահպանմանը:

Օգտագործված աղբյուրներ.

- Ա. ԷԱՉԷԼ ԷԾԻ Թ, "1 օժ Էաձաաձո՞", www.vn.kazimirov.ru
- M. MAYILIAN, "The Nagorno-Karabakh Republic as Factor of Peace and Stability in the Region of the Southern Caucasus", University of Connecticut, USA, 2006
- 1. 1 ԱԷԷԲԻ, "Էի Օաձաւթ Էի Օաձի ԶՕ ԷՉԱԻ Էթ Karabakh-open.com, 2007
- 1. 1 ԱԷԷԲԻ, "Էի Օաձաւթ Էի Օաձի ԶՕ ԷՉԱԻ Էթ "Էաաեաչնեե օՉաե", www.kavkaz-uzel.ru, 2008
- 1. 1 ԱԷԷԲԻ, "1 1 ձաձաձո՞նձի Զնեե Զաաեի 1: ԶՉաեյա ԷՉ Էաձաաձո՞", <http://georgica.net>, 2009
- Է. ՍԱՆԱՍՅԱՆ, Ղարաբաղյան դիմակայությունը հարավօսական դեպքերից հետո, www.analyticon.org, #1, 2009

Յրադադարը 15 տարեկան է

Մուրադ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ստեփանակերտ

Սկսեմ նրանից, որ ինձ մոտ այն կարծիք համոզմունքն է ձեռավորվել, որ ոչ ոք՝ լինի նա քաղաքագետ, քաղաքական ու հասարակական գործիչ, զորամասի նախկին հրամանատար, թերթի խմբագիր կամ պատգամավոր, կամ էլ պարզապես համաքաղաքացի, իրեն չի ծանրաբեռնել խորանալու կամ գոնե կարդալու (առանց շտապելու) Բիշքեքյան արձանագրությունը: Ո՞րն է պատճառը, որ հայ հանրությունը՝ ԶԶ եւ ԼՂԶ ռազմական ու քաղաքական ղեկավարության գլխավորությամբ, նույնիսկ ոչ թե անմոռու, այլ անգամ մեծ ոգեւորությամբ է վերաբերվել «Բիշքեքյան արձանագրությանը», որտեղ սեւով սպիտակի վրա գրված է «զբաղեցրած տարածքներից զորքերի դուրսբերման» մասին: Ընդգծում եմ՝ հենց հայ հանրությունը, այլ ոչ թե միայն Լ.Տեր-Պետրոսյանը, Ռ.Քոչարյանը, Վ. եւ Ս. Սարգսյանները, Ս.Բաբայանը, ԶԶ եւ ԼՂԶ խորհրդարաններն ամբողջությամբ վերցրած, որի պատգամավորների կեսը, ի դեպ, կազմում էին Դաշնակցության ներկայացուցիչները, կուսակցություն, որն էլ ներկայումս բոլորից բարձր է գոռում՝ «կորչեն դավաճանները, ոչ մի թիզ հող...»: Ասում եմ՝ ամբողջ հանրությունը, որովհետեւ արձանագրության տեքստը հրապարակվել էլ հնչվել է Զայաստանի ու Արցախի բոլոր լրատվամիջոցներում, այդ թվում՝ «ԼՂ Զանրապետություն» («Ազատ Արցախ») եւ բանակային «Մարտիկ» թերթերում: Ոչ ոք բողոքի ու անհամաձայնության նշաններ ցույց չի տվել: Ինչու՞:

Նախ՝ որովհետեւ այդ շրջանների գրավման նպատակը թշնամական կրակի ճնշումն էր, այլ ոչ թե ներկայումս արծարծվող «պատմական տարածքների ազատագրումը»: Սեփական բակի սահմաններից ավելի լայն փոքրիշատե մտածելու ունակ մարդու գիտակցության մեջ զբաղեցրած տարածքները, բացառությամբ Լաչինի (այդ արդեն հետո, մի քանի տարի անց դրան ավելացավ նաեւ Քելբաջարը) պատկերացվում էին «պատանդ շրջանների» տեսքով, որոնք պահվելու են այնքան ժամանակ, մինչեւ Բաքուն համաձայնվի Արցախը ճանաչել կամ ինքնիշխան, կամ էլ որպես Զայաստանի մաս:

Երկրորդ՝ բնակչության, ընդհանրապես՝ բոլորի համար այնքան դժնդակ էր պատերազմը, որ իրական խաղաղությամբ ուրախանում էին առանց իրենք իրենց հաշվետու լինելու, հատկապես՝ որ գինադադարը կնքվում է քո իսկ առավելության, քո իսկ ձեռքբերած հաղթանակի պահին:

Չարկ է ավելացնել նաեւ հետեւյալը. սույն պարզաբանումները ես չեմ, որ պիտի անեմ, այլ պետական տեղեկատվական ծառայությունները: Ինչպես նաեւ իրենք՝ ԶԶ եւ ԼՂԶ ղեկավարությունը: Իսկ չի արվում այն պատճառով, որ չափից ավելի բարձրթողի վիճակի են հասցրել հանրային կարծիքին առնչվող իրավիճակը, այնտեղ հիմա «պարահանդեսը ղեկավարում են» ժողովրդի քիմքին հաճո քաղաքական գաղափարներն ու դիրքորոշումները... Ծարունակել մնալ «ջայլամի դիրքում», աչքերը փակել մեր շուրջ հեղեղատների ու ծանծաղուտների վրա, նշանակում է մի քանի անգամ մեծացնել վթարի հավանականությունը:

Ես նպատակահարմար գտա իրականությունը ցույց տալ այնպիսին, ինչպիսին կա, որպեսզի մարդիկ կարողանան ազատվել մտացածրից: Երկար դիստանցիայում հարկ է հետեւել «Ավելի լավ է դառն ճշմարտությունը, քան գեղեցիկ սուտը» սկզբունքին, իսկ մենք, որպես ժողովուրդ, դեռ երկար ճանապարհ ունենք գնալու, համեմայն դեպս՝ շատ եմ ուզում, որ հենց այդպես էլ լինի:

Մի՞թե պարզ չէ, որ ավելի լավ է բաց աչքերով անցնել հեղեղատների ու ծանծաղուտների միջով, քան փակ աչքերով կամ էլ վարդագույն ակնոցներով:

Իսկ ԻՆՉ Է ԵՂԵԼ ստորագրումից հետո

Քաղաքականորեն եւ իրավաբանորեն Զայաստանն անկախ պետություն է, բայց կան

բազմաթիվ գործոններ, որոնք խոչընդոտում են նույն այդ անկախության գործնական իրականացմանը, առավել եւս՝ պատմության կտրուկ ոլորաններում, երբ նրա որոշումներն ու դիրքորոշումը հակասության մեջ են մտնում խոշոր տերությունների շահերի հետ: Ուստի մեր խնդիրը, ավելի ստույգ՝ մեր գլխավոր եզրակացությունը մեզ համար կորստաբեր, Ռուսաստանի ճնշման տակ կնքված հրադադարից հետո կայացել է հետեւյալում՝ «Էական ինչ-որ բանում մենք՝ որպէս հանրություն, որպէս պետություն, որպէս ժողովուրդ, մշտապէս պիտի լինենք համաշխարհային չափանիշների ամենաբարձր մակարդակում, ընդգծում եմ՝ ոչ թե շատ բանում, այլ ինչ-որ մի, բայց եական բանում»:

Մի խոսքով, մենք պիտի ամեն ինչ մի կողմ թողնեինք եւ աշխատեինք ինքներս մեզ վրա: Աշխատել, աշխատել եւ նորից աշխատել... մեր ներքին տեսքի ու էության վրա: Բայց ու՞ր է թե... Հաղթական խանդավառության «մեղրամիսը» լկտիություն ունեցավ ցանկություն հայտնելու երկար ժամանակով մեր հանրային գիտակցության մեջ գրանցվել այսպիսի ձեւակերպմամբ՝ «Նման փառավոր ու համոզիչ մեր հաղթանակից հետո, այսպիսի խայտառակ պարտությունից հետո ազերիները, լիաբուն ճաշակելով սեփական ռազմական ագրեսիայի դառը պտուղները, այլեւս չեն համարձակվի ոտնձգություն կատարել մեր ազատության վրա, մեր հողերի վրա»: Սրանից բխող բոլոր բացասական, թուլացնող հետեւանքներով: Եւ այդ ժամանակներից սկսվեց ու շարունակվեց, «դոմինոյի սկզբունքով», իրար նայելով ու իրար հետեւելով՝ վերցնում են, դնում են, նորից են վերցնում, ամնում են, շինում են, եւ, հարմարվելով ամեն ինչին, իրար հետ մրցում են, թե ով ավելի շատ, ով ավելի բարձր, ով ավելի վառ՝ «միայն թե մյուսներից հետ չմնալ», քանզի հետ մնալն ընկալվում է որպէս թուլություն, ոչ հմուտ լինել, որպէս իմիջի, հեղինակության, ազդեցության կորուստ, որպէս ստորադաս ենթախմբին պատկանելություն... Ծննդյան օրերի պերճաշուք նշում, շիրմաքարեր, տներ ու կառուցապատումներ, ավտոմեքենաներ եւ դրանց հատուկ համարանիշներ, կանացի թանկարժեք զարդեղեն, երեխաների համար գրպանի փող եւ այլն, այս ամենը, ամենը, ամենը պիտի համապատասխանի որոշակի մակարդակի, որ ընդունված է ամեն մի նորելիտային սոցիալական կաստայում:

Իսկ հիմա ի՞նչ

Բնականաբար, մարդիկ իրենց մեծամասնության մեջ չեն կարող ինքնաբերաբար՝ գեղեցիկ գրվող ու ինչո՞ղ խոսքերի, կարգախոսների ու ծրագրերի շնորհիվ, կազմակերպվել ու կառուցել օրինակելի հանրություն: Շնորհալի փոքրամասնությունն է կազմակերպում միջակ մեծամասնությանը: Այս առումով մեր բախտը չի բերել: Շնորհալի փոքրամասնությունը, կազմակերպելով երկիրը կամ դրա մեծ մասը, հաջող արդյունքի է հասել Հայրենիքի ինքնապաշտպանության գործում: Սակայն հրադադարի մասին համաձայնագրի կնքումից հետո փոքրամասնությունը, որ աչքի էր ընկել պատերազմական տարիներին, փոխանակ արդյունավետ աշխատող պետական մեխանիզմ կառուցելու՝ աշխատել է հակառակ ուղղությամբ:

Ներկայումս, ավելի ստույգ՝ 14 տարի անց, ԼՂՀ-ում, Աստծո կամ «նորին մեծություն Դիպվածի» կամոք, եկել է մի մարդ, որն իր ու պետական ամենառաջնահերթ խնդիրն է սահմանել երկրում կարգուկանոնի հաստատումը:

Առանց օրենքի ու արդարության գերակայություն հաստատելու՝ ոչ մի այլ նախաձեռնություն չի կարող պետական կազմավորմանն այն աճն ու որակը հաղորդել, որոնք ԼՂՀ-ին անհրաժեշտ են «պարանի քաջքման» գործընթացում հաղթող դուրս գալու համար: Այլ ելք չկա, եթե ուզում ենք.

- առավելագույնս մեծ թվով համաշխարհային տերություններ մեր կողմը գրավել
- համայն հայության կտրվածքով 88 թվականի ոգին վերածնել ու ոգեկոչել
- հայության ոգին ու գիտակցությունը լցնել իրական, շոշափելի հպարտությամբ իր ազգային պատկանելության համար, որն էլ իր հերթին մի քանի անգամ կավելացնի մարդկանց անձնվիրությունը
- ամերիկացի կոնգրեսականներին փաստեր (խաղաթղթեր) տալ, ինչպէս նաեւ ամրակուռ հենակետ՝ մեր շահերը պաշտպանելու համար
- մենք՝ արցախցիներս, մեր գործնական ձեռքբերումներով օրինակ ծառայենք եւ ազդենք ՀՀ-ում հասարակական-քաղաքական եւ բարոյա-հոգեբանական վիճակի փոփոխման վրա

Եւ, վերջապէս, որպէսզի.

-մենք՝ արցախցիներս, դառնանք միասնական, հստակ գործող սոցիալական օրգանիզմ, թող որ համաշխարհային ու տարածշրջանային մասշտաբով ոչ գորեղ, բայց ամուր, ինչպէս չկոտրվող ընկույզ:

Սակայն մի մարդ, լինի նա անգամ նախագահը, չի կարող միայնակ լուծել նման ծանրագույն խնդիր: Պիտի միավորվել նրա շուրջ: Օգնել առաջին հերթին այն բանում, որպէսզի առավելագույնս կարճ ժամկետում ի մի բերվի այն շնորհալի փոքրամասնությունը, որը կարող է ձեռնամուխ լինել պետական մեքենայի կառավարման համակարգի կարգավորմանը: Այնպիսի փոքրամասնությանը, որն ունակ է հանրության ինքնակազմակերպման հիմքը դնել:

Այո, իհարկէ, բանավեճերի ու տարակարծության բացակայությունը լճացման կիսնագեցնի որոշակի փուլում: Բայց ոչ ոք էլ չի ասում նման արգելքի կամ համամտության մասին: Բանավեճեր պիտի անցկացվեն, բայց նախանշված կոնկրետ նպատակների, նախանշված կոնկրետ ուղու շրջանակներում:

Մեր բախտը կարգին բերել է առաջնորդի հարցում, որովհետեւ ողջ հետխորհրդային տարածքի հանրություններում տիրող բարքերը եւ ղեկավար էլիտայի ընտրման համակարգը թույլ չեն տալիս դրական կերպարներին, հատկապէս ազնվության ու արդարության հակված անձանց հասնել իշխանության գագաթնակետին... Ինչ խոսք, ես հեռու եմ մեր նախագահին իդեալականացնելու, այնպիսի առաջնորդին անհրաժեշտ այն բոլոր որակներն ու հատկանիշները վերագրելու գաղափարից, որին բաժին է ընկել ծանր առաքելություն՝ կարճագույն ժամկետներում իր իսկ ղեկավարած երկիրը դարձնել օրինակելի (իսկ այլ գին Արցախը չունի հակառակորդ-հարեւանի անսահման ախորժակից եւ ոտնձգություններից ազատվելու համար):

Ահա թե ինչու եմ շնորհալի փոքրամասնությանը կոչ անում միավորվել ի գորակցություն նրա ու Արցախի երկրամասի:

Իրական միասնությունն այսօր հայրենիքի փրկության գաղափարի շուրջ կարող է ձեւավորվել

Գեղամ ԲԱՂՂԱՍՍՐՅԱՆ

Ստեփանակերտ

Խոսելով հետպատերազմյան 15 տարիների մասին, ես միշտ մտաբերում եմ մի դրվագ պատերազմական տարիներից՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը ցուրտ ձմռանն իր աշխատասենյակում իր իսկ ձեռքերով վառում է փայտե վառարանը, ձեռքերն իրար շփում ու կուչ եկած գննում սեղանին դրված փաստաթղթերը:

Պատկերն այս խորհրդանշում է այն ծանր պայմանները, որոնցում աշխատում էր նորանկախ երկրի առաջին ղեկավարությունը: Այդ ծանրագույն պայմաններում Արթուրը եւ ընկերները կարողացան ահագին բան անել: Ու մտածում ես՝ ինչեր կաներ ու կանեին նորմալ պայմաններում աշխատելու, ղեկավարելու դեպքում:

1992-ի ձմեռային այդ օրը վերհիշելով՝ այն համեմատում եմ այսօրվա հետ: Այսօր ուղղակի «առողջարանային», ֆանտաստիկ պայմաններ են ստեղծարար աշխատանքով զբաղվելու համար:

Սույն համեմատությունը ես արեցի ըմբռնելու համար, թե ինչեր կարելի էր անել հետպատերազմյան ժամանակաշրջանում ու ինչեր կարելի է անել հիմա: Ցանկացած գործի գնահատական տրվում է ոչ միայն արվածի արդյունքներով, այլեւ հնարավորի հետ համեմատությամբ: Պատերազմից հետո անցած 15 տարիներին մեր երկրում քիչ բան չի արվել, բայց երբ այն համեմատում ես այն բանի հետ, թե ինչեր կարելի էր անել՝ նոր ես հասկանում արվածի քչությունը:

Մեր ժողովրդի պատմության մեջ քիչ են եղել խաղաղ ու դինջ աշխատանքի այսպիսի իդեալական հնարավորություններ: Նման դեպքերում, որպէս կանոն, վերածնունդ էր

լինում, ոսկեդար էր լինում, թեեւ այն երբեք դարի չափ չէր ձգվում:
Մեզ մոտ ոսկեդար չեղավ, ավելի ծիշտ՝ եղավ, բայց միայն իշխանությունների ու
իշխանամերձ շրջանակների համար: Ժողովուրդն անմասն մնաց այդ ամենից:
Առաջիններին բաժին ընկան անկախության բոլոր բարիքները, իսկ երկրորդին
(ժողովրդին)՝ անկախության խորհրդանիշերը՝ դրոշ, օրհներգ, զինանշան: Մենք
մտնեցինք այդ ժամանակահատվածը, եւ հիմա գնալով դժվարանում է, դինջ կյանքը
խաթարվում է համաշխարհային տնտեսական ճգնաժամով, դարաբաղյան
կարգավորման հանգուցալուծվող թակարդներով եւ այլ բարդություններով:
Դժվարանալուն զուգընթաց ուժեղանում է կորցրածի ընկալման դառնությունը:
Այս դառնությունը պիտի որ ստիպի թափ տալ մեզ ու արագացնել մեր քայլքը դեպի
ապագա: Բայց այսօր էլ տեսնում ես, որ այդ զգացողությունը չկա: Ղարաբաղյան
կարգավորման երկնքում սեւ ամպեր են կուտակվում, բայց Արցախում միշտ
«կապուտակ ու անխռով» երկինք է: Օրեցօր ավելանում են «Զիպ»-երը, որոնց ընթացքը
չեն կարող կասեցնել ոչ համաշխարհային ճգնաժամը, ոչ Բրայզայի սենսացիոն
հայտարարությունները, ոչ արտաքին վտանքը, ոչ էլ այլ բան: Փոխանակ ամբարները
լցնելու, մթերք ու զինապաշար կուտակելու՝ մենք փափուկ մեքենաներն ու փափուկ
կահույքն ենք ավելացնում: Ու հանցավոր, ինքնասպան անտարբերությամբ չենք
նկատում մեր գլխին կուտակվող սեւ ամպերը:

Պատերազմից հետո Արցախում միշտ էլ իշխանությունը բացարձակ ազատություն է
ունեցել գործելու, քանի որ ընդդիմության տեսքով «խանգարիչ» հանգամանք երբեք չի
ունեցել, ձեռքերն ազատ էին ամեն ինչ անելու, ուստի կարելի էր լավ շատ բաներ անել:
Առավել եւս, որ տնտեսական, ավելի ստույգ՝ փող հայթայթելու, բյուջե լցնելու պրոբլեմ
էլ չեն ունեցել՝ մայր Զայաստանն ու Սփյուռքը միշտ էլ տեղը-տեղին ու ժամանակին
փողը տվել են, այդ թվում՝ նաեւ «գրպանի փող»: Այսօր ընդհանրապես «իդեալական»
վիճակ է, մի ուղղակի հովվերգական միասնություն, որից առավել միասնություն միայն
ճտահանման կայանում՝ ինկուբատորում ու սպանդանոցում է լինում: Ամեն ինչ
իշխանության ձեռքին է, ուղղակի հսկայական ռեսուրսներ, ժողովրդի կողմից ուղղակի
հսկայական «ըմբռնումով մոտեցում», ուղղակի հարթ ու անարգելք ճանապարհ, բայց
չգիտես ինչու արագ առաջ շարժվելը դարձյալ պրոբլեմատիկ է: Եւ այս պայմաններում
դեռ շարունակվում են միասնության կոչերը: Սահմանը պահող զինվորը, տավարը
պահող հոտադը, հացթուխը, բանջարաբույժը, ֆուտբոլիստը, բանաստեղծը եւ այլք էլ՝
ինչ պիտի անեն, որ ապահովվի միասնությունը, եւ կամ հանուն ինչի՞՞ է այդ
միասնությունը: Գործն է ապահովում միասնությունը, նպատակը: Եթե դրանք հստակ
չեն, ի՞նչ անենք՝ բանուգործ թողնենք ու համազգային երգչախումբ ստեղծելով գանք ու
միասնություն՝ն շարականենք... Զգիտես ինչու ոչ ոք չի խոսում հավասարության մասին:
Անհավասար միասնություն կլինի՞...

Այս ֆանտաստիկ ռեսուրսների չնչին մասն ունենալու դեպքում անգամ կարելի է շատ
բան անել, ինչ մնաց հիմա... Մինչդեռ այս ռեսուրսները ձեռքներիս հաջողացրիկս
անեանալ, վերանալ որպես քաղաքական գործոն, որպես գործոն ընդհանրապես:
Ինչ որ է, այսօր շատ կարելու է գիտակցել մեր թույլ տված վրիպումները, որպեսզի
գոնե շանս ունենանք սխալներն ուղղելու եւ կորցրածը հետ բերելու, հուսալով, որ ուշ չէ:
Յենց այս նպատակին են միտված առաջարկներս:

Զայկական երկրորդ պետականությունն այսօր կանգնած է բավականին լուրջ ու
վտանգավոր մարտահրավերների առաջ: Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական
կարգավորման բանակցային գործընթացն այսօր մի այնպիսի փակուղային
հանգրվանում է, որից մեր նորանկախ պետության համար ընդունելի ու բարենպաստ
լուծում ակնկալելն ուղղակի անհնար է: Սույն կացությունն ստեղծվել է նաեւ մեր
մեղքով, քանի որ տարիներ շարունակ ոչ միայն հանդուրժել ենք բանակցային
գործընթացից մեր դուրս մնալը, այլեւ գրեթե ոչինչ չենք արել ԼՂԻ միջազգային
ճանաչման ուղղությամբ: Ընդհանրապես, լուրջ ու սկզբունքային սխալ էր նորանկախ
երկրի միջազգային ճանաչումը կախման մեջ դնելը բանակցային գործընթացից, հարկ
էր զուգահեռել այս երկու գործընթացները, քանի որ միջազգային ճանաչմանն ուղղված
մեր քայլերը կամրապնդեին մեր դիրքերը նաեւ բանակցային գործընթացում:
Ինչ վերաբերում է ազատագրված տարածքների ճակատագրին եւ դրանց վերաբերյալ,
այսպես կոչված, մադրիդյան սկզբունքներից բխող առաջարկություններին, ապա
Ադրբեջանի ներկայիս ռազմատենչ հռետորությունը, ինչպես նաեւ միջնորդների
հայտարարությունները վկայում են, որ պաշտոնական Բաքուն ոչ միայն պատրաստ չէ

փոխգիշումների, այլև ըստ ամենայնի պատրաստվում է ռազմական գործողությունների լայնածավալ վերսկսման: Քանի որ դարաբաղա-ադրբեջանական հակամարտության գոտում ռազմական հավասարակշռության պահպանումն ու հակամարտության կողմերի ռազմական ներուժի համադրելիությունն է հրադադարի պահպանման հիմնական երաշխիքը, ուստի ազատագրված հողերը, ամեն ինչից գատ, նման հավասարակշռության ու համադրելիության, ավելի ստույգ՝ անվտանգության համակարգի բաղկացուցիչ մասն են, որոնց կորուստը ոչ միայն կխախտի ռազմական բալանսը, այլև Ադրբեջանի համար ավելի գայթակղիչ կդարձնի հիմնախնդրի ուժային լուծումը եւ պատերազմի վերսկսումը՝ ծանր կացության մեջ դնելով մեզ: Եւ այդ ժամանակ մեզ չեն փրկի, հաստատ չեն փրկի խաղաղապահ ուժերը՝ նրանք խաղաղ կմնան: Մեր անվտանգության համակարգում մեր որոշիչ դերն է այն սահմանը, որից այն կողմ ոտք դնելու իրավունք չունենք: Անվտանգության երաշխիքները առաջին հերթին պիտի բավարար ընկալվեն հենց մեր ժողովրդի կողմից:

Օրվա հրամայականն է երկու հայկական պետականությունների փոխհարաբերությունները կանոնակարգելու նպատակով ԼՂՀ-ի ու ՀՀ-ի միջև կնքել միջպետական պայմանագիր ռազմավարական գործընկերության մասին եւ այդ փաստաթղթում արտացոլել երկուստեք անվտանգության հարցերում, ինչպես նաեւ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում կողմերի լիազորությունները, իրավունքներն ու պարտականությունները: Վաղուց արդեն ժամանակն է երկու հայկական պետականությունների հարաբերությունները վեր բարձրացնել միջանձնային, միջիշխանական հարաբերությունների մակարդակից ու հասցնել սկզբունքային, արժեհամակարգային ու հանրային մակարդակի: Ընդհանրապես, պիտի վերականգնել դարաբաղյան կողմի՝ որպես տարածաշրջանային ինքնուրույն ռազմաքաղաքական գործոնի ու տարածաշրջանային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մասի դերն ու առաքելությունը: Մեր նորանկախ պետության ստեղծման ու կայացման, ինչպես նաեւ առաջին ահավոր, պատերազմական փորձության ժամանակ մեր հաջողությունների ու հաղթանակի գլխավոր երաշխիքը եղել են ինքնուրույն որոշում կայացնելու մեր կամքն ու պատրաստակամությունը: Մեր որոշումներից այն ժամանակ շատ բան էր կախված, առանց մեր որոշման ու հստակ դիրքորոշման անհնար էր լինում որեւէ սցենարի մշակում, քանի որ մեր որոշումներն ունակ էին խափանելու եւ փլուզելու մեզ վերաբերող ու առանց մեր մասնակցության մշակած ցանկացած ծրագիր: Այսօր, ցավոք սրտի, ոչ միայն բացակայում են այդ կամքն ու պատրաստակամությունը, այլև վաղուց արդեն մեզնից չեն էլ ակնկալվում դրանք: Մեր անհաջողությունները սկսվեցին այն պահից, երբ որոշումներն արդեն Ստեփանակերտում չէին ընդունվում:

Այսքանով հանդերձ գտնում եմ, որ դեռեւս ոչինչ կորած չէ, եւ ամենեւին էլ ուշ չէ դեպքերի մեզ համար ոչ բարենպաստ ընթացքի առաջն առնելու համար: Վրիպումների ու սխալների վերլուծությունն ընդամենը պիտի հանգեցնի դրանցից դասեր քաղելուն եւ դրանք շտկելու վրա մտասեւեռվելուն: Վերոնշյալ հարցերի շուրջ մեր ազնիվ, սկզբունքային, հայրենակներ ու համարձակ դիրքորոշման դեպքում մենք կարող ենք ոչ միայն դիմակայել մեր առջեւ ծառայած մարտահրավերներին ու պաշտպանել մեր նվաճումները, այլև եւս մի ծանրակշիռ քայլ անել մեր նորանկախ պետականության ամրապնդման ուղղությամբ:

Հայ ժողովուրդն իր բազմադարյա պատմության մեջ շատ է մեծ փորձությունների առաջ կանգնել եւ, ցավոք սրտի, հազվադեպ է հաջողվել դրանք հաղթահարելու համար ժողովել համազգային ողջ ներուժը: Առավել հաճախ հենց այդ ծանր փորձությունների ժամանակ ենք եղել առավելս մասնատված, եւ ինքներս չենք հավատացել մեր իսկ ներուժին, հանրության տարբեր շերտերի, իշխանության ու ժողովրդի շահերը նույնական չէին, նրանք տարանջատված էին: Բայց հայոց ներուժն այնքան մեծ է եղել, որ անգամ տարանջատված ու ջլատված ուժերի մի մասի հուսահատ ժողովումը թույլ է տվել գոնե հիմնովին չոչնչանալ, գոյատևել՝ թեկուզեւ մեծ կորուստների գնով: Եւ երբ պատկերացնում ես, թե ինչ կարող էր անել մեր ամբողջ հավաքական ներուժը, ապա նոր ես լիովին պատկերացնում իրական կորուստները: Այսօր պատմական պատեհ առիթն է եւս մեկ անգամ ապացուցելու մեր հավաքական ներուժի հրաշագործ էությունը: «Մեկ անգամ եւս», քանի որ արցախյան շարժումը եւ դրանով խթանված համազգային զարթոնքն արդեն իսկ ապացուցել են դա, ուստի երկրորդ անգամս ավելի դյուրին է լինելու:

Արցախցիների իրական միասնությունը հենց հայրենիքի փրկության գաղափարի շուրջ կարող է ձևավորվել: Իսկ դրա համար այսօր անհրաժեշտ է տեր կանգնել արցախյան հանրության մեջ այսօր առկա հայրենասնվիրական նկրտումներին, աջակցել դրանց, ժողովել հանրության առողջ ու կարող ուժերը, թիկունք ու սատար կանգնել դրանց: Մեր նվիրական երազանքների իրականացման գործում «յուրայիններ» ու «ոչ յուրայիններ» չկան ու սկզբունքորեն չպիտի լինեն: Պարզապես հարկ է հենվել առողջ, ունակ, ազնիվ ու պատասխանատու, մտածող ու նախաձեռնող մարդկանց, այլ ոչ թե կամակատարների վրա:

Պատմական այս վճռորոշ պահին երիցս կարելուվում է սոցիալական արդարության լիակատար վերականգնումը, որպեսզի հայոց ազատագրված հողում ապրեն ազատ հայեր, ում իրավունքները պաշտպանված են, ում կյանքը բարեկեցիկ ու արժանապատիվ է: Ազատ, ապահով ու արժանապատիվ մարդիկ կարող են պաշտպանել իրենց հայրենիքը: Իսկ դրան կարելի է հասնել ժողովրդավարական բարեփոխումների համակարգային արմատավորմամբ ու քաղաքացիական հասարակության ստեղծմամբ:

Այսօր օրի պես անհրաժեշտ է ժողովել ու խնայողաբար օգտագործել մեր ունեցած նյութական, մարդկային եւ մյուս բոլոր պաշարները, խուսափել անիմաստ ծախսերից ու անթույլատրելի շռայլումներից, այլ ընդհակառակը՝ հարկ է բոլոր միջոցները ձեռնարկել անձեռնմխելի պահուստների ստեղծման ու ավելացման ուղղությամբ՝ մտապահելով հնարավոր վտանգներն ու փորձությունները: Մեր բոլոր ռեսուրսների մոբիլիզացումը կարող է կայուն երաշխիք լինել փորձություններին դիմակայելու մեր ունակության:

Արցախյան շարժումը հոգեւոր-աստվածաբանական տեսանկյունից

Աշոտ ՍԱՐԳՍՅԱՆ

Ստեփանակերտ

Աստվածաշնչից հայտնի է՝ «Ձայն բազմաց, ձայն Աստծո» արտահայտությունը: Շարժման առաջին իսկ օրվանից հազարավոր մարդիկ հրապարակում հավաքված պահանջում էին Արցախի վերամիավորումը Մայր Հայաստանին, այսինքն՝ խաթարված արդարության, ճշմարտության վերականգնում: Անկախ նրանից, որ այդ ժամանակ ժողովրդի մեծամասնությունը հավատացյալներ չէին, միեւնույն է՝ նրանք կամա թե ակամա առնչվել են Բարձրյալի հետ այն պարզ պատճառով, որ կատարյալ արդարը եւ ճշմարիտը Աստված է: Եւ պատահական չէ, որ Շարժման սկզբնական տարիներին ժողովրդի մի ստվար մասը դարձի է եկել առ Աստված եւ դարձել Հայ Առաքելական Եկեղեցու զավակներ: Այդ տարիներին Մայր Հայաստանում եւ Արցախում աննախադեպ ազգային եւ հոգեւոր վերագարթոնք է եղել, որն էլ հանդիսացել է գրավականը մեր բոլոր հաղթանակների:

1988թ. մարտի 24-ին ԽՍՀՄ դեկավարությունը որոշում է ընդունել ԼՂԻՄ-ին տրամադրել 400-450 միլիոն ռուբլի, որպեսզի այն նպատակաուղղվի մարզում կուտակված սոցիալ-տնտեսական եւ մշակութային հարցերը լուծելուն: Բնականաբար, արցախահայերը հրաժարվել են այդ գումարից:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման ամենաեռուն շրջանում Ադրբեջանի իշխանությունները սովի են ենթարկել արցախահայությանը: Բայց եղել է մի պահ, որ տոննաներով սննդամթերք եւ տարատեսակ խմիչքներ են ուղարկել: Ստեփանակերտի երկաթուղային կայարանում վագոնները բեռնավորված օրերով սպասել են, բայց ոչ ոք չէր մոտեցել բեռնաթափելու: Վերը նշվածները համեմատելի են Հիսուսի անապատում փորձության հետ:

Ըստ Ղուկասի ավետարանի. «Երբ նա քառասուն օր չկերավ ու չխմեց, եւ երբ դրանք

լրացան, քաղց զգաց: Եվ սատանան նրան ասաց. «Եթե Աստծու Որդի ես, այդ քարին ասա՛, որ հաց լինի»: Չիսուսը նրան պատասխանեց ու ասաց. «Գրված է. միայն հացով չէ, որ կապրի մարդ, այլ՝ Աստծո ամեն խոսքով»:

Առաջին լուրջ փորձությունը հաղթահարված էր: Դրան հետեւեց հաջորդը՝ ԽՍՀՄ ղեկավարությունը մի շարք հեղինակավոր հայորդիների հրավիրեց Մոսկվա եւ նրանց իշխանություն, բարձր պաշտոններ խոստացավ, Արցախում մտցվեց ԽՍՀՄ-ում նախադեպը չունեցող իշխանություն՝ Չատուկ կառավարում, միայն թե վերջ տրվի ազգային-ազատագրական շարժմանը: Արցախահայությունն այդ փորձությանն էլ դիմացավ, որի աստվածաշնչյան զուգահեռը հետեւյալն է. «Եւ սատանան բարձրացնելով նրան մի բարձր լեռ, մի վայրկյանում նրան ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորությունները եւ ասաց. «Քեզ կտամ այս ամբողջ իշխանությունը եւ սրանց փառքը... Արդ եթե դու իմ առաջ ընկած երկրպագես, բոլորը քոնը կլինեն»: Չիսուսը պատասխանեց նրան եւ ասաց. «Գրված է՝ քո Տեր Աստծուն պիտի երկրպագես եւ նրան պիտի պաշտես»:

Երրորդ փորձությունը, որին դիմացավ արցախահայությունը՝ դա պատերազմն էր: Յոթ միլիոն բնակչություն ունեցող Ադրբեջանը միջազգային հանրության եւ աշխարհի գերտերությունների թողտվության պայմաններում հարձակվեց 150 հազար խաղաղ բնակիչ ունեցող Արցախի վրա: Մինչեւ պատերազմը սկսվելը «հայրենի իշխանությունները» զինաթափել էին արցախահայությանը, անգամ որսորդական հրացաններն էին նախօրոք առգրավել: Այս անգամ փորձության էր դրված Հայրենիքի պաշտպանությունը: Այդ ժամանակ Արցախում տարբեր լուրեր էին պտտվում, անգամ «հավաստի աղբյուրները» հաստատում էին, որ պատրաստ են արցախահայությանը քաղաքական ապաստան տրամադրել այլ երկրներում, մասնավորապես՝ Ավստրալիայում: Արցախահայերը կարող էին հանգիստ թողնել իրենց բնօրրանը եւ տեղափոխվել Հայաստանի Հանրապետություն, բայց նրանց մեջ արթնացել էր Հայկ Նահապետի, Արամ Աշխարհակալի, Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնյանի, Դավիթ Բեկի, Ավան հարյուրապետի, Դանիել Բեկ եւ Պողոս Բեկ Փիրումյանների, Անդրանիկ զորավարի, Գարեգին Նժդեհի արյունը եւ Հայոց սրբերի ոգիները: Եւ հայը պաշտպանեց իր հայրենիքը... Իսկ Աստվածաշունչն այդ ուղղությամբ քանի-քանի դար հուշում է. «Եւ տարավ նրան Երուսաղեմ, կանգնեցրեց տաճարի աշտարակի վրա ու ասաց նրան. «Եթե Աստծու Որդի ես, քեզ այստեղից ցած գցիր, որովհետեւ գրված է. «Իր հրեշտակներին պատվիրված է քո մասին, որ քեզ պահեն. եւ իրենց ձեռքերի վրա կբռնեն քեզ, որ քո ոտքը երբեք քարին չխփես»: Չիսուսը պատասխանեց նրան եւ ասաց. «Ասված է՝ քո Տեր Աստծուն պիտի չփորձես»: Այդ՝ Աստծուն չեն փորձում, ինչպես նաեւ փորձելու ենթակա չեն մեր ազգի ինքնության չորս հիմնասյուները՝ Հայրենիքը, Հայոց լեզուն, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Հայ Դատը (համայն հայության իրավունքները):

Չոգեւոր տեսանկյունից գնահատելով ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության եւ անկախության ճանաչմանը ձգտող Արցախի Հանրապետության ներկա կացությունը՝ դժվար չէ նկատել, որ երկու պետությունների միջեւ ծագող հակասությունների հիմնական պատճառը եղել է եւ մնալու է ազգի բաժանումը երկու միավորների: Ընդդիմախոսները կարող են նշել, թե դա զուտ քաղաքականությունից դրդված իրավիճակ է, ինչպես ընդունված է նշել՝ օտարների համար ենք մենք անկախ, իրականում միասնական պետություն ենք: Տա Աստված՝ այդպես լինել: Աստվածաշնչում մեր պարագայի համար է գրված. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է, եւ ինքն իր մեջ բաժանված ամեն տուն՝ կործանվում»: Իհարկե, շատ խիստ է գրված, բայց ճշմարտությունը պարտավոր ենք ընդունել: Ուստի, կարծում եմ, ժամանակն է, որ նորովի՝ ազգային-հոգեւոր լույսի ներքո գնահատենք երկու հայկական պետությունների ներկան եւ վճռականություն ցուցաբերենք արագացնելու Արցախի վերամիավորման գործընթացը Մայր Հայաստանին:

Միացման առաջին քայլը կարող է լինել ՀՀ եւ ԼՂՀ «Քաղաքացիության մասին» օրենքներում երկքաղաքացիության մասին դրույթների հստակեցումը եւ չափահաս արցախահայերին ՀՀ քաղաքացիություն շնորհելը, իսկ հաջորդ քայլը՝ վերամիավորման վերաբերյալ հանրաքվեի անցկացումը Արցախի Հանրապետությունում:

Միանգամայն անընդունելի է նոր պատերազմի մասին միտքն անգամ

(Բացառիկ հարցազրույց 1992-96թթ. Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավար Վլադիմիր ԿԱԶԻՄԻՐՈՎԻ հետ)

-Պարոն Կազիմիրով, Ձեր դիտարկումներով ի՞նչ էր կատարվում այն ժամանակ՝ 1994 թվականի մայիսի 12-ի հրադադարի նախօրեին:

-Հակամարտության կողմերը՝ Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը եւ Հայաստանը, ժամանակակից գեներալի օգտագործմամբ եւ մի շարք շրջանների գրավումով երկուսուկես տարվա պատերազմից հետո ընկել էին հոգնածության մեջ: Երեւակվել էր ուժերի մոտավոր հավասարություն, բայց դեռ համառ մարտեր էին ընթանում Տեր-Տեր քաղաքի շուրջ: Հայերը փորձում էին ճեղքելով դուրս գալ Քուռ գետի ափը եւ կտրել Ադրբեջանի հյուսիս-արեւմտյան ելուստը (ինչպես 1993 թվականի հոկտեմբերին Իրանի սահմանային Արաքս գետը դուրս գալով՝ կտրեցին Ադրբեջանի հարավ-արեւմուտքը): Ադրբեջանի եւ նրա ղեկավարության դրույթունն օրհասական էր դառնում: Ձգտելով ուժային առավելության հասնել՝ Բաքուն երկար ժամանակ խուսափում էր ռազմական գործողությունները դադարեցնելուց, բայց հետո ստիպված եղավ ինքը հետամուտ լինել դրան: Հեյդար Ալիևն ու Ռասուլ Գուլիևը ասում էին ինձ. «Մի՞թե Ռուսաստանը չի կարողանում կանգնեցնել հայերին»:

Իր միջնորդական առաքելությամբ Ռուսաստանը հաստատակամորեն ձգտում էր կանգնեցնել զանգվածային արյունահեղությունը, մի քանի անգամ հասել էր ինչ-որ ժամկետով կրակի դադարեցման, այդ գործում ներգրավել էր ԱՊՀ-ին, աշխատանք էր տանում հակամարտության կողմերի խորհրդարանականների, կրոնական առաջնորդների, լրագրողների հետ: Ռուսաստանյան դիվանագիտությունը մարտերի դադարեցմանն էր իր աշխատանքը միտում նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբում, բայց այնտեղ, ցավոք սրտի, դա այնքան էլ առաջնահերթային չէին համարում:

Մեր իսկ նախաձեռնությամբ ապրիլի 15-ին ԱՊՀ ղեկավարների խորհրդի ջանքերը եւս միտվեցին Ղարաբաղում կրակի դադարեցումը որպես առաջնահերթություն եւ կարգավորման հրամայական ընդունելուն: Մայիսի 5-ին Բիշքեքում խորհրդարանների ղեկավարները, պաշտպանելով այս հիմնադրույթը, կողմերին կոչ արեցին դադարեցնել կրակը մայիսի 9-ի Հաղթանակի օրվան առնչված: Բայց Ադրբեջանը բիշքեքյան արձանագրությունը ստորագրեց մայիսի 8-ին՝ Բաքու կատարած իմ այցի ընթացքում, իսկ մայիսի 9-ին հաջողվեց այնտեղ դնել համընդհանուր հրադադարի մասին համաձայնագրի տակ առաջին ստորագրությունը: Բոլոր կողմերի հետ համաձայնեցնելով՝ այն ձեւակերպվել է որպես անժամկետ: Երեւանում եւ Ստեփանակերտում ստորագրվելուց հետո՝ համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994 թվականի մայիսի 12-ից: Փաստաթուղթը ստորագրողների թվում էր պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը (ներկայումս՝ ՀՀ նախագահը):

-Ըստ Ձեզ, որո՞նք են հրադադարի հետեւանքները:

-Երկար ժամանակով վերջ է դրվել անթիվ զոհերին ու ավերածություններին, տարածքների գրավմանը, բռնի տեղահանվածներին, կենսագործունեության խափանմանը, տարածաշրջանի երկրների զարգացման հետընթացին: Անցած 15 տարիները դժվար թե կարելի է անվանել լիովին խաղաղ երկու ժողովուրդների համար, քանի որ հակամարտության չկարգավորված լինելը ծանր բեռ էր մնում նրանց համար, բայց այդ ընթացքում կատարվածից շատ բան մտքով անգամ չէր անցնի առանց ներկայիս հրադադարի՝ լինի դա մի շարք մայրուղիների կառուցումը, տնտեսությունների վերելքը, հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը, կամ էլ հայ եւ ադրբեջանցի շախմատիստների թեմաթային հաջողությունները: Կյանքը Լեռնային Ղարաբաղում, ի հեճուկս նրա չճանաչվածության, միանգամայն տանելի է: Չնայած իր 7 շրջանների գրավմանը՝ Ադրբեջանը ցույց է տվել համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արագ աճ: Անհրաժեշտ է ամրապնդել հրադադարի ռեժիմը, գնալ դեպի հակամարտության խաղաղ լուծում: Միանգամայն անընդունելի է նոր պատերազմի մասին միտքն անգամ:

-Իսկ ինչպե՞ս են կողմերն իրենք հիմա գնահատում 1994 թվականի հրադադարը:

-Յայտերին հիմնականում բավարարում է ներկայիս ստատուս-քվոն, նրանք ընդունում են հրադարձի պահպանման կարելությունը: Բացվում տեւական ժամանակ փառաբանում էին Յեյդար Ալիեւին հրադարձի համար, բայց հետո սկսեցին սպառնալ նորից ուժի կիրառմամբ: Առկա իրավիճակից անբավարարվածությունը, հատկապես՝ 7 շրջանների տեւական գրավմամբ պայմանավորված կորստի զգացողությունը, նսեմացնում է հրադարձի ադրբեջանական գնահատականները:

Ես չէի սպասում, որ հրադարձը Ղարաբաղում այսքան երկար կտեւի

***Ամերիկացի նախկին միջնորդ Ջեք ՄԱՐԵՍԿԱՆ «Անալիտիկոն»-ի մշտական
հեղինակ եւ "The Armenian Reporter" թերթի թղթակից Էմիլ ՍԱՆԱՍՅԱՆԻՆ
պատմել է բանակցային գործընթացի սկզբի մասին***

*Դեսպան Ջոն (Ջեք) Մարտեւսկան 1992-ին սկսված դարաբաղյան կարգավորման
բանակցային գործընթացում ԱՄՆ առաջին ներկայացուցիչն էր: 1994-ին այս պաշտոնը
թողնելուց հետո Մարտեւսկան գլխավորում էր «Ազատություն» ռադիոկայանի
հետազոտական ինստիտուտը Պրահայում, իսկ այնուհետեւ «Յունոկալ» նավթային
ընկերության փոխնախագահն էր: Վերջին տարիներին նա ռեկտոր է աշխատում
Կոստա Ռիկայում ՄԱԿ-ի ստեղծած «Յանուն խաղաղության» համալսարանում:*

**-Երբ հակամարտության կողմերը 1994-ին պայմանավորվում էին հրադարձի մասին՝
ակնկալում էինք, որ հրադարձը 15 տարի կտեւի:**

-Ոչ, ես չէի սպասում, քանի որ մինչ այդ եւս պայմանավորվածություններ կային կրակի
դադարեցման մասին, որոնք այնուհետեւ խախտվում էին: Թե ինչու այս մեկը հաջողվեց՝
դժվար է ասել, քանի որ ես չեմ հետեւում ներկայիս իրավիճակին:

Ինչպես ի հայտ եկավ Մինսկի խումբը

**-1992-ի սկզբին ՄԱԿ-ն առաջինը դարաբաղյան հակամարտության գոտի ուղարկեց իր
պատվիրակին՝ ամերիկյան նախկին պետքարտուղար Սայրուս Վենսին: Ինչպե՞ս
պատահեց, որ արդեն մի քանի ամիս անց դարաբաղյան կարգավորման մանդատն
անցավ ԵԱՀԿ-ին (ԵԱՀԿ-ին):**

-ԽՍՀՄ փլուզումից հետո ես հասա նրան, որ ԵԱՀԿ-ն իր մեջ ներառի նաեւ նորանկախ
պետությունները, քանի որ լինելով ԽՍՀՄ մասեր՝ դրանք արդեն իսկ մտնում էին այս նոր
կառույցի մեջ: Որոշ դիմադրությունից հետո իմ առաջարկն ընդունվեց, ավելի կոնկրետ՝
1992թ. հունվարի 30-31-ին Պրահայում կայացած ԵԱՀԿ հանդիպման ժամանակ:
Այդ նույն հանդիպման ժամանակ նշվել է, որ Կովկասում կա մի հակամարտություն,
որում ներգրավված են ԵԱՀԿ նոր անդամները, եւ առաջարկ եղավ, որպեսզի ԵԱՀԿ-ն
հատուկ համաժողով անցկացնի այս առիթով ու փորձի խաղաղ լուծում գտնել:
Բելառուսի կառավարությունը համաձայնվեց այդ համաժողովն անցկացնել իր մոտ եւ
այդ ժամանակից ի վեր այդ դեռեւս չկայացած միջոցառումն սկսեց անվանվել «Մինսկի
համաժողով»:

Մենք նաեւ համաձայնվեցինք, որպեսզի ԵԱՀԿ անդամներ հանդիսացող շահագրգիռ
երկրների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունն այցելի
հակամարտության գոտի: Ինձ տրամադրված՝ ԱՄՆ ռազմաօդային ուժերի ինքնաթիռով
մենք թռանք Բաքու եւ Երեւան, իսկ ապա, ռուսաստանյան բանակի տրամադրած
ուղղաթիռով, հասանք Ստեփանակերտ՝ Լեռնային Ղարաբաղ:

-Իսկ ինչպե՞ս ի հայտ եկավ Մինսկի խումբը: Ինչպե՞ս որոշվեցին նրա անդամները: Եւ ինչու՞ խումբ ստեղծվեց, այլ ոչ թե, ասենք, հենց իր՝ ԵԱՀԽ-ի պատվիրակ նշանակվեց: Խումբն ինչի՞ հասավ 1992-94-ին:

-Չնայած այն բանին, որ մենք պայմանավորվել էինք խաղաղ համաժողովի եւ ԵԱՀԽ անդամ երկրների ներկայացուցիչների տարածաշրջանային այցի մասին, հակամարտությունում կազմակերպության մեխանիզմի եւ դերի մասին այլ պայմանավորվածություններ չեն եղել:

Իտալիան իր վրա վերցրեց Մինսկի համաժողովում նախագահելու նախաձեռնությունը եւ նախագահի պաշտոնի համար առաջարկեց քաղաքական ֆիզուրի՝ Մարիո Ռաֆաելլին: ԱՄՆ-ի անունից եւ հասա այն բանին, որ իտալացի նախագահն անհապաղ սկսի բանակցային գործընթաց, որի միջոցով կարելի կլիներ լուծել հակամարտության հիմնական հարցերը եւ նախապատրաստել Մինսկի համաժողովը: Այս ճնշման տակ իտալացիները կազմակերպեցին հակամարտության կողմերի միջեւ առաջին քննարկումները: Այդ հանդիպումը (1992-ի հունիսին) անցկացվեց Յոնից ոչ հեռու գտնվող Վիլլա Մադամա դաստակերտում: Հանդիպմանը մասնակցել են Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները: Այն ժամանակ տեւական վեճեր էին ընթանում քննարկումների ձեւաչափի շուրջ, քանի որ Լեռնային Ղարաբաղը ճանաչված չէր որպես ինքնիշխան պետություն:

Ի լրումն Իտալիայի՝ մի քանի երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Ֆրանսիան, Թուրքիան եւ Շվեդիան, համաձայնվեցին մասնակցել հանդիպմանը որպես դիտորդներ եւ աջակից երկրներ: Այս եւ այլ մասնակից երկրներն արդյունքում ձեւավորեցին «Մինսկի խումբը»:

Այն ժամանակ ցանկություն առկա չէր Ղարաբաղի գծով հատուկ պատվիրակ նշանակել, քանի որ հակամարտությունը բավականին պրոբլեմատիկ էր, գտնվում էր բավականին հեռու եւ կարող էր միանգամայն անհուսալի լինել (լուծում գտնելու առումով): Ահա թե ինչու որոշվել է բաշխել հակամարտության լուծման համար պատասխանատվությունը մի քանի շահագրգիռ երկրների միջեւ:

Իսկ Խմբի հիմնական ձեռքբերումն այն ժամանակ եղել է հրադադարի համար պայմանների ստեղծումը: Իհարկե, հրադադարը վերջնական լուծում չէ եւ կարող է ընդամենը հակամարտությունը «սառեցնել» որոշ ժամանակ, բայց, համեմայն դեպս, հաջողվեց դադարեցնել արյունահեղությունը:

-Դուք Ղարաբաղի գծով ԱՄՆ-ի առաջին պատվիրակն էիք: Ի՞նչ ռեսուրսների հիման վրա եք Դուք կառուցել Ձեր աշխատանքը: Ինչպե՞ս էիք տեղեկություններ ստանում հակամարտության գոտուց:

-Ռեսուրսները սահմանափակ էին, բայց, կարծում եմ, մենք տիրապետում էինք բավարար տեղեկատվության դեպքերի զարգացման մասին: Ես կարող էի օգտագործել ԱՄՆ ռազմաստորախի ուժերի ինքնաթիռը եւ ռուսաստանյան բանակի ուղղաթիռի կամ ցամաքային փոխադրամիջոցի օգնությամբ լինել նաեւ Ղարաբաղում:

Ես հանդիպումներ էի անցկացնում նախագահների, արտգործնախարարների եւ ուժայինների հետ Բաքվում, Երեւանում եւ Ստեփանակերտում: Ես նաեւ եղել եմ ռազմաճակատի գծում՝ ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմից: Ինձ հաջողվում էր այցելել գործնականում ցանկացած հատված:

Մենք տարածաշրջանում նաեւ սերտ խորհրդատվություններ էինք անցկացնում Ռուսաստանի ԱԳՆ-ի ու Պաշտպանության նախարարության հետ: Դե, բավականին էլ արագ ԱՄՆ դեսպանատներ ստեղծվեցին Բաքվում եւ Երեւանում:

-ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Ղարաբաղի հարցով իր առաջին բանաձեւն ընդունեց հայկական զորքերի կողմից Քելբաջարի առումից հետո: Ու՞մ նախաձեռնությամբ ընդունվեց այդ բանաձեւը: Եւ ինչու՞ ՄԱԿ-ի Ան Բանաձեւերն ընդունվեցին միայն 1993-ին, այլ ոչ թե 1992-ին, երբ տեղի ունեցան առաջին լուրջ ռազմական գործողությունները, կամ էլ 1994-ին, երբ հակամարտության սկզբից ի վեր զոհերն ամենաշատն էին երկու կողմից էլ:

-Ես չեմ հետեւել ՄԱԿ-ում զարգացող դեպքերին: Բայց ինձ թվում է, որ այն ժամանակ լուրջ հույս կար, որ ԵԱՀԽ-ի (ԵԱՀԿ-ի) միջոցով կհաջողվի առաջընթաց ապահովել, ուստի միջազգային հանրության շահագրգիռ անդամները չէին ձգտում «իրենց կողմը

քաշել» այս հարցը եւ քննարկել այլ ձեւաչափում:

Մրցակցող շահեր

-Ինչպե՞ս էին դասավորվում Ձեր հարաբերությունները Ղարաբաղի գծով Ռուսաստանի հատուկ պատվիրակ Վլադիմիր Կազիմիրովի հետ: Պարոն Կազիմիրովը մի անգամ չէ, որ ասել է, թե բանակցային գործընթացում ԱՄՆ-ն հաճախ փորձել է «առաջ անցնել» Ռուսաստանից:

-Ինձ թվում է, որ Կազիմիրովի հետ մեր հարաբերությունները բարեկամական էին, թեեւ կային նաեւ երկուստեք կասկածներ: ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի հետ գործ ունենալը հեշտ չէր մի շարք պատճառներով: Եղել են ժամանակներ, երբ ռուսաստանյան կառավարության գանազան մասերի գործունեությունը լիովին համակարգված չէր:

-Պարոն Կազիմիրովը հրապարակավ հայտարարել է, որ 1993-ի սեպտեմբերին Մոսկվայում ամերիկյան պաշտոնատար անձինք իրեն են ներկայացրել այսպես կոչված Քոնո-թեյպերՄՆ (ԱՄՆ-ի ոչ հրապարակային, բայց պաշտոնական) դիրքորոշումը, ըստ որի առկա էր ԱՄՆ ընդդիմությունը Ղարաբաղի գծով խաղաղ պայմանագրի հանդեպ այն դեպքում, եթե այն ենթադրի ռուսաստանյան խաղաղապահների տեղաբաշխում հակամարտության գոտում: Ինչպե՞ս դա կմեկնաբանեիք:

-Զգիտեմ, թե ինչ Քոնո-թեյպերՄՆ Դուք նկատի ունեք: Բայց ես երբեք էլ չեմ պաշտպանել ռուսաստանյան խաղաղապահների օգտագործման գաղափարը, քանի որ համարում էի, որ Ռուսաստանն իր նպատակներն ունի հակամարտության գոտում:

-Որքանո՞վ էր Կովկասի նկատմամբ ԱՄՆ հետաքրքրությունը բացատրվում կասպիական էներգակիրներով: Դուք աշխատել եք ինչպես ԱՄՆ կառավարությունում, այնպես էլ նավթային ընկերություններից մեկում. ինչպե՞ս էին, ըստ Ձեզ, հավասարակշռվում պետական եւ մասնավոր շահերը:

-Մինսկի խմբում ԱՄՆ-ի մասնակցության գլխավոր մոտիվը եղել է բուն հակամարտության նկատմամբ մտահոգությունը, եւ, ի դեպ, հայազգի ամերիկացիները կիսում էին այդ մտահոգությունը:

Փոքր ինչ ավելի ուշ, երբ տարածաշրջանում հայտնվեցին ամերիկյան էներգետիկ ընկերությունները, էներգակիրների՝ մեզ համար մատչելիությունը նույնպես կարեւորվեց:

Բայց այս ամենով հանդերձ միշտ էլ բավականին կոշտ սահմանափակումներ կային այն ամենի հանդեպ, ինչ ԱՄՆ-ն կարող էր, կամ էլ նույնիսկ ուզում էր նախաձեռնել կովկասյան տարածաշրջանում:

Գնա՞լ, թե՞ չգնալ Զոմ

կամ՝ Բոլոր ճանապարհները չէ, որ Զոմ էին տանում

1992 թվականի հունիսի առաջին կեսին ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատվիրակությունն այցելեց Երեւան ու Մոսկվա եւ մի շարք լուրջ հանդիպումներ ունեցավ այնտեղ: Գե նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի գլխավորած պատվիրակության կազմում էին Գե նախագահության անդամ Յամլետ Գրիգորյանը եւ տողերիս հեղինակը՝ որպես Գե լրատվական ծառայության ղեկավար: Ներկայացնելով այդ հանդիպումներից մեկը, հուսով եմք, որ այն ըստ ամենայնի կօգնի ընթերցողներին պատկերացնելու այն ժամանակվա մթնոլորտը նոր սկսված բանակցային գործընթացում, եւ ինչպես էին ուզում մեզ ներգրավել դրանում: Եւ այսպես՝ Մոսկվա, ՌԴ-ում Խտալիայի դեսպանատուն, հանդիպում ԵԱՀԿ Մինսկի խորհրդածողովի նախագահ Մարիո Ռաֆաելլիի եւ նրա տեղակալ Մարիո Սիկայի հետ: Զունիսի 12, 1992 թվական:

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Մարին ՌԱՖԱԵԼԼԻ.-Մենք պիտի հանդիպեինք Ստեփանակերտում: ԵԱՀԽ վերջին նիստում որոշվեց շարունակել երկխոսությունը: Որպեսզի հաջողություն լինի՝ անհրաժեշտ են ձեր ներկայությունն ու ձեր կարծիքը: Մեր դիրքորոշումը հայտնի է, ուստի կուզեիք լսել ձեր կարծիքն այս ամենի մասին:

Գեորգի ՊԵՏՐՈՍՅԱՆ.- ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունում քանիցս քննարկել ենք հարցը: Լուրջ կասկածներ ունենք, ուստի որոշեցինք լինել Երեւանում եւ Մոսկվայում, ծանոթանալ գործընթացի բոլոր մանրամասներին: Նկատի ունենալով, որ պարոն Ռաֆաելին Ստեփանակերտում չի եղել, մենք ցանկացանք հանդիպել նաեւ նրա հետ, որպեսզի պարզ լինեն մեր հետագա քայլերը: Առաջին բանը, որ մեր տարակուսանքի տեղիք է տալիս, հրավերի տոնն է: Մեզ մի քանի տեքստ են ուղարկել, որոնցում մեզ դիտարկում են որպես դիտորդ, համայնքի ներկայացուցիչ կամ էլ որպես ընտրված ներկայացուցիչներ: Ահա այստեղից էլ սկսվում է միմյանց չհասկանալը, թյուրըմբռնումը: ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի դեսպանատներից ստացած հեռագրերը փոքր ինչ տարբերվում են իրարից: Կուզեիք հստակ ասել մեր դիրքորոշման մասին, որը բխում է ԼՂՀ-ի հռչակագրից: Մենք պետություն ենք կառուցում, խորհրդարան ենք ստեղծել, մենք այսօր պատերազմի մեջ ենք Ադրբեջանի հետ, որն ագրեսոր է, մենք չենք կարող ներկայանալ որպես համայնք: Ուզում եմ տեղեկացնել ձեզ, որ ադրբեջանական փոքրամասնության համար տեղ էինք հատկացրել մեր խորհրդարանում: Երկրորդ հանգամանքը՝ ադրբեջանցիները չմասնակցեցին ընտրություններին, եւ, ելնելով դրանից, ադրբեջանական բնակավայրերը վերածվեցին ռազմական հենակետերի, եւ մենք ստիպված էինք գեների դիմել՝ պաշտպանելու համար մեր հողն ու պատիվը: Ահա մեր դիրքորոշման եռությունը: Եթե նայելու լինենք դեպքերի զարգացման տրամանաբանությանն ու ժամանակագրությանը, ապա մենք սովետական օրենքների շրջանակներում քայլ առ քայլ գնացել ենք դեպի անկախություն:

Մ.Ռ.- Միգուցե մեր գրույցը շարունակենք ճաշի սեղանի շուրջ...

Գ.Պ.- Շնորհակալություն, մենք ճաշել ենք: Կարող ենք սպասել մինչեւ պարոն Ռաֆաելին ճաշի (ճաշից հրաժարումը գրույցի ամենայն լրջությունը պահպանելու նպատակ ունեւր. աչքիս տակով նկատել էի, որ մինչ պարոն Ռաֆաելիի հրավերը՝ դահլիճի մուտքի մոտ «շարքով» կանգնեցին մի քանի տիկնայք, հավանաբար՝ պարոնայք Ռաֆաելիի, Սիկայի եւ դեսպանատան առաջին դեմքերի ամուսինները, որոնք Գ.Պետրոսյանի մերժումից հետո շրջվեցին ու նույն շարքով էլ հեռացան.- Գ.Բ.)

Մ.Ռ.- Օ, ոչ... Լավ, շարունակենք: Այն, ինչ Դուք ասացիք, մեզ արդեն ասել էր պարոն Շահնազարյանը Երեւանում: Նա նույնիսկ ավելի հեռուն գնաց, ասելով, որ դուք կարող եք մասնակցել միայնումիայն պետության մակարդակով: Ի պատասխան ես ձեզ կասեմ այն, ինչ ասել եմ այնտեղ, եւ իմ դիրքորոշումը համահունչ է նաեւ մյուս պետությունների դիրքորոշմանը: Կուզեի ճշտել հետեւյալը. ԵԱՀԽ ուղերձի հիման վրա ինձ նշանակել են զբաղվելու այս հիմնախնդրով: Ես կաշխատեմ ընդլայնել շրջանակները, բայց դուրս գալ այդ շրջանակներից ես չեմ կարող: Կարծում եմ՝ դուք այդ մասին տեղյակ եք, բայց տեղին համարեցի մեկ անգամ եւս հիշեցնել դրա մասին: Մի բան էլ՝ իմ լիազորությունները համաձայնեցվել են բոլոր արտգործնախարարների հետ, այդ թվում՝ Յայաստանի: Տեքստն այսպիսին է. Ղարաբաղի հարցով խորհրդաժողովը կազմված է 11 երկրների ներկայացուցիչներից, որոնց հետ պայմանավորվածությամբ որոշվել է հրավիրել Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչներին: Տեքստը նույնպես համաձայնեցված է: Այս առիթով կարող եմ լինել թյուրիմացություններ, եթե պարզ չխոսվի այս մասին: Մենք չենք կարող ձեզ հրավիրել ուրիշ պետությունների նման: Ձեզ մոտ ընտրություններ են եղել, կայացել է հանրաքվե, մենք տեղյակ ենք, որ Ադրբեջանը ձգտել է ազդել այդ ամենի վրա, եւ որ ադրբեջանցիները չեն մասնակցել այդ ընտրություններին: Այն փաստը, որ ես հիմա հանդիպում եմ ընտրված ներկայացուցիչների հետ, արդեն իսկ նշանակում է, որ ես ճանաչում եմ նրանց, բայց սա ինքնաբերաբար չի նշանակում, որ նման բան անելով՝ ես ձեզ միջազգային կարգավիճակ եմ տալիս: Նոր պետություններին պիտի ճանաչեն մյուս պետությունները, այլ ոչ թե խորհրդաժողովի նախագահը: Ձեր՝ մասնակիցներիդ, կարգավիճակը բխում է ԼՂ ներկայիս կարգավիճակից, որ պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դա կարող է արդյունք լինել, բայց ոչ մեկնակետ: Ես ձգտել եմ գործել իմ լիազորությունների շրջանակում: Եւ ՀՀ նախագահի, եւ արտգործնախարարի, եւ Լեւոն-Մելիք Շահնազարյանի, եւ մյուս կողմի՝ Ադրբեջանի կառավարության ու նախկին ընդդիմության՝ ԱԺԾ-ի հետ իմ գրույցների հիման վրա ես ձգտել եմ առաջարկություններ մշակել, որոնց բովանդակությունը կուզեիք քննարկել: Պարոն Բալյանը ճիշտ չի արել՝ հրապարակելով այդ առաջարկությունները: Համոզված եմ, որ հիմնախնդիրը պիտի լուծել ոչ թե ձեւական, ֆորմալ, այլ բովանդակային

տեսակետից, այսինքն՝ ճանաչել ձեր կարգավիճակը բովանդակային առումով, ձեզ հնարավորություն տալ ակտիվորեն մասնակցելու գործընթացին, որպեսզի առանց ձեզ որոշում չընդունվի: Առաջարկում եմ Մինսկի խորհրդատուներին սկսել լիազումար (պլենար) նիստից, որին նախագահողի կողմից դուք կիրավորվեք, բայց ոչ որպես դիտորդ: Դուք կիրավորվեք որպես շահագրգիռ կողմ: Պլենար նիստ կլինի խորհրդատուների բացման ու փակման ժամանակ: Ձեր ներկայությունը կազդի աշխատանքների ընթացքի վրա, առաջարկություններ կանեք նախագահողի միջոցով: Այնտեղ ամեն երկիր իր կարծիքն է ասելու, իսկ դուք ձեր տեքստը կարող եք ինձ վստահել, եւ ես այն կտարածեմ: Դուք կարող եք նստել իմ կողքին: Խորհրդատուների աշխատանքի 90 տոկոսը ոչ թե լիազումար նիստում է լինելու, այլ աշխատանքային խմբերում, որոնք որոշվելու են տարբեր ասպեկտներից ելնելով: Ոմանք կմասնակցեն ձեզ անչվող կոնկրետ հարցերի շուրջ քննարկումներին՝ ԼՂ ապագա կարգավիճակի, հումանիտար օգնության, ԼՂ-ի շրջափակման եւ այլնի մասին: Մյուսներն ավելի լայն հարցերով՝ Հայաստանի եւ Ադրբեյջանի հարցերով: Սա միայն Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը չէ: Ակնհայտ է, որ այս խմբերում (ձեզ վերաբերող) կարող եք մասնակցել մյուսներին հավասար: Սա շատ կարեւոր է, քանի որ այդտեղ են փաստաթղթեր պատրաստվելու, եւ քանի որ կոնսենսուսով ենք աշխատում, դուք հնարավորություն կունենաք մի կողմ չմնալ որոշումների ընդունումից: Եթե ցանկություն կա, իհարկե, երկխոսության միջոցով լուծել հիմնախնդիրը: Իսկ առանց դրա միջազգային հանրությունը չի ընդունի ոչինչ: Ինքնորոշման իրավունքն, այո, ակտիվորեն քննարկվում է միջազգային կառույցներում, բայց նաեւ կարծիք կա, որ ինքնորոշումը չի վերաբերում մի պետության ներսում ազգային փոքրամասնություններին: Կան տեսաբաններ, որ գտնում են, թե այդ իրավունքն առավել մեծ ինքնուրույնություն է տալիս: Բայց դա խորհրդատուներում քննարկելիք թեմա է: Ազգի ինքնորոշումն ընդունվում է, երբ ընդունվում է պետության վատ վերաբերմունքն այդ փոքրամասնության նկատմամբ: Չեմ ուզում քննարկել, թե դուք իրավունք ունե՞ք ինքնորոշման, թե՞ ոչ: Այդ իրավունքն ավելի հեշտ է պաշտպանել խորհրդատուներում, քան գեներով: Առկա սահմաններն ուժի միջոցով փոխելու քաղաքականություն՝ այսպես է ընկալվում ձեր դիրքորոշումը: Ձեր մասնակցությունը խիստ նպատակահարմար կլիներ:

3.4. - Այսպիսի մի պարզաբանում: Մոսկվայում հայեր են ապրում, որոնք ինքնորոշման մասին չեն էլ մտածում, քանի որ այստեղ պատմական հայրենիք չունեն: Իսկ մենք զենք ենք վերցրել ինքնապաշտպանության բնագոյից ելնելով:

4.9. - Ես կավելացնեի հետեւյալը: Մեր շարժման եությունը հետեւյալն էր՝ միասին ապրել Հայաստանի մեր էթնիկ եղբայրների ու քույրերի հետ: Եւ, հավանաբար, դա է մարդկանց համար առիթ դարձել խոսելու Հայաստանի ազդեցիկ մասին: Մենք մեր ձայնն ենք բարձրացրել ընդդեմ խտրականության, եւ դա ազատության ձգտում էր: Թե ով է մեզ զինված պայքարի հունի մեջ գցել՝ նույնպես հայտնի է: Ժողովրդավարական ընտրություններով ԼՂ-ի ստեղծումը համարում ենք քաղաքական փոխզիջում: Ցավում ենք, որ Ադրբեյջանն իր ցեղակիցներին օգտագործել է որպես «5-րդ շարասյուն» եւ լայնածավալ գործողություններ սկսել: Ադրբեյջանն ուզում է ոչնչացնել սեփական հողում ապրող ժողովրդին: Ազատությունն արեւմտյան քաղաքակրթության ամենահիմնարար սկզբունքներից է, եւ պիտի այդ տեսանկյունից գնահատել: Մենք չցանկացանք մորթվել որպես մատաղացու գառներ եւ ստիպված զենք վերցրինք: Դա միակ միջոցն էր: Մենք հակամարտությունը չենք ընկալում որպես Հայաստանի ու Ադրբեյջանի միջեւ բախում: Դա հակամարտություն է ազատության ձգտող ԼՂ-ի ու ազդեցող Ադրբեյջանի միջեւ: Էլ չեմ խոսում շրջափակման մասին, որը նույնպես պատերազմական միջոց է, չեմ խոսում մեր ավերված գյուղերի, մեր զոհերի մասին: Մեր հանրաքվեից հետո մենք չենք կարող որպես դիտորդ կամ համայնքի ներկայացուցիչներ ներկայանալ խորհրդատուներին: Այն, ինչ ներկայացվում է, ոչ այլ ինչ է, եթե ոչ նախկին վիճակին վերադարձնելու փորձ: Մենք հիմք չունենք կասկածելու հիմնախնդիրը լուծելու հարցում շահագրգիռ լինելու՝ ԵԱՀԿ անդամների անկեղծությանը, եւ երախտապարտ ենք դրա համար, բայց կան բաներ, որոնք մեզ համար ամենակարեւորն են, եւ մենք չենք կարող զիջման գնալ: Ինչ վերաբերում է ինքնորոշման իրավունքին եւ սահմանների անխախտությանը, ապա, իմ կարծիքով, ԵԱՀԿ-ն արդեն ընդունել է Սլովենիային, Խորվաթիային որպես իր անդամներ: Դա, իհարկե, ունի իր իրավաբանական հիմնավորումը: Կարծում եմ, որ նմանատիպ իրավիճակ է: Այս երկու սկզբունքները չեն հակասում միմյանց, քանի որ պարզ չէ, թե ով եւ երբ է ճանաչել

Աղրբեջանի ինքնորոշման իրավունքը: Սա ինձ համար շատ կարևոր է: Երբ Աղրբեջանը հայտարարեց իր անկախության մասին, մենք էլ մեր հռչակագիրն ընդունեցինք: Ղարաբաղը չէր մտնում Աղրբեջանի կազմի մեջ: Եւ իմ պապերի մեղքը չէ, որ բուլշեւիկները Ղարաբաղն ուժով մտցրել են Աղրբեջանի կազմը: Եւ հետո՝ ԼՂ ժողովուրդն իր վրա վերցրեց պատասխանատվությունը, եւ ինքը բարձրացրեց իր կարգավիճակը: Չգիտեմ պատմական մի օրինակ, երբ ժողովրդին նորից ստիպեն ստրուկ դառնալ: Մենք չենք համաձայնվի դրան:

Մ.Ռ.- Ցավոք, պատմությունը լի է ազատության դեմ գանազան ոտնձգություններով: Երբեմն էլ գեներն են դիմել: Ես հարգում եմ ձեր կարծիքը եւ գիտեմ այն դերը, որ ունեցել են սովետներն ու Ստալինը Ղարաբաղի ճակատագրում: Մյուս փաստարկները ճիշտ կլինեն ներկայացնել խորհրդաժողովում: Ինչ վերաբերում է Սլովենիային, ապա տարբերություններ կան: Եւ ճանաչմանը հասել են տարբեր ու երկարատև բանակցությունների, կոնսենսուսի միջոցով: Մինչ այդ կոնսենսուսը ոչ ոք չճանաչեց այդ հանրապետություններին: Դա կոնֆեդերատիվ պետություն էր, որ փլուզվեց: Ինչու՞ Չայաստանը չի ճանաչում ձեր պետությունը: Որովհետեւ եթե դա արվի, ապա վիճակն ավելի կբարդանա, եւ դժվար կլինեն միջազգային մակարդակով կոնսենսուսի հասնել, եւ Չայաստանն էլ կհայտնվեր ծանր վիճակի մեջ, ուրիշների քննադատության թիրախում: Կա երկու հստակ ուղի: Ես ուրախ եմ, որ բացահայտ վկայեցիք մեր անշահախնդրության մասին՝ ոչ միայն ԵԱՀԿ-ի, այլեւ Իտալիայի: Ինչ որ է, առաջինը ռազմական ուղին է: Այն, ինչ եղել է Նախիջևանում եւ Լաչինում, արդեն բարդացրել է գործը: Եւ կդառնա ոչ թե ԼՂ պրոբլեմ, այլ ավելի մեծ պրոբլեմ: Գիտե՞ք, փորձեր են արվել խորհրդաժողովի անունը փոխել: Այդ ուղին միայն վատ բանի կհասցնի: Մյուս ուղին է՝ նստել բանակցությունների սեղանի շուրջ: Սա լավագույն ուղին է ձեր կարծիքի ճանաչման համար: Եթե բացակայեք, ապա ձեզ կմեղադրեն, որ դուք ուզում եք խոչընդոտել բանակցային գործընթացը: Հետեւանքները վատ կլինեն: Հանդիպումը լինելու է ռազմական այս իրադարձություններից հետո... Այժմ ինձ թվում է, որ ապագա հանդիպումը կարելի է օգտագործել նաեւ խորհրդաժողովը հնարավոր դարձնելու եւ ձեր պրոբլեմները ներկայացնելու համար: Ներկայումս Լաչինի եւ Շուշիի գրավումն ու միջանցքի բացումը պայթյունավտանգ իրավիճակ են ստեղծել: Աղրբեջանական եւ թուրքական կողմերը դա օգտագործում են ասելու համար, որ խորհրդաժողով պետք չէ, եւ որ պետք է նախեւառաջ նախկին վիճակին վերադառնալ: Հռոմում կայացած 4-օրյա խորհրդատվություններում մեծ ուշադրություն դարձրեցինք այդ պրոբլեմներին ավելի հավասարակշիռ վերաբերմունք ցուցաբերելու համար, որպեսզի հնարավոր դարձնենք խորհրդաժողովը: Ինչ վերաբերում է Լաչինին, ապա կարևոր է երաշխիքների այնպիսի համակարգի ստեղծումը, որը կարող է հակազդել ռազմական լարվածությանը: Մինչեւ Մինսկը կարող ենք խոսել ԼՂ-ի ռազմական շրջափակման վերացման մասին: Գիտեմ, որ Ստեփանակերտի վիճակը վատ էր: Նույնը վերաբերում է նաեւ Շուշիին: Մի բան է աղրբեջանցիներին թույլ տալ վերադառնալ (դա օրինական է եւ հասկանալի), մյուս կողմից էլ՝ դա կարելի է անել երաշխիքներ տալով, որ նրանք ապագայում չվնասեն Ստեփանակերտին: Մենք կնախանջենք պրոբլեմների շրջանակը: Չի կարելի ասել, որ այս հարցերը կլուծվեն մինչեւ Մինսկը: Այս պահին մեր նպատակն է սառեցնել իրավիճակը: Դուք դե-ֆակտո տիրապետում եք այդ վայրերին, բայց աղրբեջանցիները պիտի երաշխիքներ ունենան: Դա անելով՝ ձեր իրավունքները ոտնահարված չեն լինի: Ձեր կարծիքը կլսվի եւ ավելի մեծ վստահությամբ կընկալվի:

Հ.Գ.- *Նորից մի փոքրիկ պարզաբանում: Շուշիի հիմնադրման ժամանակից այն հինավուրց հայկական քաղաք է եղել եւ Արցախի մայրաքաղաքն էր: Ազերի ղեկավարների մեղքով այն վերջնականորեն հայաթափվել է 2 տարի առաջ, այսինքն՝ Շուշին մենք ոչ թե գրավել, այլ հետ ենք վերադարձրել: Նույն վիճակը Նախիջևանում է:*

Մ.Ռ.- Նախիջևանում էլ պիտի վերցնեք: Սա սադրիչ հարց չէ:
Գ.Պ.- Դա Չայաստանի պրոբլեմն է: Իսկ մենք չենք կարող մեր հարսանիքին ներկա լինել հյուրի կարգավիճակով: Մենք արյուն ենք թափել, մեր արյամբ վճարել մեր քաղաքների ավերման ժամանակ, բայց մեր թիկունքին ժողովուրդն է, որի հետ կխնդրեինք հաշվի նստել: Առաջարկներ անելիս պիտի դա նկատի ունենալ: Պետականության բոլոր ատրիբուտները մենք ունենք: Երբ մենք շրջափակման մեջ էինք, համաշխարհային հանրությունը մատների արանքով էր նայում դրան:
Մ.Ռ.- Երբ միջանցք չկար՝ մենք Աղդամում էինք՝ ռումբերի տակ: Ես կուզեի հստակ իմանալ, քանի որ եկել եմ եւ պիտի հաշվետվություն ներկայացնեմ: Եթե ես ճիշտ եմ

հասկացել՝ դուք կարող եք մասնակցել, եթե ընդունեն անկախ պետության ձեր կարգավիճակը:

Գ.Պ.- Մենք իրավունք ունենք վճռորոշ դեր խաղալ մեր ժողովրդի ճակատագրի որոշման հարցում: Այս պահին ես չեմ խոսում պետականության ճանաչման մասին:

Մ.Ռ.- Ուրեմն՝ երբ ասում եք շահագրգիռ կողմ...:

Գ.Պ.- Մենք այդպիսին չենք, մենք պատերազմող կողմ ենք: Հայաստանն է շահագրգիռ կողմ:

Մ.Ռ.- Միայնակ եք ուզում լուծել հարցը, թե՞ միասին:

Գ.Պ.- Նախորդ հանդիպումներում մեր առաջարկած մեխանիզմները չեն մշակվել եւ ուստի հետագա կոնսուլտացիաները պարոն Ռաֆաելիի գործն է:

Մ.Ռ.- Գուցե ճիշտ չեմ հասկացել, նորից ճշտեք՝ ինչպիսի՞ն էք տեսնում ձեր մասնակցությունը:

Գ.Պ.- Այն դեպքում, եթե վճռական ձայն ունենանք մեր ճակատագիրը լուծելիս, հակառակ դեպքում առանց մեզ կընդունվի որոշում, որն անցանկալի ու անհեռանկարային է: Չկա պետական իշխանության ոչ մի մարմին, որ անտեսի ժողովրդի կամքը: Եւ այն ձեւը, որ առաջարկվում է, չի հասկանա մեր ժողովուրդը, թեեւ մի շարք հարցերում ես պարոն Ռաֆաելիի հետ համամիտ եմ:

Հ.Գ.- *Ինչպես հայտնի է, հրավեր են ստացել նաեւ դարաբաղաբնակ ադրբեջանցիները: Որքանո՞վ են այդ հրավերները տարբերվում միմյանցից: Կարգավիճակով մենք չենք տարբերվում հոռի հրավիրված ադրբեջանցիներից: Ինչ-որ փաստաթուղթ է ստորագրվել փետրվարի 28-ին Պրահայում: Մենք բողոքում ենք նման վերաբերմունքից:*

Գ.Պ.- Մենք Հայաստանին բողոք ենք ներկայացրել այն ստորագրելու համար: Մեր անունից կարող են խոսել միայն մեր ներկայացուցիչները:

Մ.Ռ.- Դա որոշում չէ, որ ձեզ մի կողմ է թողնում: Ձեր եւ ԼՂ ադրբեջանցիների հրավերները համապատասխանում են ընդունված փաստաթղթին, որով ես իմ լիազորություններն եմ ստացել: Ես կկարդամ դա: Դա մարտի 24-ին էր: ԵԱՀԽ Նախարարների խորհուրդը, բոլոր նախարարները համաձայն են, որ խորհրդաժողովն ունենա 11 անդամ-երկրներ, եւ որ ԼՂ ընտրված եւ այլ ներկայացուցիչները նախագահողի կողմից հրավիրվեն որպես շահագրգիռ կողմեր: Այս մոտեցումն է տարբերում ձեզ ԼՂ-ի ադրբեջանցիներից, որովհետեւ ընտրված ներկայացուցիչները միայն դուք եք: Հենց այս տարբերակումն էլ ընդգծում է, որ դուք ունեք հստակ կարգավիճակ: Ասել՝ ընտրված ներկայացուցիչներ, նշանակում է ընդունել, որ եղել են ընտրություններ: Միջազգային իրավունքի տեսանկյունից դա ինքնաբերաբար ենթադրում է, որ ընտրությունները նոր պետության ստեղծման հետեւանք են: Մեր առաջարկները համահունչ են ձեր դիրքորոշմանը: Միակ բանը, որ չենք կարող անել, դա ձեզ որպես անկախ պետության ներկայացուցիչներ հրավիրելն է: Ձեր երկիրը միջազգային ճանաչում չի ստացել: Եթե մի ամիս կամ մի տարի հետո դա լինի՝ ես հաճույքով ձեզ այդպես կանվանեմ: Այս իմաստով սա պորբլեմի եուլթյունն է, ոչ թե ձեւը: Ուստի կուզեի մի անգամ էլ ընդգծել, որ նման մթնոլորտում, այն է՝ ձեր մասնակցությամբ, չի կարող ձեր դեմ որոշում ընդունվել: Եւ դա ոչ միայն այն պատճառով, որ ձեր ներկայացուցիչը նման հնարավորություն կունենա, այլեւ որ Հայաստանը կարող է վետո դնել: Ամեն ինչից զատ՝ ձեր կարծիքն էական է լինելու: Աբսուրդ է, որ 11 երկրներ մի որոշում ընդունեն ընտրված ներկայացուցիչների կարծիքին հակառակ: Խոսենք նաեւ այն մասին, թե ինչ կարող է լինել, եթե չլինի ձեր համաձայնությունը: Ամեն ինչ կմնա նույն վիճակում: Բանակցությունները նրա համար են, որ ոչ մի երրորդ ուժ չմիջամտի: Եթե չմասնակցեք՝ ձեր ձայնը չի լսվի, եւ այն կներկայացնի ՀՀ-ն, ինչը ճիշտ չէ, միեւնույն ժամանակ՝ ձեր հակառակորդներն անհաշողության համար մեղքը ձեզ վրա կբարդեն:

Գ.Պ.- Մի անգամ եւս ընտրված ներկայացուցիչների մասին: Պարոն Ռաֆաելիին մի ասպեկտ մեկնաբանեց՝ կողմերի տարբեր կարգավիճակները: Սակայն ոչ ոք Ադրբեջանին չի խանգարի հոռի ուղարկել ընտրված ներկայացուցիչներ, ասելը թե, մի քաղաքի մակարդակով, որովհետեւ հարկ է իմանալ ընտրական համակարգը, որ ժառանգել ենք Սովետական Միությունից, քանի որ տվյալ դեպքում անգամ քաղաքապետն է ընտրվում, եւ այդ մարդը կարող է ընտրված ներկայացուցիչ կոչվել: Եւ հետո էլ՝ «եւ այլ ներկայացուցիչներ» ասելով բացահայտ ենթադրվում է տեղացի ադրբեջանցիներ:

Մ.Ռ.- Այո, այդպես էլ կա:

Գ.Պ.- Կրկնում եմ՝ մենք ադրբեջանցիներին առաջարկել ենք մասնակցել

խորհրդարանական ընտրություններին: Եւ մինչեւ վերջերս պահում էինք նրանց հատկացված տեղերը: Այդ նույնն է, թե Ելցիսի հետ հանդիպմանը մասնակցի նաեւ Թաթարստանը: Մենք հարկ եղած հրավերը չենք ստացել, ավելին՝ ինֆորմացիա չունենք, եւ քանի որ հիմա պատերազմի մեջ ենք եւ ստիպված ենք պաշտպանվել, ապա հարցի նման դրվածքը տարակուսանք է առաջացնում: Մի կողմից ասվում է, որ առանց մեզ ոչինչ չի արվի, մյուս կողմից՝ պետությունը չի ճանաչվում:

Մ.Ռ.- Ազգային փոքրամասնության հարցը շատ լուրջ հարց է...

Մարիո ՍԻԿԱ.- Մի հարց կուզեի տալ: Պարոն Պետրոսյանն ասաց, որ 3 տարբեր հրավեր է ստացել: Տարբերությունը ձեւի՞ մեջ էր, թե՞ բովանդակության:

Գ.Պ.- Միայն հեռախոսակապ ունեինք, ուստի չկարողացանք ստանալ ֆաքսով: Մեկում դիտորդ ենք անվանվում, մյուսում համայնքներ, երրորդում՝ ընտրված եւ այլ ներկայացուցիչներ: Դժվար է հասկանալ, թե ինչ է նկատի առնվում: Մենք պատասխանել ենք երկրորդ տեքստին, մենք կարող ենք սաթելիթով կապվել իրար հետ:

Մ.Ս.- Ըստ մեզ՝ 3-րդ տարբերակն է ճիշտը: Դա մենք չենք հնարել, այլ ընդունել ենք մյուսների հետ համաձայնության գալով: Ես խորհրդաժողովի նախագահի տեղակալն եմ: Սիւնյոր պրեզիդենտ, մենք ուզում ենք ձեր հիմնախնդրի շուրջ խորհրդաժողով հրավիրել: Մենք պիտի բովանդակությանը նայենք, այլ ոչ թե ձեւին: Իրական լուծումը լինելու է աշխատանքային խմբերում, որոնց դուք լիիրավ մասնակցելու եք:

Գ.Պ.- Մենք վետոյի իրավունք ունե՞նք:

Մ.Ս.- Այո, բայց չի կարելի այս մասին «աղաղակել»: Սա՝ Մինսկի մասին, բայց սա կուզեինք ընդունել նաեւ Յոնումում: Եթե սահմանափակենք լիազումար նիստը եւ ընդլայնենք աշխատանքային խմբերի գործունեությունը՝ դուք կուզենա՞ք մասնակցել:

Գ.Պ.- Վճռական ձայնի իրավունք ադրբեջանցիներն էլ՞ են ունենալու:

Մ.Ս.- Դա ձեզ դուր չի՞ գալիս:

Գ.Պ.- Իհարկե՞ ոչ:

Մ.Ս.- Բայց մեծ տարբերություն կա 80 եւ 20 տոկոսների միջեւ: Սա շատ եական հանգամանք է: Դուք որպես ձեր տարածքում մեծամասնություն եք հանդես գալու եւ որպես ընտրված ներկայացուցիչներ: Մինչդեռ դուք ձեւին եք ավելի մեծ կարելություն տալիս:

Գ.Պ.- Այս դեպքում ձեւը համապատասխանում է բովանդակությանը: Եթե դուք ասում եք, որ մենք վճռորոշ ձայնի իրավունք ունենք աշխատանքային խմբերում եւ առանց մեզ որոշում չի ընդունվի, ապա նման իրավունք է տրվում նաեւ տեղացի ադրբեջանցիներին: Ես Ձեզ ճիշտ եմ հասկացել:

Մ.Ռ.- (փոքր ինչ բացակայելուց հետո վերադառնալով.-Գ.Բ.) Ես նոր եկա, բայց...

Գ.Պ.- Կուզեի, որ պարոն Սիկան պատասխաներ:

Մ.Ս.- Ես հասկանում եմ ձեր հարցը: Դա համապատասխանում է ձեր դիրքորոշմանը:

Մեզ համար ձեր եւ ուրիշների դիրքորոշումը համարժեք չեն: Վետոյի մասին խոսելիս դուք ձեւին եք ուշադրություն դարձնում: Չեմ կարող ասել, թե ադրբեջանցիների կարծիքը հաշվի չի առնվելու, բայց նրանց ու ձեր խոսքը նույն կշիռը չունեն: Եւ առանց ձեր կարծիքի իրոք ոչինչ չի լինի:

Գ.Պ.- Ստիպված եմ մեկ անգամ եւս կրկնել, որովհետեւ խուսափում եք հարցից:

Հրավերի ձեւը եւ վճռական ձայնի մասին մեր գրույցները վկայում են, որ 2 կողմերն էլ նույն իրավունքներն են ունենալու, ինչից, բնականաբար, օգտվելու է նաեւ մյուս կողմը:

Մ.Ռ.- Կուզեի ընդգծել հետեւյալ հանգամանքը: Բանակցությունների միջոցով կարելի է փոխզիջման հասնել: Ամեն մեկը որոշակի կշիռ ունի: Չի լինի, որ մեկը շատ կշիռ ունենա, մյուսը՝ ոչ մի: Կլինեն տարբեր ուժեր բանակցությունների վրա ազդելու համար, եւ շատ բան կախված է լինելու քննարկվող փաստարկներից: Ադրբեջանն ու

Հայաստանը որպես պետություններ այս բանակցություններում ավելի մեծ կշիռ են ունենալու, քան Ֆրանսիան եւ Իտալիան: Թուրքիան ավելի մեծ կշիռ է ունենալու, քան Շվեյցարիան: Ձեւի տեսանկյունից 2 կողմերն էլ միեւնույն տեսակարար կշիռն ունեն:

Բայց մեծամասնության տեսակարար կշիռն ավելի մեծ է: Սակայն, չեմ կարող ասել, թե կշիռ չի ունենա ադրբեջանցի փոքրամասնության կարծիքը: Լավ գիտեք, Լեռնային Ղարաբաղի բոլոր ներկայացուցիչներն էլ պիտի Ադրբեջանի կազմում լինեին: Մենք

ասացինք, որ նման մոտեցումը կողմերից մեկին միայն կարող է բավարարել: Եւ բոլոր երկրներն էլ ճիշտ համարեցին մեր առաջարկը, անգամ Ադրբեջանը, որը չկարողացավ ընդդիմանալ այս որոշմանը: Ամեն մեկի կշիռը կախված է լինելու ընդունվելիք կոնկրետ

որոշումից: Օրինակ՝ անկախության հռչակման մասին: Հարց է ծագում՝ ադրբեջանցիները կարո՞ղ են վետոյի իրավունք ունենալ: Այս հարցում Ադրբեջանն է վիճելու, քանի որ իր տարածքի մի մասն է համարում Ղարաբաղը: Գուցե հետեւյալ

տեսակետին հարել՝ խորհրդաժողովի անցկացման ժամանակ հնարավոր չի լինելու ձեր կամքին հակառակ կամ ձեզ համար բացասական որոշում ընդունել: Ստեղծված իրավիճակի ցանկացած փոփոխման համար բոլորի համաձայնությունն է պետք: Դուք ասացիք, որ Ադրբեջանցիների համար տեղ եք թողել խորհրդարանում: Ուրեմն ցանկացել եք նրանց հարցերով էլ զբաղվել: Եթե Ադրբեջանն առաջարկի ինքնավարություն՝ դուք կարող եք չհամաձայնվել...

Գ.Պ.- Ինքնավարություն մենք արդեն ունեցել ենք:

Մ.Ռ.- ...կամ ֆեդերացիա, կամ անկախություն: Բոլոր դեպքերում էլ կոնսենսուս է պետք: Դա հաճախ տարիներ է տևում: Բայց մի բան է, երբ այն երկար է տևում խաղաղ, մեկ այլ բան, երբ պատերազմ է:

Գ.Պ.- Կներեք, բայց եթե մենք քննարկում ենք հիմնախնդրի քաղաքական հայեցակետերը, մենք մեզ հաշիվ ենք տալիս, որ Ադրբեջանի կառավարության իրական նպատակը մեզ ոչնչացնելն էր: Որտե՞ղ է երաշխիքը, որ Ադրբեջանը չի շարունակի այդպես վարվել: Դուք առաջարկում եք սառեցնել իրավիճակը, իսկ նրանք կարող են օգտվել դրանից ու նախապատրաստվել: Ադրբեջանն ասիմիլացրել է ուրիշ ազգերի: Ադրբեջանական բանակը դասալքում են լեզգիները, թալիշները: Այս առումով Ադրբեջանը մոնոլիտ պետություն չէ եւ որպես պետություն մտածում է իրեն պահպանելու մասին:

Մ.Ռ.- Խորհրդաժողովը լինելու է այս իրավիճակի պայմաններում, այն, ինչ ունենք այսօր:

Գ.Պ.- Դե-յուրե, թե դե-ֆակտո ԼՂՀ-ն կայացած է եւ ունի պետականության բոլոր ատրիբուտները:

Մ.Ռ.- Ներքին տեսանկյունից: Իսկ արտաքին՞:

Գ.Պ.- Մենք կսպասենք:

Մ.Ռ.- Յետաքրքիր էր իրավիճակի սառեցման մասին ձեր ասածը: Այն, ըստ Ձեզ, Ադրբեջանին կարող է թույլ տալ նախապատրաստվել նոր գործողությունների: Ինչու՞ եք գտնում, որ այդ վտանգն ավելի մեծ է լինելու խորհրդաժողովի ժամանակ, այլ ոչ թե հիմա:

Գ.Պ.- Վտանգը կապ չունի խորհրդաժողովի հետ: Դժվար թե որեւէ երկրի համար դա լուրջ խոչընդոտ լինի:

Մ.Ռ.- Եթե մի կողմը չընդունի խորհրդաժողովի որոշումը, ապա մյուս կողմը, բնական է, կարող է ավելի ագրեսիվ լինել առանց այդ որոշման: ԵԱՀԿ-ն կարող է մի քանի հարյուր դիտորդ ուղարկել հրադադարը եւ տեղափոխությունները վերահսկելու համար: Բացառված չեն նաեւ ռազմական երաշխիքները:

Գ.Պ.- Մի փոքրիկ էքսկուրս՝ միջազգային հանրության պատմությունից: Չնայած ՄԱԿ-ի դատապարտմանը՝ Թուրքիան կարողացավ Կիպրոսը գավթել: Ուստի լուրջ կասկածներ ունենք, որ միջազգային հանրության դերը գերազնահատվում է:

Մ.Ռ.- Դա, իրոք, այդպես է, քանի որ դեպքերն արագ են զարգանում: Իրաքի օրինակը:

Մ.Ս.- Նախքան հրաժեշտ տալը խոսենք Միսսկի եւ Յոմի մասին: Յոմում նպատակ կա ճշտել խորհրդաժողովի հետ կապված որոշ հանգամանքներ, բայց ձեռակախորեն այն կապված չէ Միսսկի հետ: Յոմի որոշումները չեն խանգարի եւ չեն պարտավորեցնի Միսսկին: Յոմ գալով չի նշանակում, որ հարցը լուծված է:

Մ.Ռ.- Եթե կարելի է՝ ավելի անկեղծ: Այն, ինչ ասել եք ինձ, կարող եք ասել Յոմում, եւ դա չի նշանակի, որ պարտավոր եք մասնակցել Միսսկին: Կարող եք գալ Յոմ եւ ներկայացնել ձեր առաջարկությունները Միսսկի համար: Եթե դժգոհ լինեք Յոմից՝ կարող եք չգալ Միսսկի:

Գ.Պ.- Շնորհակալ եմ, որ պարոն Ռաֆաելլին ընդունեց հանդիպման մեր առաջարկը: Յարցը մենք կքննարկենք մեր խորհրդարանում եւ որոշում կընդունենք՝ հաշվի առնելով մեր գործընկերների կարծիքները: Ըստ Եւրոյան, շատ բան պարզվեց: Մենք ձեզ անպայման տեղյակ կպահենք:

Վերջաբանի փոխարեն

ԼՂՀ պատվիրակությունն, այդուամենայնիվ, մասնակցեց Յոմի հանդիպմանը:

Գ.Բ.

Գոյատեւումն ու զարգացումը կախված են «ինչ ենք ուզում»-ի եւ «ինչ է մեզ պետք»-ի միջեւ բալանսի որոնումից

Ժիրայր ԼԻՊԱՐԻՏՅԱՆ
ԱՄՆ

-Պարոն Լիպարիտյան, երբ Ղարաբաղում հրադադար կնքվեց՝ Դուք բարձր պաշտոն էիք զբաղեցնում Հայաստանի նախագահի աշխատակազմում եւ անմիջականորեն զբաղվում էիք ղարաբաղյան հիմնախնդրով: Ըստ Ձեզ, հատկապես ի՞նչ հանգամանքներ նպաստեցին 1994 թվականի մայիսին հրադադարի մասին համաձայնագիրը կնքելուն:

-Առաջին հերթին պիտի ճշտեմ, որ, ըստ իս, հրադադարի մասին պայմանագիրը մի գործընթաց էր, որ սկսվել էր մայիսին՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի ներկայացուցիչ, դեսպան Կազիմիրովի համառ ու եռանդուն ջանքերի շնորհիվ: Պայմանագիրը, որ ստորագրվել է մայիսին, վերջ է դրել պատերազմին: Այն ժամանակ երեք շահագրգիռ կողմերի համար պարզ չէր՝ սա կրակի մշտակա՞ն դադարեցում է, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մայիսյան որոշման մեջ բացակայում էր նման դրույթ, Հրադադարի մասին համաձայնագիրն արդյունք էր քաղաքական համաձայնության ձեռքբերմանն ուղղված 30-օրյա համառ ջանքերի: Ակնհայտ էր, որ մշտական հրադադարի մասին որոշում չէր կարող ընդունվել այդ 30 օրում: Դրա համար հարկ էր լրացուցիչ ջանքեր թափել, ջանքեր, որոնք արվում էին Երեւանի կողմից՝ Ստեփանակերտի ու Բաքվի հետ անմիջական բանակցությունների ընթացքում: Այդ ջանքերը մեկ-երկու ամիս հետո պսակվեցին լրացուցիչ համաձայնագրի կնքմամբ. մշակված փաստաթղթերում, մասնավորապես, նշվում է, որ հակամարտության կողմերը համաձայնվում են մշտական հրադադարին, ինչը նշանակում է, որ կրակի դադարեցումը պահպանվելու է մինչեւ քաղաքական պայմանագրի կնքումը: Գիտեմ, որ հարցի այս կողմը հաճախ անհայտ ու աննկատ է մնում, թեեւ այն հատկապես կարեւորվում է անցած տարվա հայտարարությունների լույսի ներքո, մասնավորապես այն մասին, որ 2008 թվականին Մոսկվայում ստորագրված փաստաթղթում Ադրբեյջանն առաջին անգամ հակամարտության խաղաղ կարգավորման խոստում տվեց: Այն կարեւոր է նաեւ պատմության համար (այս գործընթացի մասին ես մտադիր եմ մանրամասն գրել իմ հաջորդ գրքում):

Հրադադարի մասին մայիսյան համաձայնագիրը, որն, ինչպես արդեն նշեցի, հնարավոր դարձավ դեսպան Կազիմիրովի շնորհիվ, ձեռք է բերվել իսկելիսկ ժամանակին: 1993թ. դեկտեմբերին Ադրբեյջանի կողմից ձեռնարկված հարձակումը, որը մարտադաշտում մեծ կորուստների հանգեցրեց, ընդհանուր առմամբ ձախողվել էր: Դա պարզ դարձավ արդեն 1994-ի ապրիլին: Չեմ հավատում, թե Հեյդար Ալիևը պատերազմ էր ուզում: Բայց չգիտես ինչու ինձ թվում է, որ նա հակված էր հավատալու, թե նոր հարձակումը կարող է փոխել իրավիճակը: Հենց որ պարզ դարձավ, որ դա սխալ հաշվարկ էր, նա արդեն պատրաստ էր քննարկելու հրադադարի հնարավորությունը, համենայն դեպս՝ ժամանակավոր հրադադարի:

Անժամկետ հրադադարի մասին համաձայնագիրը հնարավոր դարձավ, որովհետեւ.

- 1) Ադրբեյջանն այլեւս չէր կարող հույս դնել աֆղան մոջահեդների վրա մարտական գործողությունների նոր ալիքի դեպքում (սա արդեն այլ պատմություն է)
- 2) ադրբեյջանական հանրությունն արդեն հոգեբանորեն հարմարվել էր առանց կորցրած տարածքների վերադարձման հրադադարի մտքին
- 3) մենք կարողացանք ճիշտ ձեւակերպումներ գտնել այն փաստաթղթերի համար, որոնք անժամկետ հրադադարի հիմքը դարձան:

-ԵԱԿԿ Մինսկի խմբի հովանու ներքո անցկացված բանակցություններում որպես Հայաստանը ներկայացնող պատվիրակության նախկին ղեկավար՝ ինչպե՞ս եք գնահատում բանակցային ներկայիս գործընթացը, եւ ի՞նչ քայլեր կարող էին հայկական երկու կողմերը ձեռնարկել իրենց համար ընդունելի լուծումների հասնելու համար:

-Այստեղ եւս պիտի սկսեմ մի պարզաբանումից: Բանակցություններին իմ մասնակցությունը չէր սահմանափակվում Հայաստանի պատվիրակության ղեկավարի միայն մասնակցությամբ մի գործընթացի, որը հայտնի է որպէս Մինսկի գործընթաց: 1991-97թթ. ես մասնակցում էի մի շարք այլ գործընթացների եւս, որոնք նույնպէս ուղղված էին հիմնախնդրի լուծումների որոնմանը:

Ինչ վերաբերում է ներկայիս իրավիճակին, ապա դժվար է գնահատել այն, քանի որ թափանցիկություն չկա, ինչը կարելի է հասկանալ: Բայց կան նաեւ հակասական ազդանշաններ: Անցյալում սույն իրավիճակում գտնված լինելով՝ չէի ուզեցա վերջնական գնահատականներ տալ: Ըստ իս, կա պայմանագիր, կամ, համենայն դեպս՝ փոխըմբռնում, որը ձեռք է բերվել անցյալ տարվա հոկտեմբերին Մոսկվայում, բայց որը դեռ չի ներկայացվել հանրությանը: Եթե իրերի վիճակն այդպիսին է, ապա ներկայիս բանակցություններն առնչվում են՝ 1) համաձայնագրի կատարման համար ժամանակի որոշմանը եւ 2) այն մանրամասներին, որոնք միշտ էլ հարմար առիթ են համաձայնագրի կատարումը հետաձգելու կամ ընդհատելու համար:

Հարցի վերջին մասի առնչությամբ՝ երկու կողմերի համար իդեալականը հիմնարար քննարկումների անցկացումն է ու համաձայնագրի հասնելը՝ երկարաժամկետ ռազմավարական պատկերացումների հիման վրա, որոնք դուրս են այսօրվա հանգամանքների շրջանակներից: Մենք բոլորս ինքներս մեզ համար արդեն այսօր պիտի պարզենք, թե ինչի ենք ուզում հասնել 20 կամ 50 տարի անց: Հասկանալի է, որ Հայաստանի ու ԼՂՀ-ի միջեւ քննարկումները դժվարին գործընթաց էր: Հնարավոր է, որ այդ գործընթացն արդեն ավարտված է:

Սակայն բանակցությունների այս փուլում անհրաժեշտ է, որպէսզի ԼՂՀ-ն մասնակցի դրանց: Իշխանության մեջ իմ եղած ժամանակ լինում էին դեպքեր, երբ Երեւանը երկկողմանի բանակցություններ էր վարում Բաքվի հետ: Ես միշտ էլ դա ընկալել եմ որպէս միջնորդական առաքելություն: Ինչպիսին էլ որ լինի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովուրդը պիտի ունենա այն գիտակցությունը, որ որոշումն ընդունվել է իր ընտրած ղեկավարների մասնակցությամբ: Միայն նրանք՝ ընտրած ղեկավարները, կարող են համոզել իրենց ժողովրդին, որ որոշումն ապահովելու է նրա անվտանգությունն ու ապագան:

-Ի՞նչը կարող է խանգարել ԼՂՀ միջազգային ճանաչմանը, նկատի ունենալով Արեւմուտքի կողմից՝ Կոսովոյի եւ Ռուսաստանի ու այլ երկրների կողմից՝ Աբխազիայի ու Հարավային Օսիայի ճանաչման նախադեպերը:

-Դա կարելու հարց է: Պորբլեմը նրանում է, որ Նշված դեպքերում հարեւան երկրների եւ խոշոր ուժերի շահերը միշտ էլ տարբերվում էին, իսկ ԼՂՀ-ի պարագայում նման տարբերություն չկա: Տարածաշրջանային կամ միջազգային ոչ մի ակտոր չափազանցված չէ ԼՂՀ անկախության ճանաչմամբ: Ոչ Ռուսաստանը, ոչ Իրանը, ոչ Թուրքիան, ոչ Եվրոպան եւ ոչ էլ Միացյալ Նահանգները: Մեր ամենամերձավոր ակտորը՝ Ռուսաստանը, շատ հնարավորություններ է ունեցել դա անելու, բայց չի արել: Վրաստանի եւ, ավելի լայն իմաստով, ԱՄՆ-ի հետ Ռուսաստանի հարաբերություններում կան մի շարք այլ հիմնախնդիրներ, քան Ադրբեջանի հետ հարաբերություններում: Այսօր եւ տեսանելի ապագայում Ռուսաստանը չափազանցված է շատ ոլորտներում Ադրբեջանի հետ ամուր փոխհարաբերությունների զարգացմամբ: Տեղյակ լինելով դրան՝ Ադրբեջանը շատ խելոք քաղաքականություն է վարում այդ ուղղությամբ: Քաջ հայտնի է նաեւ Ռուսաստանի քաղաքականությունը Արցախի նկատմամբ, որը համապատասխանում է Նշյալ մոտեցմանը: Ակնհայտ է, որ սա այնքան էլ այն չէ, ինչ կուզենայի տեսնել, որքան այն, ինչ իրականում տեսնում եմ:

Իհարկե, կարելի է պնդել, որ 10, 20 կամ 30 տարի սպասելով հանգամանքները կարող են փոխվել: Սակայն նման դիրքորոշումից մի քանի խնդիրներ են ծագում. 1) Հայաստանի քաղաքականությունն այդպիսին է եղել 1998-ից ի վեր. մեր շուրջ իրավիճակը փոխվում էր, իսկ մեր քաղաքականությունը մնում էր նույնը, 2) փոփոխություններից մեկն էլ առնչվում է Հյուսիսային Կիպրոսի շուրջ իրավիճակին: Թուրքիան փոխել է անկախ պետություն ստեղծելու իր մտադրությունը եւ այժմ որդեգրել է Հյուսիսային Կիպրոսը որպէս Կիպրոսի Հանրապետության մաս (համենայն

դեպս՝ իրավական տեսանկյունից) ճանաչելու մարտավարությունը, 3) մինչ մենք սպասում էինք այս ամբողջ ընթացքում՝ մենք կորցրինք ժամանակը: Այս ամբողջ ընթացքում մենք կորցրինք Հայաստանի ու ԼՂՀ-ի համար արժեքավոր շատ բաներ: Չեմ ուզում մանրամասների մեջ ընկնել, եւ իմաստ էլ չունի: Սակայն ոչ մի երաշխիք չկա, որ հետագայում ժամանակն աշխատելու է մեր օգտին: Ոմանք նրանցից, ովքեր 1998-ին պնդում էին, որ ժամանակն աշխատում է մեր օգտին, հիմա հակառակն են պնդում: Բայց ակնհայտ է, որ 1995-ից սկսած ժամանակը մեր օգտին չի աշխատել:

-Ինչպե՞ս եք գնահատում Հայաստան-Թուրքիա զարգացող երկխոսությունը: Հարաբերությունների կարգավորումն ինչպիսի՞ մարտահրավերներ ու հնարավորություններ է պարունակում եւ ինչպե՞ս կարող է այն անդրադառնալ դարաբաղյան կարգավորման վրա:

-Այս դեպքում մենք մի պարադոքսալ իրավիճակի ենք հանդիպում: Սկսեմ նրանից, որ ես շատ փոփոխություններ չեմ տեսնում 1993-ից ի վեր ընթացող երկկողմանի բանակցություններում, թեեւ գտնում եմ, որ Երդողանի կառավարությունն ավելի բաց ու նվազ կաշկանդված է: Երկու կողմերն էլ ուզում են բարելավել հարաբերությունները: Թուրքիայի համար սահմանների ճանաչման հարցն առանցքային էր 1992-ին սկսված բանակցությունների հենց սկզբից: Հակամարտության լուծումը կամ կարգավորմանն ուղղված լուրջ քայլերը նախապայման էին 1993 թվականի ապրիլից: Իսկ քանի որ Քոչարյանի վարչակազմում Ցեղասպանության ճանաչումը կարելու տեղ էր զբաղեցնում Հայաստանի միջազգային քաղաքականության օրակարգում, Թուրքիան էլ էր փորձում մեծ ուշադրություն դարձնել դրան: Երդողանի կառավարության պարագայում այն դրսեւորվել է պատմական հանձնաժողովի ձեւավորման պահանջով, ինչը շատ բան կարող է նշանակել: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, ապա հետագա երեք կառավարություններն այն միտքն էին արտահայտում, որ Հայաստանը կողմ է առանց որեւէ նախապայմանի հարաբերությունների բարելավման ու սահմանների բացման: Սա լուռ կամ բացահայտ ձեւով նշանակում է ներկայիս սահմանների ճանաչում: Մանրամասնությունների մեջ չեմ ընկնի, թե կառավարություններից յուրաքանչյուրն ինչպես է վարել այս քաղաքականությունը: Կարելու է այն, որ ներկայացված փաստաթղթում, այն փաստաթղթում, որ ներկայացվում է որպես հարաբերությունների բարելավման սկզբունքների մասին փաստաթուղթ, նոր ոչինչ չկա, բացի դեռեւս չորոշված պատմական հանձնաժողովից, ինչը կարելի է շատ հեշտ անել:

Իսկ վիճակը պարադոքսալ եմ գտնում այն պատճառով, որ այս բոլոր փաստերը միշտ էլ հայտնի էին, եւ հանկարծ հայտնվում են մարդիկ, ովքեր այնքան են հիասթափված դրանից, կարծես թե հարաբերությունների բարելավումն ու առկա սահմանների բացումը նոր քաղաքականություն է:

Ինձ համար հասկանալի չէ, թե ինչու է այս ամենն այսօր կատարվում: Հավանաբար, այն պատճառով, որ այն մարդիկ, ովքեր ներկայումս բողոքում են, կարծում էին, որ այս քաղաքականությունը երբեք իրականություն չի դառնա, իսկ հիմա տեսնում են, որ այն, այնուամենայնիվ, կարող է իրականացվել: Օրինակ, ինչպե՞ս կարող էր Դաշնակցությունը 10 տարի շարունակ սատարել Քոչարյանին, որը հստակ նախանշել է նման քաղաքականություն, հայտարարելով, որ Հայաստանն իրավական ոչ մի հիմք չունի Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնելու համար, իսկ ապա նույն կուսակցությունը հայտարարեց, որ Սարգսյանի վարած նույն այդ քաղաքականությունն է պատճառ հանդիսացել Հայաստանի կռաւիցիոն կառավարությունից իր դուրս գալու համար: Սա «սկզբունքային» դիրքորոշում չէ: Սա նաեւ մյուսներին է վերաբերվում, այդ թվում՝ երկրորդ կառավարության որոշ ներկայացուցիչների: Հավանաբար, սա իր բացատրությունն ունի:

-Ինչպիսի՞ն եք պատկերացնում Արցախի ապագան:

-Արցախը հրաշալի հող է՝ բնակեցված իրական մարդկանցով, մեր ժողովրդով: Այստեղ ես շեշտադրումն անում եմ այն հանգամանքի վրա, որ ժողովուրդը, քաղաքները, գյուղերը, ընտանիքներն ու անհատները բազմաթիվ փորձությունների են դիմակայել եւ շարունակում են դիմակայել: Եւ ես կարծում եմ, որ բոլոր այդ մարդիկ լավագույնն են ուզում իրենց ու երեխաների համար: Ես երբեք այս առնչությամբ վերացական,

աբստրակտ ձեռով չէ, որ մտածել եմ Արցախի ու Հայաստանի մասին: Ես միշտ էլ մտածել եմ Արցախի կամ Հայաստանի մասին որպես իրական մարդկանցից բաղկացած մեր հայրենիքի, այլ ոչ թե որպես թանգարանների, տեսարժան վայրերի, կամ էլ գաղափարաբանական կառուցվածքի սոսկական տարրերի մասին, որում քաղաքները, գյուղերը, ընտանիքներն ու անհատները երկրորդական են:

Արցախի ապագան կախված է սեփական առաջնորդների ու ժողովրդի շրջահայացությունից, գոյատևումն ու զարգացումը կախված են «ինչ ենք ուզում»-ի եւ «ինչ է մեզ պետք»-ի միջեւ բալանսի որոնումից: Հայոց պատմության մեջ շատ է պատահել, երբ իդեալականին հասնելու մեր ցանկությունը մեզ գրկել է նրանից, ինչը մեզ անհրաժեշտ է եղել:

Եթե կարողանանք գտնել այդ բալանսը, ապա Արցախին ու նրա ժողովրդին, անկասկած, մեծ ապագա է սպասում: Դա նշանակում է, որ երեխաները կուզեն Արցախն իրենց տունը դարձնել, նրանք, ովքեր հեռացել են, կվերադառնան, եւ նույնիսկ մեզնից ոմանք, ովքեր Արցախից չեն, կուզենան ապրել ու աշխատել այս հողում:

Անգլերենից թարգմանությունը Իրեն ԱՆՈՅԱՆԻ

Լեռնային Ղարաբաղի եւ նրա շուրջ հակամարտության վերաբերյալ ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի հայտարարությունը

15 ապրիլ, 1994թ.

Ի գիտություն ընդունելով Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների հայտարարությունները ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով ձեռնարկված միջոցների վերաբերյալ՝ ԱՊՀ երկրների ղեկավարների խորհուրդը արձանագրում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը անվերականգնելի վնաս է հասցնում ադրբեջանցի եւ հայ ժողովուրդներին, Անդրկովկասի ողջ տարածաշրջանի տնտեսությանն ու շրջակա միջավայրին եւ շոշափում է ԱՊՀ այլ անդամների Եական հետաքրքրությունները, ԱՊՀ-ը՝ ընդհանրապես:

ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհուրդն աջակցում է ԱՊՀ մասնակից պետությունների ճիգերը՝ ուղղված հակամարտության ամուր քաղաքական կարգավորմանը, այդ թվում՝ Ռուսաստանի աննկուն խաղաղապահ նախաձեռնություններին, ողջունում է ԱՊՀ անդամ պետությունների Միջխորհրդարանական վեհաժողովի խաղաղարար առաքելությունը:

ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհուրդը հաստատում է իր ձգտումը բոլոր հնարավոր միջոցներով նպաստելու միակ հնարավոր՝ փոխզիջումային լուծման որոնումներին: Հիմնական առաջնահերթությունը եւ կարգավորման հրամայականը՝ կրակի, բոլոր ռազմական գործողությունների անհապաղ դադարեցումն է, որից հետո՝ դրա հուսալի ամրապնդումը: Առանց այդ ամենի հնարավոր չէ անցնել ողբերգական դիմակայության հետեւանքների վերացմանը:

ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհուրդը դիմում է միջազգային հանրությանը, ԵԱՀԿ-ին եւ ՄԱԿ-ին՝ կոչով աջակցել ԱՊՀ կողմից ձեռնարկվող միջոցառումներին՝ ելնելով հակամարտության կարգավորման շահերից:

Բիշքեկի արձանագրություն*

5 մայիս, 1994թ.

ԱՊՅ խորհրդարանական վեհաժողովի, Կիրգիզիայի խորհրդարանի, Ռուսաստանի Դաշնային ժողովի եւ արտգործնախարարության նախաձեռնությամբ 1994թ. մայիսի 4-5-ը Բիշքեկ քաղաքում անցկացված հանդիպման մասնակիցները.

1. վճռականություն հայտնեցին ամեն կերպ օժանդակել Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջը գինված հակամարտության դադարեցմանը, որը ոչ միայն անուղղելի վնաս է հասցնում ադրբեջանական եւ հայ ժողովուրդներին, այլեւ եականորեն շոշափում է տարածաշրջանի մյուս երկրների շահերը, լրջորեն բարդացնում միջազգային իրավիճակը.

2. պաշտպանելով ԱՊՅ պետությունների երկրների ղեկավարների 1994թ. ապրիլի 15-ի խորհրդի հայտարարությունը՝ պատրաստակամություն հայտնեցին լիովին աջակցել գինված դիմակայության դադարեցմանը եւ նրա հետեւանքների վերացմանն ուղղված գործադիր իշխանության ներկայացուցիչների ու ղեկավարների ջանքերին՝ համապատասխան համաձայնագրի շուտափույթ կնքման միջոցով.

3. հանդես եկան հակամարտության դադարեցման գործում ԱՊՅ եւ Միջխորհրդարանական վեհաժողովի բնական ակտիվ դերի, դրա հետ կապված ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ սկզբունքների, նպատակների եւ կոնկրետ խնդիրների իրագործման օգտին (նախ եւ առաջ Անվտանգության խորհրդի 822, 853, 874, 884 բանաձեւեր),

4. կոչ արեցին բոլոր հակամարտող կողմերին լսել ողջախոհության ձայնը, մայիսի 8-ի լույս 9-ի կեսգիշերին դադարեցնել կրակը՝ հիմնվելով 1994թ. փետրվարի 18-ի արձանագրության վրա (այդ թվում եւ դիտորդների տեղակայման մասով), եւ արդյունավետ աշխատանքով սեղմ օրերի ընթացքում հրադադարն ամրապնդել հուսալի, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագրի ստորագրման միջոցով, որը նախատեսում է ռազմական եւ թշնամական գործողությունները չվերսկսելու ապահովման մեխանիզմ, գրավված տարածքներից զորքերի դուրս բերում եւ հաղորդակցման ուղիների գործունեության վերականգնում, փախստականների վերադարձ.

5. համաձայնեցին առաջարկել ԱՊՅ անդամ-պետությունների խորհրդարաններին՝ քննարկել Միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի նախագահ Վ.Ֆ. Շումեյկոյի եւ վեհաժողովի խաղաղարար խմբի ղեկավար Մ.Շ.Շերիմկուլովի նախաձեռնությունը ԱՊՅ խաղաղարար ուժերի ստեղծման մասին, 6. նպատակահարմար գտան շարունակել նման հանդիպումները՝ ի շահ գինված հակամարտությունների խաղաղ լուծման,

7. Երախտագիտություն հայտնեցին Կիրգիզիայի ժողովրդին եւ ղեկավարությանը՝ աշխատանքի համար հիանալի պայմաններ ստեղծելու, սրտաբացության եւ հյուրընկալության համար:

Պատվիրակությունների անունից

(Ա. Ջալիլով) Ռ. Գուլիեւ

Բ. Արարբջյան

Կ. Բաբուրյան

Մ. Շերիմկուլով

Վ. Շումեյկո

Վ. Կազիմիրով

Մ. Կրոտով

** 1994թ. մայիսի 8-ին, երբ Բաքվում Ռասուլ Գուլիեւը ստորագրում էր արձանագրությունը, այդ օրինակի մեջ կատարվել են երկու փոփոխություններ: Չորրորդ կետում "դիտորդներ" բառից առաջ ավելացվել է "միջազգային" բառը, իսկ "զբաղեցրած"-ի փոխարեն գրվել է "գրավված":*

Յրադադարի համաձայնագիրը

" " մայիս, 1994թ. *

Ռուսաստանի պաշտպանության նախարար
Պ. Ս. Գրաչովին

Ռուսաստանի արտգործնախարար
Ա. Վ. Կոզիրեւին
Վ. Ն. Կազիմիրովին

Արձագանքելով կրակի դադարեցման մասին կոչին, որ շարադրված է 1994թ. մայիսի 5-ի Բիշքեկի արձանագրությունում, եւ հիմնվելով 1994թ. փետրվարի 18-ի արձանագրության վրա, հակամարտող կողմերը համաձայնվեցին հետեւյալի մասին.

1. ապահովել կրակի եւ ռազմական գործողությունների ամբողջական դադարեցումը 1994թ. մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից: Կրակի դադարեցման մասին համապատասխան հրամաններ կտրվեն եւ կհասցվեն զինվորական ստորաբաժանումների հրամանատարներին, որոնք պատասխանատու են դրա կատարման համար ոչ ուշ, քան 1994թ. մայիսի 10-ի 15.00 ժամը: Մայիսի 11-ին մինչեւ 20.00 ժամը կողմերը փոխանակում են կրակի դադարեցման մասին իրենց հրամանագրերը՝ հնարավոր փոխադարձ լրացումների եւ հետագայում համանման փաստաթղթերի հիմնական դրույթների նույնականացման նպատակով:

2. խնդրել Ռուսաստանի պաշտպանության նախարարին ոչ ուշ, քան մինչեւ մայիսի 12-ը Մոսկվայում գումարել Ադրբեջանի, Չայաստանի պաշտպանության նախարարների եւ Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատարի խորհրդակցություն՝ գործառնների տարանջատման սահմանները, այլ ռազմատեխնիկական անհետաձգելի հարցերը համաձայնեցնելու եւ միջազգային դիտորդների առաջավոր խմբի գործունեությունը ծավալելու նախապատրաստման նպատակով:

3. Այս պայմանավորվածությունը կօգտագործվի առաջիկա տասը օրերին բանակցությունները ավարտելու եւ ս.թ. մայիսի 20-ից ոչ ուշ զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնագիր կնքելու համար: Չինված ուժերի եւ ստորաբաժանումների ղեկավարները հնարավոր են համարում այդ համաձայնագրի ստորագրմանը հրավիրել Լեռնային Ղարաբաղի խնդրով ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի նախագահին:

4. Այս պայմանավորվածությունը ուժի մեջ կմտնի անմիջապես այն բանից հետո, երբ միջնորդը կտեղեկացնի, որ հակամարտող կողմերից ստացել է միանգամայն նույնական փաստաթղթեր՝ ստորագրված լիազոր ներկայացուցիչների կողմից:

Ադրբեջանի պաշտպանության նախարար*
Չայաստանի պաշտպանության նախարար*
Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատար*

* Յրադադարի տեքստը մայիսի 9-ին Բաքվում ստորագրել են Մամեդոնով Մամեդովը, մայիսի 10-ին Երեւանում՝ Սերժ Սարգսյանը եւ մայիսի 11-ին Ստեփանակերտում՝ Սամվել Բաբայանը: Փաստաթղթերից յուրաքանչյուրը առանձին-առանձին Մոսկվա է ուղարկվել ֆաքսով:

Խմբագրության կողմից.

վերոբերյալ փաստաթղթերի հայերեն տեքստերը մեջբերվել են Թաթուլ Յակոբյանի «Կանաչ եւ սեւ. արցախյան օրագիր» գրքից

Մտորումներ՝ հրադադարի 15-ամյակի առիթով

Վարդան ՕՍԿԱՆՅԱՆ
Երեւան

Աշխարհում ամենաերկար ինքնակառավարվող հրադադարի 15-ամյակը առիթ է գնահատելու անցած մեկ եւ կես տասնամյակի ընթացքում տեղի ունեցածը եւ մտածելու գալիքի մասին:

Մտորելու համար երկու հիմնական հարց կա: Առաջինը՝ արդյո՞ք Լեռնային Ղարաբաղի (եւ Հայաստանի) հայերն ավելի պաշտպանված են այսօր, քան զինադադարից առաջ: Երկրորդ՝ ինչպե՞ս կգարգանա այս՝ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը: Կենսական նշանակություն ունեցող անվտանգության խնդրի տեսանկյունից ակնհայտ է, որ հրադադարը զարմանալիորեն հաջողվել է պահպանել, եւ բացի հատուկէնտ ընդհարումներից, խաղաղության խախտման զգալի դեպքեր չեն արձանագրվել: Խաղաղությունը պահպանվել է շփման գծում անկանոն, փոքրածավալ դիտարկման իրականացմամբ եւ առանց խաղաղապահների մասնակցության: Սա չի կարող բացատրվել բացառապես բարի կամքի անկայությամբ եւ բանակցային գործընթացի գոյությամբ: Սրանք, իհարկե, հուսադրող բացատրություններ են, բայց այդ ամենը բավարար չէր լինի: Մենք պետք է նաեւ հաշվի առնենք մի շարք հանգամանքներ, որոնք կարելու են եղել հրադադարը պահպանելու համար: Արդյունավետ բուֆերային գոտին, հակառակորդ ուժերի ռազմական հավասարակշռությունը, լուրջ հարված հասցնելու՝ Ադրբեյջանի բանակի ոչ լիարժեք կարողությունը. այս ամենը կողմերի համար կարելու խթան են հանդիսացել հրադադարը պահպանելու հարցում: Իհարկե, այն հանգամանքը, որ այս բոլոր գործոնները կարող են, եւ, ամենայն հավանականությամբ, կփոխվեն, իրավիճակը փխրուն է դարձնում եւ մշտապես հիշեցնում է, որ հրադադարն իր բնույթով ժամանակավոր երեւոյթ է:

Սա ինքնաբերաբար հանգեցնում է հաջորդ հարցին՝ ինչպե՞ս կգարգանա այս՝ «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակը: Մի կողմից՝ բանակցությունները, տարբեր ձեւերով եւ ձեւաչափերով, շարունակվում են արդեն 15 տարի: Կողմերն առնվազն խոսում են միմյանց հետ: Կողմերի հայտարարություններում էլ փոխզիջման գաղափարը հիշատակվում է այնքան հաճախ, որ բավարար է լավատեսության համար: Մյուս կողմից՝ այս բանակցությունները շարունակվում են արդեն 15 երկար ու ծիգ տարիներ, որոնց ընթացքում, կարծես, ամեն ինչ փորձվել է. հինգ լուրջ առաջարկություն է ներկայացվել եւ մերժվել: Այլ խոսքով՝ խնդրի լուծումն առայժմ չի երեւում, ու դարձյալ սա հիշեցնում է այն մասին, որ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը նույնպես իր բնույթով ժամանակավոր երեւոյթ է: Եթե կողմերից մեկը, կամ երկուսը կորցնեն բանակցությունների հետ կապված հույսերը, եւ միաժամանակ զգալի փոփոխությունների ենթարկվեն շփման գծում մինչ այժմ առկա հավասարակշռությունը պահպանող գործոնները, իրավիճակը բոլորի համար վտանգավոր կդառնա:

Իհարկե, ամենաբարդ հարցն է, թե որն է վերջնախաղը, որն է լուծումը:

Երեք հնարավոր սցենար կա: Մեկը՝ ստատուս-քվոյի շարունակությունն ու պահպանումն է: Երկրորդը՝ պատերազմի վերսկսումը եւ նոր իրավիճակի ստեղծումը: Երրորդ տարբերակը՝ բանակցված լուծումն է:

Թեեւ միջազգային հանրությունը, ներառյալ միջնորդներն ու տարբեր դիտորդները, միանգամից կհերքեն առաջին սցենարը, այն համարելով անընդունելի եւ անկայուն, այդ սցենարը պետք չէ բացառել: Բազմաթիվ պատմական օրինակներ կան, երբ երեկվա անիրատեսական թվացող այլընտրանքն այսօր դարձել է նախընտրելի իրականություն: Մեր դեպքում նույնպես պետք չէ բացառել ստատուս-քվոյի պահպանումը՝ որպես լուծում ընկալվելու հնարավորություն:

Երկրորդ սցենարը՝ պատերազմը, դժվար է պատկերացնել: Ոչ միայն ակնհայտ թվացող հանգամանքների, այլեւ այն պատճառով, որ եթե Ադրբեյջանը պատերազմ սկսի, սա կլինի Ադրբեյջանի կողմից պատերազմ սկսելու եւ «վերջնական լուծման» հասնելու երրորդ փորձը: Ես հատուկ եմ գործածում «վերջնական լուծում» եզրը, քանի որ միայն այդպիսի լուծման հանգեցնող պատերազմը կարող է հաղթանակ նշանակել Ադրբեյջանի համար: Այդ իսկ պատճառով պատերազմը մեծ ռիսկեր է պարունակում Ադրբեյջանի համար՝ ավելի մեծ, քան հայկական կողմի համար:

Եվ, վերջապես, կա տեսականորեն եւ իրականում ամենանախընտրելի սցենարը՝ բանակցված լուծումը: Իրատես լինենք. սա նշանակում է հանգել մի փաստաթղթի ստեղծմանը, որը կողմերը պետք է ստորագրեն: Նման փաստաթուղթը պետք է ներառի փոխզիջումներ:

Հայաստանի դիվանագիտության նպատակը պետք է լինի երրորդ սցենարը: Երկարատեւ խաղաղությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կողմերն ընդունեն միմյանց նվազագույն ակնկալիքները եւ ոչ նվազագույն պահանջները: Մինչ դա կարող է տեղի ունենալ, կողմերից յուրաքանչյուրը պետք է կարողանա երկրի ներսում հասնել սեփական բանակցային դիրքերի վերաբերյալ բավարար կոնսենսուսի: Սա դեռեւս տեղի չի ունեցել: Այն նշածողը, որ սահմանում է մեր կողմից փոխզիջման ամենամեծ հնարավորությունը, պետք է շատ հստակ լինի եւ պետք է ապահովի, որ այն պահից, երբ փաստաթուղթը կստորագրվի, մինչեւ այն պահը, երբ բոլոր դրույթները կսկսեն գործել, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի անվտանգությունն ապահովված ու նույնիսկ երաշխավորված լինի:

Այդուհանդերձ, հետապնդելով բանակցված լուծման հասնելու դիվանագիտական նպատակը, որը, կարծում եմ, նաեւ Ադրբեջանի դիվանագիտական նպատակն է, երկու կողմերն էլ մտքում պահում են այն հնարավորությունը, ինչը բանակցողներն անվանում են «լավագույն այլընտրանքը բանակցված համաձայնությանը»: Ադրբեջանի համար նման «այլընտրանք» է պատերազմը: Մեզ համար «այլընտրանք» կարող է լինել այսօրվա ստատուս-քվոն: Այլ կերպ ասած՝ խուսափելով պատերազմից, մենք պետք է օգտվենք մեզ համար հասանելի բոլոր այլ հնարավորություններից: Տեւական խաղաղության հասնելու բոլոր հնարավորություններին հետամուտ լինելուն զուգահեռ՝ մեր դիվանագիտության նպատակը պետք է լինի նաեւ այն, որ ցանկացած պահի մեր բանակցային դիրքերն ավելի շահեկան լինեն: Սա մեր լավագույն պաշտպանությունն է անցանկալի ստիպողական լուծման դեմ:

Պատմությունը բազմաթիվ օրինակներ ունի, ներառյալ՝ Կոսովոն եւ Արեւելյան Թիմորը, երբ միջազգային հանրությունն, ի վերջո, պարտադրեց այդ պահին բանակցային գործընթացում գերիշխող մոտեցումների եւ ընկալումների վրա հիմնված լուծումներ: Հոդվածի սկզբում նշված երկու հարցերը կարելորագույն տեղ են զբաղեցնելու կարգավորման ողջ ընթացքում: Մեր պատասխանները կախված կլինեն այն բանից, թե որքանով ճիշտ մենք կկարողանանք արձագանքել միջազգային հարաբերությունների արագընթաց զարգացումներին, կտրուկ փոփոխվող համաշխարհային միտումներին, ամենատարբեր ներքին-քաղաքական եւ տնտեսական իրողություններին: Պատասխանները նաեւ կախված կլինեն հակամարտող կողմերի դիվանագիտական մոտեցումներից, համոզմունքներից եւ կարողություններից:

Սուբյեկտի դերի կորուստը սպառնալիք է ժողովրդի անվտանգությանը

Մանվել ՍԱՐԳՍՅԱՆ
Երեւան

Համաշխարհային փորձը ցույց է տալիս այն, ինչ կարող է: Զաղաքականապես գրագետ սուբյեկտները գործում են միջազգային շահերին համահունչ: Այլապես, նրանք «փորձաքարի» են վերածվում: Կարելի է պնդել, որ անկախության համար իր պայքարի սկզբնական բոլոր տարիներին Լեռնային Ղարաբաղը գործել է համաշխարհային քաղաքականության ծագող (առաջադեմ) գործընթացներին համահունչ: Համապատասխանաբար, ինչ-որ մի պահից քաղաքական եւ դիվանագիտական սուբյեկտի դերից ԼՂՀ-ի նպատակամիտված զրկումն ամենելին էլ հենց այնպես չի եղել: Սույն հանգամանքը, ինչպես երեւում է, ոչ բոլորն են մինչեւ վերջ հասկանում: Այս

մասին արժե համառոտակի խոսել:

Քաղաքական պատմությամբ հատուկ հետաքրքրվող ցանկացած մասնագետ կամ էլ պարզապես քաղաքագետ ու քաղաքական գործիչ կարող է պնդել հետեւյալ օրինաչափությունը. ինչ-որ տարածքի ինքնուրույն կարգավիճակի հետամուտ ժողովուրդը պարտավոր է քաղաքական դեր ստանձնել միջազգային քաղաքականության մեջ: Ժողովրդի կողմից այս կամ այն պատճառով ինքնուրույն դերի կորուստը նրա պայքարը հանգեցնում է իր տարածքի շուրջ վեճի: Այսինքն, ինչ-որ մի պահի ժողովրդի քաղաքական հիմնախնդիրն արժեգրկվում է արտաքին ազդեցիկ ու շահագրգիռ ուժերի աչքերում հանգում է նրա զբաղեցրած տարածքի հիմնախնդրի: Իսկ ինքը՝ ժողովուրդը, դառնում է ուրիշների որոշումների լեգիտիմացման օբյեկտ է, միաժամանակ, խոչընդոտ-«փորձաքար»՝ վիճարկող կենտրոնների ձգտումների ճանապարհին: Դրան զուգընթաց՝ մեծանում է ժողովրդի ֆիզիկական անվտանգության վրա ոտնձգության հավանականությունը: Ի հետեւանս դրա, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, այդ տարածքների՝ քաղաքական սուբյեկտի դերը կորցրած ժողովուրդներն առավել հաճախ ընդամենը գոհերն են դառնում նույն այդ տարածքների համար մղվող պատերազմի:

Այս առումով նորագույն պատմության մեջ պերճախոս օրինակ է բոսնիացի սերբերի ճակատագիրը: 1993 թվականին, Սերբիայից Բոսնիայի անջատման ժամանակաշրջանում, բոսնիական Կրաինա գավառը սերբական անկլավի էր վերածվել նոր կազմավորման մեջ: Միջազգային հանրության բոլոր առաջարկներն այստեղ մերժվեցին՝ Կրաինան ցանկացավ մնալ Սերբիայի բաղկացուցիչ մաս: Արդյունքն ողբերգական էր՝ Կրաինայի բնակչությունը բռնագաղթվեց: Այս ժողովրդի գործոնը ինքնուրույն իրենից ոչ մի հետաքրքրություն չի ներկայացրել համաշխարհային քաղաքականության մեջ: Հիմնախնդիրը լուծվել է մեխանիկորեն՝ տարածքն առանց բնակչության տրվել է Բոսնիային:

Համանման ողբերգական փորձ ունի նաեւ հայ ժողովուրդը: Ներկայումս հաճախակի կարելի է հանդիպել այն մտքին, որ Թուրքիայում 1915 թվականին հայերի ջարդի պատճառներից մեկն էլ եղել է հենց ժողովրդի կողմից քաղաքական սուբյեկտի դերի կորստի հանգամանքը: Սույն կարծիքի էությունն այն է, որ Օսմանյան կայսրության փլուզման ժամանակաշրջանում արեւմտյան տերությունների աչքերում հայ ազգաբնակչությունն իր անկախության համար պայքարող ժողովրդի կարգավիճակից անցել է Թուրքիայի դեմ Ռուսաստանի ագրեսիային աջակցող հանրույթի կարգավիճակի:

Հետեւանքը երկար սպասեցնել չտվեց. Ռուսաստանի հակառակորդներն անողոքաբար ոչնչացրին այդ ժողովրդին: Այս վարկածը հիմնովին ժխտելը դժվար է. ժողովուրդների ճակատագրերը մեծ չափով միջազգային քաղաքականության արդյունք են:

Համապատասխանաբար, ստիպված ենք ընդունել, որ սեփական իրավունքների համար պայքարող ժողովրդի իրական քաղաքական կարգավիճակը հանդիսանում է ոչ միայն պայքարի նպատակ, այլև նրա ֆիզիկական անվտանգության երաշխիք: Անհրաժեշտ է ունենալ ինքնուրույն քաղաքական արժեք:

Միջազգային քաղաքականության վերոնկարագրյալ տրամաբանությունը, հավանաբար, վատ չգիտեին առաջին ւլիքի հայ քաղաքական գործիչները: Համենայն դեպս, կարելի է պնդել, որ Հայաստանի ու ԼՂՀ-ի ամբողջ դիվանագիտության նետն էն գլխից ուղղված էր մի հարցի լուծման. ԼՂՀ ինքնուրույն դերի ուժեղացում որպես պատերազմի ու դիվանագիտության սուբյեկտ: Անկասկած, սրանում էր դիտարկվում ոչ միայն դեպի հաջողություն տանող ճանապարհը, այլև ԼՂՀ ժողովրդի անկախության երաշխիքը: Ինչ-որ պատճառներից ելնելով՝ 1998 թվականից ի վեր Հայաստանի ղեկավարությունն անտեսել է սույն հանգամանքը եւ ինչ-որ չափով հանրությանը հարմարեցրել է իր սեփական մոտեցմանը: Բայց ժամանակը երկար սպասեցնել չտվեց՝ ԼՂՀ շուրջ մթնոլորտը ոչ այնքան անհոգ երանգներ է ստանում: Եւ սրա պատճառները մի օրում չեն ստեղծվել:

ԼՂՀ գործոնի միջազգային նշանակալիության այսպիսի հետընթացային էվոլյուցիան կարելի էր կանխել: ԼՂՀ ինքնուրույնության ուժեղացման հիմնային պարամետրերը բավականին ուժեղ էին: Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ շփման գծում եւ 1994 թվականի հայ-ադրբեջանական սահմանի ամբողջ երկայնքով հրադադարի ժամանակաշրջանում ԼՂՀ շուրջ միջազգային իրավիճակի ձեւավորման պատմության

ճշգրտությունը տարածաշրջանի ամեն երկրի համար տարբեր է, պաշտպանությանը հատկացվող գումարները վերջին հինգ տարիների ընթացքում պարբերաբար ավելացել են, եւ ամեն երկիր իր սահմանափակ եկամտից եւ ռեսուրսներից գնալով ավելի շատ գումար է հատկացնում պաշտպանության ոլորտին:

Նշմարելի է, որ Ադրբեջանը նախաձեռնել է պաշտպանության բյուջեի կայուն եւ լուրջ աճ, ինչը պայմանավորված է հարստության ներհոսքով Էներգետիկայի բնագավառից: 2004թ. \$175 միլիոնից Ադրբեջանը 2009թ.-ին իր ռազմական բյուջեն հասցրել է \$2.5 միլիարդի: Սակայն, նկատի ունենալով երկրում արմատավորված կոռուպցիան, տարեկան ռազմական բյուջեի աճը չի գուզակցվում լուրջ ներդրումներով զինված ուժերի կատարելագործման եւ վերապատրաստման գործում, ինչպես նաեւ բավարար ժամանակակից զենքեր ձեռք բերելու գործընթացով: Նմանատիպ, բայց կայունության առումով ավելի քիչ աճ է տեղի ունեցել Հայաստանի պաշտպանական ոլորտում, որն ավելի շուտ Ադրբեջանից հետ չմնալու տրամաբանությամբ է արվել:

Տարածաշրջանում ռազմական հավասարակշռության խախտում

Վրաստանում 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո տարածաշրջանում ուժերի բալանսի փոփոխումը դարձավ ակնհայտ՝ այսպիսով ավելի լուրջ մարտահրավերներ նետելով տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանը:

Սպառազինությունների մրցավազքի միտումի լույսի ներքո պաշտպանությանը հատկացվող բյուջետային ծախսերն ավելացան, իսկ վերազինման նոր ալիքի վտանգը ռազմականացման մթնոլորտի պայմաններում նշանակում է, որ տարածաշրջանի ուժերի փխրուն բալանսում ցանկացած փոփոխություն կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ հրադադարի հետագա ապահովմանը: Իսկ այսօր, երբ Լեռնային Ղարաբաղը տարածաշրջանի միակ «սառեցված» հակամարտությունն է, ցանկացած նոր անկայունություն զինված ուժերում սպառնում է տարածաշրջանում հարաբերական խաղաղության ու կայունության ապահովմանը:

Բացի այդ, տարածաշրջանի նման ռազմականացման երկարաժամկետ ազդեցությունը եւս անհանգստության պատճառ է, հատկապես Հայաստանի համար, քանի որ Ադրբեջանն իր նավթային եկամուտներն օգտագործում է էլ ավելի «լիցքավորելու» իր ռազմական բյուջեն: Հայաստանին ամենից շատ անհանգստացնում է Ադրբեջանի մշտական՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ուժային ճանապարհով լուծելու հռետորությունը, որն արդեն մի քանի տարի է՝ ստանում է միլիարդավոր դոլարների հատկացումներ ունեցող բյուջեի աջակցությունը: Ռազմական այդ հռետորության եւ ծախսերի միաձուլումն այսօր ամենալուրջ սպառնալիքն է տարածաշրջանի անվտանգությանն ու կայունությանը:

Եզրակացություն

Այս երկու միտումների առկայության պարագայում հրադադարի ապահովման իրական առանցքը Հայաստանի եւ Ղարաբաղի զինված ուժերն են՝ որպես սթափեցնող հանգամանքներ: Ավելի ստույգ՝ վերջին տասնհինգ տարիների ընթացքում նախկին խորհրդային երկրներից հենց Հայաստանն է մշտապես գնահատվել որպես սթափեցնող ռազմական ուժ ունեցող երկիր: Հայաստանի ռազմական մշակույթը ճանաչվել է բարձրակարգ՝ իր զինվորական ոգով, բարոյահոգեբանական հատկանիշներով, պատրաստվածությամբ, սակայն Ադրբեջանի ռազմական ներուժը պարտադրում է Հայաստանին բավականին լուրջ սպառնալիք, ինչն էլ ենթադրում է արդյունավետ ռազմական բարեփոխումների հրամայական:

Շատ դեպքերում Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը, գերազանցելով Հայաստանի զինված ուժերին, գնահատվում են որպես ավելի արհեստավարժ ու մարտունակ:

Չնայած իր սակավաթվությանը՝ Ղարաբաղի բանակը գտնվում է մշտական բարձր պատրաստվածության վիճակում, ավելի լուրջ եւ տեսական մարտական զորավարժություններ է անցկացնում, քան որեւիցե այլ նախկին խորհրդային բանակ: Սակայն Ղարաբաղի բանակի ամենազգալի առավելությունը բարոյահոգեբանական բարձր որակներն են, որոնք էլ փոխլրացվում են բարձր արհեստավարժությամբ:

Ղարաբաղյան ուժերը նաեւ տարբերում են ինքնաբավության աստիճանով, համեմատաբար լավ կազմակերպվածությամբ ու կարգապահությամբ, բացի այդ՝ բավարար զինված են, մշտապես վերապատրաստվում ու կատարելագործվում են եւ ունեն դեկավար լավ կազմ: Ղարաբաղյան զինված ուժերի մեկ այլ նշմարելի առավելությունն է սպայական անձնակազմի բարձր պատրաստվածությունը:

Ե՛վ որպէս շատ լուրջ հակառակորդ, Ե՛ւ որպէս կայացած ռազմական ուժ՝ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը հանդէս են գալիս որպէս տարածաշրջանային ռազմական հավասարակշռության շատ կարեւոր բաղադրիչ, ԼՂՅ ռազմական ներուժը, միեւնույն ժամանակ, մարտական գործողությունների հնարավոր վերսկսման խափանիչ գործոն է: Ի տարբերություն Յայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի զինված ուժերը շարունակում են մնալ թույլ եւ վատ զինված: Այդուամենայնիվ, չի բացառվում, որ Ադրբեջանը կարող է նոր պատերազմ հրահրել Ղարաբաղը վերադարձնելու համար: Թեեւ, հաշվի առնելով Ադրբեջանի զինված ուժերի ներկայիս տխուր վիճակը, ինչը պայմանավորված է կոռուպցիայով եւ վատ պայմաններով, այս երկիրն առկազը 8-10 տարվա ճանապարհ ունի անցնելու ռազմական լուրջ ուժ դառնալու համար: Այսպէս թե այնպէս, սա վտանգավոր զարգացում է, ինչը Երեւանն ու Ստեփանակերտը պետք է ըստ ամենայնի գիտակցեն եւ բոլոր միջոցները ձեռնարկեն Յայաստանի եւ Ղարաբաղի անվտանգությունն ապահովելու համար, քանի դեռ շատ ուշ չէ: Յայաստանը գերակշռող ռազմական ուժ է տարածաշրջանում, բայց վտանգը կայանում է նրանում, որ այդ գերակշռությունը կարող է ժամանակավոր լինել: Յայաստանը պետք է քայլեր ձեռնարկի եւ արագացնի պաշտպանական ոլորտի բարեփոխումները՝ պատրաստ լինելու համար առաջիկա տասնամյակում ավելի ուժեղ ադրբեջանական բանակի հետ գործ ունենալուն:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա այն չպիտի անտեսի ապագայում վերազինված եւ վերահաստատված Ադրբեջանի՝ հրադադարը խախտելու սպառնալիքները: Համենայն դեպս, որոշ ժամանակով Ղարաբաղն ապահովել է իր անվտանգությունը՝ շնորհիվ սեփական զինված ուժերի բարձր արհեստավարժության ու պատրաստվածության՝ ի տարբերություն Ադրբեջանի զինված ուժերում առկա անմխիթար վիճակի: Ղարաբաղյան զինված ուժերի ամենամեծ առավելությունը, թերեւս, երեւակված է խրամատներով եւ այլ պաշտպանական-ինժեներային ամուր կառույցներով պայմանավորված մարտավարական ոլորտում, ինչը նշանակում է մարտական գործողությունների միջին-տեւական հեռանկարում հուսալի պաշտպանություն:

Բայց տարածաշրջանային կայունության եւ հրադադարի ապահովման, մարտական գործողությունների վերսկսումը կանխելու ավելի ազդեցիկ երաշխիք կարող են լինել Յայաստանի եւ Ղարաբաղի պրոֆեսիոնալ բանակները:

Անգլերենից թարգմանությունը՝ Լ. ՄԿՐՏՉՅԱՆԻ

(Խմբագրության կողմից)

տարընթերցումից խուսափելու համար

կարող եք անգլերեն բնօրինակին

ծանոթանալ մեր կայքի անգլերեն բաժնում)

Ժամանակի գործոնը ղարաբաղյան հակամարտությունում

ՍԵՐԳԵՅ ՄԻՆԱՍՅԱՆ

Երեւան

Խաղաղ կարգավորման հեռանկարների նկատմամբ Յայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի հանրության եւ քաղաքական էլիտայի գործնականում իրարամերժ մոտեցումների եւ փոխգիշումային համաձայնության հասնելու իրական պայմանների, անգամ հույսերի բացակայության պարագայում, արտակարգ իրատապ է դառնում ժամանակի գործոնի ճիշտ գնահատումը՝ ղարաբաղյան հակամարտության

շուրջ տեւական զարգացումների համապատկերին: Ուստի «իսկ ու՛մ օգտին է դարաբաղյան հակամարտությունում աշխատում ժամանակը» քաղաքական եւ միեւնոյն ժամանակ փիլիսոփայական հարցի պատասխանի որոնումներն այն կարելու որ ուղղություններից մեկն են, որոնք առկա են հակամարտության բոլոր կողմերի գաղափարաքաղաքական եւ փորձագիտական-վերլուծական դաշտերում:

Մասնավորապես, Հայաստանի ու Ղարաբաղի հանրության եւ քաղաքական էլիտայի զգալի մասը կարծում է, որ ինքնիշխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (պատերազմում տարած հաղթանակի եւ ԼՂՀ ներկայիս սահմանների առկայությամբ) գոյության յուրաքանչյուր օրն ամրապնդում է հայկական կողմերի բոլոր ձեռքբերումները, հատկապես համանման չճանաչված պետությունների ինքնիշխանության ճանաչման համաշխարհային միտումները եւ այսպես կոչված «կոսովյան նախադեպը» նկատի ունենալով: Նրանց կարծիքով, Ադրբեջանից դուրս Ղարաբաղի գոյության յուրաքանչյուր օրը մերձեցնում է երկրորդ հայկական պետականության ազատ ու անկախ գոյության մեր նպատակների իրականացմանը: Թեեւ հայ հանրությունում կա նաեւ հակառակ տեսակետը, այնուամենայնիվ, այն գերակշռող չէ եւ, ընդամիս, գրեթե բացառապես կիրարկվում է ընդդիմադիր ուժերի կողմից՝ որպէս ներքաղաքական ուղղույթի եւ իշխանության համար պայքարի քարոզչական ռեսուրս Հայաստանում:

Ադրբեջանում, ընդհակառակը, հանրության գրեթե բոլոր շերտերը եւ քաղաքական գրեթե բոլոր ուժերը միանշանակ հուսով են, որ Էներգակիրների վաճառքից ակնկալվող հնարավոր գերշահույթները Բաքվին թույլ կտան ժամանակի ընթացքում հաղթող դուրս գալ ըստ իրենց՝ հայկական կողմերից պարտադրված սպառազինությունների մրցավազքից եւ ուժով հետ բերել Ղարաբաղը, կամ էլ Հայաստանի շարունակվող տնտեսական շրջափակման արդյունքում Երեւանին ու Ստեփանակերտին կստիպեն գնալ միակողմանի զիջումների եւ այդպիսով Ղարաբաղն Ադրբեջանին կվերադարձնեն խաղաղ ճանապարհով: Ադրբեջանի այսպիսի «ղարաբաղյան ռազմավարության» կարելու տարրերից մեկը հանդիսանում էր մարտական գործողությունները վերսկսելու բացահայտ եւ հրապարակային սպառնալիքը՝ ներագդելու համար ինչպէս արեւմտյան տերությունների ու միջազգային կազմակերպությունների, այնպես էլ հայկական կողմերի՝ հակամարտության հոգեբանական ընկալման վրա: Ադրբեջանի դեկավարության ու քաղաքական էլիտային նշյալ քաղաքականությանը լրացուցիչ փաստարկ են հաղորդում նավթային գործոնի դերի չհիմնավորված բարձր ակնկալիքները եւ Հայաստանին ու Ղարաբաղին սպառազինությունների մրցավազքի տնտեսապես հյուժիչ ռիթմ պարտադրելու ցանկությունը: Ադրբեջանի «ղարաբաղյան ռազմավարության» երկրորդ բաղկացուցիչը հանդիսացել է ինչպէս Ադրբեջանի, այնպես էլ Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսական ու հաղորդակցական «շնչարգելման» արշավի շարունակման գաղափարը: Այս գաղափարը փաստորեն հանդիսացել է Ադրբեջանի «ղարաբաղյան ռազմավարության» անկյունաքարը՝ ղարաբաղյան հակամարտության ակտիվ փուլում Երեւանի եւ Ստեփանակերտի հետ Ադրբեջանի դիմակայության ժամանակ: Չնայած այն բանին, որ այս ամբողջ ընթացքում նշյալ ըմբռնումն այդպես էլ չի ապացուցել իր արդյունավետությունը, որի վկայությունն է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից «կիսաշրջափակման» պայմաններում վերջին մի քանի տարիներին Հայաստանի բուռն ու երկնիշ տնտեսական աճը, այդուամենայնիվ՝ Բաքվում մինչեւ վերջին ժամանակներս, հավանաբար, անկեղծորեն հավատում էին դրա կենսունակությանն ու հեռանկարայնությանը:

Կարելի է ասել, որ նշյալ իրավիճակն անշարժ ու առանց առանձնակի փոփոխման մտում էր ընդհուպ մինչեւ 2008թ. օգոստոսին Ռուսաստանի ու Վրաստանի միջեւ Հնգօրյա պատերազմը, որը փոխել է ողջ քաղաքականությունը Հարավային Կովկասում եւ նոր ստատուս-քվո է ստեղծել ոչ միայն ընդհանուր տարածաշրջանային ձեւաչափում, այլեւ կոնկրետ ղարաբաղյան հակամարտության շուրջ: Բացի այդ, կարելուրագույն որոշիչ գործոն է դարձել նաեւ հայ-թուրքական հարաբերություններում նոր դիմամիկան, որ սկսվել է 2008 թ. օգոստոսյան ճգնաժամի հետ գրեթե միաժամանակ եւ մեծամասամբ էլ՝ դրա արդյունքում: 2008թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի նախագահ Ա.Գյուլի «Ֆուտբոլային» այցից հետո հայ-թուրքական «հալոցքի» նկատելի նշանները, որոնք սկզբունքորեն կարող են հանգեցնել դիվանագիտական լիարժեք հարաբերությունների հաստատմանը եւ սահմանների ու հաղորդակցական ուղիների բացմանը, լիովին արժեգրվում են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հետ

քաղաքական դիմակայության՝ պաշտոնական Բաքվի կողմից իրականացվող «շնչարգելման» քաղաքականության այդ կոնցեպտուալ բաղկացուցիչը: Այս մասին է վկայում նաև Հայաստանի, Թուրքիայի ու Շվեյցարիայի արտաքին-քաղաքական գերատեսչությունների ղեկավարների կողմից 2009թ. ապրիլի 22-ին ստորագրված այսպես կոչված «ճանապարհային քարտեզի» նկատմամբ անհամաչափ ռեակցիան Ադրբեյջանի ներսում, որը հանգեցրել է Բաքվի և Անկարայի միջև հարաբերությունների ողջ պատմության ընթացքում ամենաուժեղ ճգնաժամի:

Հարկ է նաև հաշվի առնել ադրբեյջանական հանրային ընկալման մեջ «ռուսական սպառնալիքի» վերակենդանացումը, ինչը Բաքուն երեւակել է՝ ելնելով Հարավային Օսիան վերադարձնելու Վրաստանի անհաջող փորձից և սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում նավթի գների գրեթե եռակի անկումից: Էներգապաշարների վաճառքի հաշվին իր ծախսերի 70 տոկոսն ապահովող Ադրբեյջանի համար դա շատ էական գործոն է նրա ռազմաքաղաքական ղեկավարության սթափեցման համար: Ի դեպ, 2009թ. ռազմական բյուջեում՝ առաջին անգամ 2003թ. ի վեր, հայտարարվել է ռազմական ծախսերի առնվազն 10-տոկոսանոց նվազեցում՝ կապված նավթի գների կտրուկ անկման հետ: Եւ դա առանց նկատի ունենալու 2009 թվականի համար ադրբեյջանական բյուջեի նախատեսած սիկվեստրը, քանի որ այն հաստատվել է անցած տարվա աշնանը՝ բարելի դիմաց մոտավորապես 70 դոլարի մակարդակով նավթագնի հաշվառումով: Նավթի գների անկումը և 2012 թվականից նավթի արդյունահանման կանխատեսվող նվազումը նկատի ունենալով՝ նավթային եկամուտները որպես արդյունավետ ռազմական բարեփոխումներ իրականացնելու և ադրբեյջանական բանակի մարտունակությունը բարձրացնելու ֆինանսական հիմք Բաքվի համար դառնում են երեւութական: Նամանավանդ, Վրաստանում օգոստոսյան պատերազմից հետո կասպիական էներգակիրների փոխադրման ուղիների համար աշխարհաքաղաքական ռիսկերի ուժեղացման պայմաններում (ռազմական գործողությունների ընթացքում ռուսաստանյան օդուժը նույնիսկ երկու հրթիռ է արձակել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի երկայնքով, ճիշտ է՝ չվնասելով բուն նավթամուղը, բայց ի ցույց դնելով դրա խոցելիությունը):

Վերջին տարվա ընթացքում ադրբեյջանական ղեկավարության մոտ «խաղաղասիրական» տրամադրությունների ուժեղացման վրա անդրադարձած մեկ այլ լուրջ հիմնախնդիր է հանդիսանում այս երկրի զինված ուժերում տիրող անմխիթար վիճակը, ինչը մատնանշում են մի շարք անկախ աղբյուրներ: Օրինակ, Միջազգային ճգնաժամային խումբը (ՄՃԽ) 2008թ. հոկտեմբերի 29-ին հրապարակել է «Ադրբեյջան. պաշտպանական հատվածի կառավարումն ու բարեփոխումը» վերտառությամբ համառոտ վերլուծական զեկույց (Policy Briefing): Երկար տարիների ընթացքում առաջին անգամ հրապարակվել է զեկույց Ադրբեյջանի զինված ուժերում տիրող վիճակի մասին, զեկույց, որ պատրաստվել է միջազգային հեղինակավոր կազմակերպության կողմից և հավակնում է անաչառության: Չեկույցն առնվազն երկու նպատակ է հետապնդում. Ադրբեյջանի զինված ուժերում առկա վիճակի բավականին փակ թեմատիկայի ընդհանուր և իրատեսական ակնարկ: Բնականաբար, զեկույցում առանձնակի շեշտադրում է արվել նաև դարաբաղյան թեմատիկայի և հակամարտության գոտում մարտական գործողությունների վերսկսման իրատեսության ուսումնասիրման վրա: Չեկույցում հստակ նշվում է, որ ներկայումս Ղարաբաղում պատերազմը քիչ հավանական է և ցանկալի չէ Ադրբեյջանի ռազմաքաղաքական ղեկավարության համար: ՄՃԽ զեկույցում նաև ընդգծվել է, որ փաստորեն պատերազմական վիճակում գտնվող ադրբեյջանական զինված ուժերում կաշառակերությունը, ոչ կանոնակարգային հարաբերությունները, բռնությունները սպաների կողմից և ծառայության վատ պայմանները հատկապես անտանելի մակարդակի են հասել մերձակատային և սահմանապահ զորամասերում: Ուստի այն զինակոչիկները, ովքեր հնարավորություն ունեն, փողով տեղափոխվում են թիկունքային զորամասեր, կամ էլ գերադասում են ծառայել ներքին զորքերում կամ Ադրբեյջանի այլ ռազմականացված կազմավորումներում: Ելնելով վերոնշյալից, միանգամայն պարզ է դառնում, որ դարաբաղյան հակամարտության գոտում մարտական գործողություններ սկսելու Ադրբեյջանի հնարավորությունները, ի հեճուկս նրա ղեկավարության ամպագոռոռ հայտարարությունների, ներկայումս ավելի քան սահմանափակ են:

Միեւնույն ժամանակ նկատելի է, որ Ադրբեջանը 2009թ. սկսած փորձում է Արեւմուտքում քարոզչական նոր շահաբաժիններ ստանալու նպատակով օգտագործել հայ-ռուսական ռազմական համագործակցության աշխուժացման առիթը: Բայց այստեղ եւս իրավիճակն այնքան էլ պարզ ու միանշանակ չէ: Չնայած Արեւմուտքում առկա եւ ամեն անգամ ավելի ուժգնացող սուբյեկտիվ (երբեմն էլ անտրամաբանական) հակառուսաստանյան կարծրատիպերին՝ Ռուսաստանի դաշնակից եւ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ Յայաստանն Արեւմուտքում երբեք էլ չի դիտարկվել որպէս կովկասյան տարածաշրջանային քաղաքականության բացառապէս ռուսաստանամետ գործոն: Արեւմտյան քաղաքական էլիտայի ընկալումներում Լեռնային Ղարաբաղը երբեք էլ չի դիտարկվել Աբխազիայի, Յարավային Օսիայի եւ Մերձդնեստրի հետ մի շարքում, իսկ Ադրբեջանն էլ երբեք չի դիտարկվել որպէս Կրաստանի պէս միանշանակ արեւմտամետ պետություն, որն արժանի է Արեւմուտքի աջակցությանը: Եւ բանը ԱՄՆ-ում ու Եվրոպայի երկրներում հայկական սփյուռքի գործոնում չէ միայն, կամ էլ հայկական արտաքին-քաղաքական կոմպլեքսնաբանության արդյունավետության մեջ, երբ փորձ է արվում հավասարակշռվել Ռուսաստանի եւ Արեւմուտքի փոխհարաբերություններում: Յարավային Կովկասի գծով ռուսաստանյան լավագույն մասնագետներից մեկի՝ Սերգեյ Մարկեդոնովի դիպուկ բնորոշմամբ. «Եթէ Աբխազիան եւ Յարավային Օսիան Արեւմուտքի համար Կրեմլի մանկլավիկներն են, ապա ԼՂՀ-ն առանձին պատմություն է: Ամենեւին էլ ոչ բոլորի, բայց շատերի համար այն «փոքրիկ, ազատասեր հանրապետություն է, որ մարտահրավեր է նետել ԽՄԿԿ-ին ու կոմունիստական բռնապետությանը»: Ղարաբաղն ընկալվում է որպէս հակակոմունիստական բողոքի մի մասը: Ի դեպ, Կրաստանի ու Մերձբալթիկայի հետ նույն շարքում, թեեւ դա առաջին հայացքից պարադոքսալ է թվում: Իսկ Արեւմուտքում (հատկապէս ԱՄՆ-ում) դա շատ լուրջ փաստարկ է:

Մի կողմից Ադրբեջանի իշխանություններն իրենց երկրում բնակչության շրջանում սրում են ռեանշիստական տրամադրությունները, մյուս կողմից էլ նույն այդ բնակչությանը վախեցնում են հայ-ռուսական ռազմական համագործակցությամբ: Ընդամիս, միգուցե այն մասամբ էլ արդարացված է, քանի որ, ինչպէս հայ քաղաքական վերլուծաբան Դավիթ Պետրոսյանն է ասում՝ «Բաքվում սխալվում են, կարծելով, թէ սպառազինությունների տարածաշրջանային մրցավազք են պարտադրում Յայաստանին. ռազմականացման շարունակման դեպքում Ադրբեջանը ստիպված կլինի մրցավազքի մեջ մտնել Ռուսաստանի, այլ ոչ թէ Յայաստանի հետ»:

Այսպիսին են դարաբաղյան հակամարտության շուրջ նոր իրողությունները, որոնք անդրադառնում են ժամանակի գործոնն իր օգտին օգտագործելու՝ Ադրբեջանի հույսերի վրա, ընդ որում՝ քաղաքական այն հիմնական բաղկացուցիչների արժեզրկման պայմաններում, որոնք տեսակետորեն կարող են տեւական հեռանկարում աշխատել Բաքվի օգտին: Միեւնույն ժամանակ, չնայած վերոբերյալ վերլուծությանը, կարծում ենք, որ իրականում «հակամարտության կողմերից ո՞ր մեկի օգտին է աշխատում ժամանակը» հարցի ամենաստույգ ու միակ պատասխանը գտնվում է ամենեւին էլ ոչ ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական կամ էլ տնտեսական ոլորտներում: Ավելին՝ շատ հնարավոր է, այս հարցի պատասխանն ընդհանրապէս նյութական ոլորտում չէ եւ չի կարող սահմանվել կամ չափվել թվային ցուցանիշներով, քանի որ այն առաջին հերթին կողմերի քաղաքական կամքի եւ բարոյական դիմացկունության հարց է: Ժամանակն աշխատում է կողմերից նրա օգտին, որն ինքն է ներքուստ պատրաստ դիմակայելու ժամանակի տվյալ փորձությանը, պատրաստ է սեփական բանակը մշտական մարտունակության մեջ պահելու համար անհրաժեշտ նյութական բեռը կրելու, տանելու սպառազինությունների մրցավազքի տնտեսական դժվարությունները եւ հանուն վաղվա պատերազմի կանխարգելման զոհելու այսօրվա հնարավոր բարեկեցությունը:

Ամենակարեւորը՝ ժամանակն աշխատում է հակամարտության այն կողմի համար, որը պատրաստ է ամեն օր վճարել ներկայիս ստատուս-քվոյի պահպանման եւ իր համար շահեկան պայմաններով տեւական խաղաղության ապահովման հեռավոր ու երբեմն էլ մշուշոտ թվացող հեռանկարի համար, վճարել իր զինվորների արյամբ, ովքեր ռազմաճակատի գծում պարբերաբար զոհվում են դիպուկահարների կրակից կամ էլ ականների պայթյունից: Այսպիսով, ժամանակի գործոնն աշխատում է կողմերից նրա վրա, որի հանրությունը պատրաստ է նման զոհողության եւ չի գայթակղվում հեշտ

որոշումներով, որի քաղաքական էլիտան կգիտակցի նշյալ գրկանքների ու գոհերի ամբողջ բարդությունն ու, միեւնույն ժամանակ, անխուսափելիությունը հանուն այն բանի, որպեսզի հետագայում՝ այսօրվա համեմատ ավելի վատ պայմաններում մարտական գործողությունների վերսկսման դեպքում ստիպված չլինեն վճարել իրենց զինվորների արդեն ոչ թե տասնյակ, այլ հազարավոր կյանքերով:

Իմ երազած Հայաստանն այս Հայաստանը չէ

Ժիրայր ՍԵՖԻԼՅԱՆ
Երեւան

-Պատերազմի վերջին ամիսներին՝ մինչեւ հրադադարը, շատ ակտիվ պատերազմական գործողություններ էին ընթանում. գրեթե օր չկար, որ ռազմաճակատով մեկ որեւէ տեղ գործողություն չլիներ: Կամ մենք էինք հարձակվում, կամ հակառակորդը: Շատ թե՛ օրեր էին, եւ գոհերի ամենամեծ կորուստը երեւի վերջին այդ 3-4 ամիսներին եղավ՝ հիմնականում հարավ-արեւելյան հատվածում: Կարելի է ասել, որ մեր գործը բավական հյուժված էր, հոգնած էր, սակայն, հակառակորդի հետ համեմատած, մենք ի վիճակի էինք շարունակել:

Հրադադարի լուրը բոլորիս համար ինչ-որ չափով ուրախալի էր, ինչպես ցանկացած զինվորի համար է ուրախալի. այդ օրը նա հիշում է, որ ողջ է մնացել՝ սկսելով մարդկային պարզ զգացողությունից, բայց մեծ հաշվով մենք գոհ չէինք, որովհետեւ շատ մեծ առիթ բաց թողեցինք: Այսինքն, եթե մենք կարողանայինք թեկուզ մի քանի շաբաթ եւս առաջ գնալ, անպայման ստացվելու էր: Մանավանդ, որ պատրաստվել էինք դեպի Միբբաշիրի ուղղությամբ գործողություն կատարել: Դժբախտաբար, վերջին պահին կանգնեցրին այդ ծրագիրը:

Այս իմաստով ամիսսում եմ, որովհետեւ ճիշտ կլիներ մի քանի շաբաթ, նույնիսկ մի քանի ամիս եւս շարունակելիք, եւ ես չեմ կասկածում՝ մենք դրանով մեծ նվաճումներ էինք ունենալու: Չէր բացառվում, որ կկարողանայինք մինչեւ Եվլախ հասնել: Եւ դա արդեն հակառակորդի կապիտուլյացիան կլիներ բառիս բուն իմաստով: Եւ այսօր այս բանավեճերը չէին լինի՝ ի՞նչ զիջենք, ի՞նչ չզիջենք: Երբ որ դու հակառակորդիդ կապիտուլյացիայի ես ենթարկում, քո պայմաններն ես թելադրում արդեն: Այսինքն, վատն այն է, որ այսքան պատերազմելուց հետո, այո, մենք հաղթել ենք, բայց ամբողջությամբ չենք հաղթել: Պատերազմում հաղթում է կողմերից որեւէ մեկը, եթե մյուսին կարողանում է կապիտուլյացիայի ենթարկել: Այդ հնարավորությունը մենք ունեինք, բայց չիրագործեցինք: Այո, մենք բավական հոգնած էինք, միգուցե էլի գոհեր կլինեին, բայց...

-Գուցե այդ պահին դադար տալով՝ օգնեցին, որպեսզի գոնե հնարավորինս կյանքեր փրկվեն:

-Այո, բայց դրանից հետո որ նայում ենք, թե խաղաղ պայմաններում ամեն տարի ինչքան մարդ է մահացել, մանավանդ՝ 96-98-ին... Հիմա շատ ավելի քիչ, որովհետեւ մեր ինժեներական կառույցները գնալով ամրանում են, գնալով ներբանակային կարգապահությունը համեմատաբար նորմալանում է, բայց եթե միայն այս խաղաղ պայմանների գոհերի թիվը վերցնենք ու գումարենք իրար, շատ կգարմանանք, թե ինչքան շատ մարդ է մահացել հրադադարից մինչ այսօր: Ես հիշում եմ՝ 95-ին, 96-ին, 97-ին ամեն տարի առնվազն մի գումարտակի չափ տղաներ զոհվում էին ճակատում: Իսկ եթե մենք կապիտուլյացիայի ենթարկեինք հակառակորդին, այդպես չէր լինի: Այսօր զինադադար չէ, սա զինադադար չէ, սա ժամանակավոր դադար է, որտեղ կողմերը

նույնիսկ չեն հարգում տարրական սկզբունքը, այն է՝ որ կրակել չկա: Դրա համար, եթե ինձ մնար, ապա ճիշտը կլիներ շարունակել, թեկուզ, այո, մեր գինամթերքի, վառելիքի վիճակն այն չէր, բայց այն, ընդհանուր առմամբ, միշտ էլ քիչ է եղել: Ամբողջ հարավ-արևելյան հատվածի ազատագրումը շատ չնչին միջոցներով է եղել: Մեր գինամթերքի եւ տեխնիկայի մեծ մասը մենք միշտ հակառակորդից ենք վերցրել: Ուզում եմ ասել, որ հնարավորությունը կար:

Ես հիշում եմ՝ մայիսյան այդ օրերին մենք գտնվում էինք Մարտակերտի ուղղությամբ՝ Կարմիրավանի մոտ: Ջրաբերդ-Կարմիրավան հատվածը՝ այդ 8 կիլոմետրը, մենք էինք պահել, մենք էինք նաեւ գնացել առաջ, վերջին հարձակումը մենք էինք կատարել, Մովսես Յակոբյանն այն ժամանակ գնդի հրամանատար էր, ինքը ղեկավարում էր տանկային շարասյունը, մենք՝ հետեւակի հետ էինք, Ջրաբերդը միասին էինք ազատագրել: Եւ այդ օրերին մեր դեմ հիմնականում վարձկաններ էին կռվում: Այսինքն, ադրբեջանական բանակ այլեւս գոյություն չուներ: Վերջին շաբաթներին դա շատ հստակ երեւում էր. ուկրաինացիներ, չեչեններ, Աֆղանստանից եկած վարձկաններ. սա համատարած երեւույթ էր արդեն: Սա արդեն հստակ ինֆորմացիա էր, հակառակորդն այլեւս միջոց չուներ, ուժը տվել էր վարձկաններին, իսկ վարձկաններով հարց լուծել չի լինի, որովհետեւ վարձկանը մնում է վարձկան: Ի վերջո, եթե նա տեսնի, որ հակառակորդը մարտնչում է իր հայրենիքի համար, ինքը տեղի է տալու, ինքն ամբողջ հոգով չի կռվելու: Այս փաստը նորից հիշելով՝ ուզում եմ ասել, որ շատ մեծ առիթ մենք բաց թողեցինք:

-Ժիրայր, թեւ ընդունված է ազատամարտիկներին ընկալել որպես հոգեպես շատ ամուր, անսասան, ամեն հարցում ուժեղ անձնավորություններ, այնուամենայնիվ, հիմա էլ շատ ազատամարտիկներ, պատերազմի մասին պատմելիս, հաճախ որոշ դրվագներ ցավով ու արցունքներով են հիշում: Կա՞ր Ձեր կյանքում այդպիսի դրվագ, որ հիմա էլ, այդքան ամուր լինելով, ցավով եւ արցունքներով եք հիշում:

-Արցախյան պատերազմի մասնակցելու առաջին օրերի եւ վերջին օրերի համեմատությունը եթե ես իմ մեջ անցկացնեմ, կարող եմ ասել, որ 90-91- 92-ին ես ավելի շատ էի վախենում, քան 94-ին: Եւ այդ ուժը մեզ գալիս էր այն ընկերներից, ում կորցնում էինք... Ֆիզիկապես: Բոլոր զոհերը, որ մենք ունենում էինք, մեր ընկերներն էին՝ ընկերը, գրուցակիցը, գաղափարակիցը. ամեն իմաստով: Այսինքն, մենք կորցրել ենք այնպիսի մարդկանց, անհատականությունների, որոնց հետ շատ ուժեղ կապ կար, ուստի ցավը շատ ուժեղ էր լինում: Սակայն ամեն մի կորստից հետո ինձ մոտ ավելի ու ավելի ուժեղանալու, հզորանալու զգացումներ էին առաջանում:

-Վրեժխնդրությունի՞ց էր...

-Ոչ: Երբեք: Վրեժխնդրություն իմ մոտ պատանի տարիքում եղել է, երբ որ մենք լսում էինք մեր տատիկներից, թե հայերի հետ ինչպես են վարվել թուրքերը: Արցախյան պատերազմի սկզբնական շրջանում, կարող է, իմ մեջ ինչ-որ չափ եղել է վրեժխնդրության զգացում, բայց արդեն Շուշիի ազատագրման նախօրյակից այդ զգացողությունն իմ միջից դուրս էր եկել, եւ շատ ճիշտ էր՝ պետք է դուրս գար: Յակառակորդի հետ պետք է մարտնչել առանց ատելու, ատելությունը թույլի զգացողություն է, եւ ես այդպես էլ փորձել եմ ազդել իմ շրջապատի վրա: Եւ, առհասարակ, մենք մեզ շատ մարդավարի ենք պահել, հայավարի ենք պահել մարտի դաշտում, երբ մեր ձեռքը գերի է ընկել, մենք երբեք չենք թողել նրանց վրա ձեռք բարձրացնել: Ես նույնիսկ պատերազմի շատ լավ մասնակից տղաներին այդպիսի բաների պատճառով պատժել եմ, շատ խիստ եմ պատժել՝ թե ինչո՞ւ ես ձեռք բարձրացրել գերու վրա, թեկուզ նա թուրք է: Մենք հենց դրանով ենք տարբերվում թուրքերից. հայերի մոտ այդ մարդկայնությունը, ես վստահ եմ, գենետիկորեն մեզ փոխանցվել է: Դժբախտաբար, դաժան դեպքեր էլ են եղել, բայց նորից եմ շեշտում՝ ոչ մեր ջոկատում:

Իսկ քիչ առաջվա միտքս շարունակելով՝ ասեմ, որ ամեն մի նահատակ իզուր չէր գնում, այսինքն ֆիզիկապես գնալով՝ կարծես թե իր ոգին, ոգեղենությունը փոխանցում էր մեզ: Ես այդպես եմ զգացել: Մանավանդ, այդ զգացողությունն իմ մոտ առաջացել է շեշտված ձևով, երբ գոհվեց Ասկուկան՝ Աշոտը, ում հետ մենք շատ մոտիկ ենք եղել: Ասկուկան մի ուրիշ երեւույթ էր՝ ոգեղենության իմաստով: Բայց չգիտես ինչու նրա մահից հետո ես շատ ավելի լավատես, հանդուգն դարձա: Իսկ այդպիսի կորուստներ

շատ եղան, բոլորի անունները չես թվարկի: Եթե դու մասնակից ես մի պատերազմի, որտեղ կամավոր ես, առավել եւս՝ գաղափարական մարդ ես, ապա հնարավոր չէ պատերազմի ավարտին դու ուժեղացած չլինես: Գաղափարական մարդը դժվար օրերին միայն թրծվում է: Ինչպես որ այն ժամանակ, երբ գաղափարական մարդը բանտարկվում է...

Առհասարակ, նեղ օրերը դրական ազդեցություն են թողնում: Ուզում եմ ասել, որ մեզ մոտ, հայ մարտիկների մոտ, հետպատերազմյան սինդրոմ հասկացողությունը չկա: Ի տարբերություն Աֆղանստանից մնացած սինդրոմի՝ սովետական մարտիկների մոտ, կամ վիետնամական պատերազմի սինդրոմի՝ ամերիկյան զինվորների մոտ: այնտեղ մինչև օրս հազարավոր հոգեկան հիվանդ սպաներ ու զինվորներ կան: Տարբերությունը մեկն է՝ նրանք բոլորն էլ իրենց կամքից անկախ են գնացել մասնակցելու պատերազմին, գնացել են նվաճելու ոչ իրենց հայրենի տարածքը: Իսկ երբ որ դու մարտնչում ես քո հայրենի հողը պահելու համար, ապա ինչքան էլ վայրագություն, անմարդկայնություն տեսես պատերազմի դաշտում, դու ոչ մի սինդրոմ էլ չես ունենա: Փաստը մենք ենք, մենք շատ անմարդկային բաներ ենք տեսել, բայց ոչ մեկը մեզ մոտ ոչ մի հոգեկան շեղում չի նկատել:

Կրկնում եմ, քանի որ մենք եղել ենք գաղափարական մարդիկ, այս պատերազմը մեզ միայն հզորացրել է: մեր կորուստը եղել են մեր ընկերները, ովքեր ֆիզիկապես են գնացել: Բայց սրանք կաղապարված խոսքեր չեն, որ տարբեր բեմերից հնչեցնում են տարբեր պաշտոնյաներ: Ես որ ասում եմ՝ բառիս բուն իմաստով եմ ասում, հավատալով եմ ասում, որովհետեւ բացի մարմնից կա հոգի, եւ այդ հոգին մնում է, շարունակում է ներազդել, եթե, անշուշտ, դու քեզ ճիշտ ես պահում: Դեռ այն գնացածների պատգամն ու պարտադրանք է միշտ մեր թիկունքից շշնջում, որ պիտի գործը շարունակենք մինչև վերջ: Եւ ես համարում եմ, որ մենք մեր առաքելությունը դեռ չենք ավարտել: Այսինքն, պատերազմը չի ավարտվել: Որովհետեւ մենք չէինք պատերազմում միայն հող ազատագրելու համար, մենք պատերազմում էինք անկախ հայրենիք ստեղծելու համար, որտեղ մարդը պիտի մարդավարի ապրի: Մենք այդ իմաստով ձախողել ենք, ուստի մեր գործը պիտի շարունակենք դեռ:

-Չրադադարից 15 տարի անց, խաղաղության պայմաններում, մենք ի՞նչ կորուստներ ունեցանք, եւ ի՞նչ ձեռքբերումներ:

-Ձեռքբերումներից առաջինն այն է, որ Հայաստանը, իսկ ես Հայաստան ասելով նկատի ունեմ նաեւ Արցախը, երեւի պատմության մեջ այսքան մաքուր դեռ չի եղել: Այսինքն, այսօր Հայաստանում միատարր հայ բնակչություն է ապրում: Ես սա համարում եմ մեր ամենամեծ ձեռքբերումներից մեկը, որովհետեւ մենք միշտ հայրենիք կորցրել ենք, հակառակորդին տեղ զիջելով, քանի որ հայերն, իրոք, մարդկային են եղել: Մենք խնդիր չենք ունեցել. օտարը, որ եկել է բնակվելու, մենք չենք ասել՝ թողեք-գնացեք մեր երկրից: Բայց դրա դառը պտուղները մենք միշտ վերջում քաղել ենք: Դեռ այս իմաստով ես շատ մեծ նվաճում եմ համարում, որ այսօր ՀՀ ամբողջ տարածքում մենք՝ հայերս ենք ապրում:

Ձեռքբերում եմ համարում նաեւ այն պարտվողական հոգեվիճակի կոտրվելը, ըստ որի հայերս միշտ պարտվել ենք, որ մենք չենք կարող պատերազմել: Այս հոռետեսական միտքն է միշտ իշխել, սա, կարծում եմ, արցախյան ճակատամարտում կարողացանք ուղղել: Այսինքն, հակառակ պատվող անիվը, որ անընդհատ կորցնում էինք՝ 2000 տարի շարունակ, առաջին անգամ մենք կարողացանք հետ շրջել: Ես համոզված եմ, որ եթե կարողանանք այս հոգեվիճակը պահպանել, նվաճումները շարունակվելու են: Իսկ կորցրեցինք մեր երկրի ներսում մարդավարի ապրելու, ճիշտ կենսակերպ ստեղծելու հնարավորությունը, եւ մինչ օրս մենք շարունակում ենք այդ հնարավորությունը կորցնել: Այսօր ոչ ոք մեզ չի խանգարում, որ բարեկեցիկ երկիր կառուցենք, այդ բոլոր դրսի խանգարող հանգամանքները, այդ գլոբալիզացիոն հարձակումները՝ դրանց դիմակայելը շատ հեշտ է:

-Այդ դեպքում ինչո՞ւ չենք կարողանում:

-Որովհետեւ երկրի դեկը գտնվում է անարժանների ձեռքում: Ամեն ազգ իր մեջ ունենում է եւ նվիրյալներ, եւ անարժաններ: Շատ տրամաբանական է, որ նվիրյալները պետք է երկրի քաղաքական դեկը պահեն իրենց ձեռքում: Բայց մեզ մոտ արդեն երկար

տարիներ շարունակ ճիշտ հակառակն է:

-Փիրայր, մենք պատերազմի մասին՝ ընդհանրապես, եւ Շուշիի ազատագրման մասին՝ մասնավորապես, գիտե՞նք ամբողջ ճշմարտությունը: Թե՞ իրական պատմությունն, այնուամենայնիվ, խմբագրվել է:

-Կարծում եմ, որ ամեն ինչ շատ պարզ է: Պարզապես, այսօրվա ռեժիմի քարոզչամեթոդն անպարբերաբար սուտ քարոզչությամբ է զբաղված, բայց, կարծում եմ, ժողովրդի մեծամասնությունը դա գիտակցում է: Անշուշտ, դա նոր սերնդի մոտ ինչ-որ բացասական ազդեցություն ունենում է, բայց ամեն ինչ հստակ է: Ովքեր մասնակցել են՝ բոլորի անունները ժամանակին հրապարակվել են, Կոմանդոսն ինքն է մանրամասն այդ անունները տվել: Քարտեզը կա: Իրականությունը, բարեբախտաբար, ամբողջությամբ կա, իսկ մնացած այդ սուտ քարոզչություններն իրենց ժամանակավոր բացասական ազդեցությունը թողնում են, բայց, մեծ հաշվով, ճշմարտությունն է մնալու:

-Այսօր որո՞նք են արցախյան պատերազմի հերոսի մտահոգությունները՝ մարդկային առումով:

-Ինձ ամենից շատ մտահոգում է նյութապաշտության այս աստիճանը, որ այսօր կա մեր ժողովրդի մոտ: Աշխարհում միշտ էլ եղել է նյութապաշտությունը, բայց մեզ մոտ այսօր այս չափը անտանելի է: Այսպես եթե շարունակվի, ապա մենք, բառիս բուն իմաստով, կործանվելու ենք: Իմ երագած Յայաստանն այս Յայաստանը չէ: Այս կենցաղը, որ կա, սա չէի երագում, այս անբարո մթնոլորտը չէի երագում: Այսօր մենք մեր մայրաքաղաքը եւ երկիրը վերածել ենք Բաբելոնի: Էլ կազինոներ, պոռնկանոցներ, եւ այդպիսի հոռի երեւոյթներ՝ ամեն քայլափոխի: Այսօր ճշմարիտ հայ մարդն իր երեխայի հետ ամաչում է քայլել Երեւանում, այն պաստառները, որ կպցրած են փողոցներում, այն բարքերը, որ կան, եթե երեխան հանկարծ հարցնի, թե սա ի՞նչ է, եւ մատնացույց անի, ասենք, մի պաստառ, որի վրա գրված է «սթրիփթիզ»... Ի՞նչ պիտի ասես: Սա զարգացում չէ, սա տգիտություն է:

-Եւ վերջում ուզում եմ մի շատ ցավոտ թեմայի անդրադառնալ. արցախյան պատերազմի հերոսը, մարդ, որ այդքան բան է արել Արցախի եւ Յայաստանի համար, այսօր չի կարողանում քաղաքացիություն ստանալ՝ ոչ Յայաստանում, ոչ էլ Ղարաբաղում, թեեւ, բնականաբար, գիտեք, որ ժողովուրդը ձեր մեջքին է կանգնած: Ձեր կարծիքն այս ամենի մասին ինչպիսի՞ն է:

-Ես այս հարցը փորձում եմ չանձնավորել եւ այն համարում եմ ազգային խայտառակություն: Եւ, միաժամանակ, դա շատ համահունչ է օրինաչափ է մեր այսօրվան: Դա նաեւ մի ապացույց է մեր ժողովրդի համար, թե ովքեր են այսօր ղեկավարում մեր երկիրը: Այս իմաստով դրական եմ համարում, քանի որ մեր ժողովուրդը սրանով համոզվեց, թե սրանք ովքեր են: Բայց շատ շուտով այստեղ փոփոխություններ կլինեն, եւ ես կստանամ քաղաքացիություն, պարզապես պիտի դիմանալ: Ի՞նչ անել՝ իմ ճակատագիրն էլ սա է:

Յատուկ «Անալիտիկոն»-ի համար հարցազրույցը վարեց Զրիստինե ԽԱՆՈՒՄՅԱՆԸ

Գողացված հաղթանակ

Մարինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երեւան

Ես ապրում եմ Երեւանի Արաբկիր թաղամասում, մեր շենքը վերելից նայում ա Բաղրամյան պողոտային: 1988 թվականի փետրվարն էր, չեմ հիշում ինչի համար դուրս եկա պատշգամբ, ու հենց էդ ժամանակ էլ ականջիս հասավ վանկարկվող բառը՝ Ղա-րա-բաղ: Մութ էր արդեն, էդ օրը ցած չիջա քաղաք: Առավոտյան արթնացա, նորից

դուրս եկա պատշգամբ՝ ամբողջ Բաղրամյանը սեւ էր՝ լցված էր մարդկանցով: Վերարկուս հագա, ցած իջա քաղաք, միացա մարդկանց: Անսովոր տաք փետրվար էր եղ տարի, ձյուն չկար, արեւ էր: Ես ձեռով սկսվեց իմ համար Ղարաբաղյան շարժումը: Համալսարանն ավարտել էի արդեն, բանաստեղծություններիս առաջին շարքը «Գարունում» նոր էր տպագրվել: Ղարաբաղում ոչ մի անգամ չէի եղել, ոչ մի ծանոթ չունեի: Ուրեմն ի՞նչ էր նշանակում իմ համար էդ բառը՝ Ղարաբաղ: Անցյալում կորցրածը ներկայում հետ բերելու հնարավորություն: Կարծում եմ, ամեն հայի մեջ կա կորուստի էս զգացողությունը, համոզումը, որ Հայաստանը կարող էր լինել շատ ավելի մեծ, շատ ավելի ուժեղ, շատ ավելի հարուստ երկիր: Ես զգացողությունը պայթուցիկ լիցք ունի իրա մեջ, դրա համար էլ Ղարաբաղյան շարժումը պայթեց փոթորիկի նման: 21 տարի ա անցել արդեն, բայց էսօրվա պես հիշում եմ. Ազատության հրապարակում՝ ոնց որ վարարած գետի մեջ լինեի, զգում էի՝ գետը տանում ա ինձ, բայց վախ չկար մեջս, ճիշտ հակառակը՝ կար հորդացող երջանկության զգացում: 1988-ի փետրվարին Սովետական Միությունը դեռ կար, դեռ ամուր էր թվում, բայց շատ շուտով, մեր զարմացած աչքերի առաջ, սկսեց փլվել: Հայաստանն անկախացավ: Հետո սկսվեց պատերազմը: Մենք հաղթեցինք: 1994-ին կնքվեց հրադադարի համաձայնագիր: 15 տարի առաջ էր: Ես 15 տարիների ընթացքում մեր հաղթանակը պետք ա ամրապնդվեր ու դառնար անշրջելի: Բայց ուրիշ բան կատարվեց: Տխուր բան: Հաղթանակը մի տեսակ կորավ, անտեսանելի դարձավ: Հաղթանակի զգացողությունը չքացավ: Ղարաբաղ որ գալիս ես՝ ամենից աչքի ընկնող բանը տարածության շատությունն ա ու մարդկանց քչությունը: Անբնական բան կա սրա մեջ: Հաղթանակը չպետք ա բերի ամայություն: Ո՛րք են մարդիկ: Եթե եղել են, ինչո՞ւ են հեռացել: Եթե չեն եղել, ինչո՞ւ չեն գալիս: Երբեմն ասում են՝ ամեն ինչ միանգամից չի լինի, կամաց-կամաց սարքում ենք, տես՝ Ես դպրոցն անցած տարի չկար, հիմա կա, Ես տունը անցած ձմեռ չկար, նոր ա կառուցվել: Բայց ինքնախաբեություն ա դա: Կամաց-կամաց սարքելով բան դուրս չի գա: Կամաց-կամաց սարքելով հաղթանակն անշրջելի չես դարձնի:

Ադրբեջանը մեզանից շատ ավելի մեծ տարածք ունի, շատ ավելի մեծաքանակ բնակչություն: Ադրբեջանն ավելի հարուստ ա՝ նավթ ունի, մենք չունենք: Ուրեմն ո՞նց մենք հաղթեցինք: Շատ պարզ՝ խելքով ու կամքով: Դրանք էլ են ռեսուրս: Դրանք մեր հիմնական ռեսուրսն են: Ու եթե մենք էսօր ինքնավստահ չենք, կորցրել ենք հաղթանակի զգացողությունը, էդ նրանից ա, որ մեր հիմնական ռեսուրսն արդեն չենք կարողանում օգտագործել, ինչ որ բան, շատ կարելոր բան, սխալ ենք անում: Ի վերջո, ի՞նչ ա նշանակում հաղթանակ: Եթե դու հաղթել ես, ուրեմն պետք ա լինես ավելի ինքնավստահ, ավելի երջանիկ, ավելի հարուստ: Եթե չես՝ ուրեմն իրականում չես հաղթել: Իսկ ո՞նց լինել ինքնավստահ, երջանիկ, հարուստ: Միայն հաղթանակի հիշողությամբ: Չէ, չի ստացվի: Միայն անցյալը երջանկության բավարար աղբյուր չի, երջանիկ լինելու համար պետք ա ունենալ համապատասխան ներկա: Հայաստանում մարդկանց մեծ մասն ունի Ես զգացողությունը, որ իրա ներկան չի համապատասխանում իրա տարած հաղթանակին: Ուրեմն շատ կարելոր մի բան սխալ ա, պետք ա փոխվի: Ի՞նչը փոխենք, ո՞նց փոխենք: Ես հարցերի ճիշտ պատասխանը գտնելու համար, տեսականից բացի, պետք ա գործնական քայլեր կատարես: Պետք ա եղածը փոխելու հնարավորություն ունենաս, որ գործողությանդ արդյունքը տեսնես ու համապատասխանաբար կողմնորոշվես՝ կատարածդ փոփոխությունը ճի՞շտ էր, թե՞ սխալ: Եթե արդյունքը լավ էր, ուրեմն շարունակես գնալ բռնածղ ուղղությամբ, եթե լավ չէր, ուրեմն փորձես ուրիշ ուղղություն:

Անցած մեկուկես տասնամյակում Հայաստանի ժողովուրդը, հենց որ ընտրության հնարավորություն ա ունեցել, միշտ փորձել ա կատարել փոփոխություն, բայց իշխանությունները սեփական քաղաքացու դեմ ամեն անգամ հանել են զորք, տանկ, ուժ: Եւ բռնությունն արդարացնելու համար ասել են՝ մենք դեռ բավականաչափ ուժեղ չենք փոփոխություն կատարելու համար, հիմա դրա ժամանակը չի, թշնամին դրանից կօգտվի ու կհարձակվի: Սուտ ա Ես պատճառաբանությունը, դրա մեջ տրամաբանությունը գլխի վրա շուռ ա տված: Թշնամին չի հարձակվում, եթե դիմացինն ավելի ուժեղ ա, իսկ փոփոխությունները մեզ հենց ուժեղ լինելու համար են պետք՝ որ փնտրենք ու գտնենք մեր կյանքը կազմակերպելու ամենաարդյունավետ ձեւը: Եթե մի հայացք գցենք աշխարհի քարտեզին, կտեսնենք, որ մահմեդական երկրները հիմնականում ավելի աղքատ են, քան քրիստոնյա երկրները: Ես հանրահայտ փաստին տրվում ա երկու հիմնական բացատրություն: Առաջին՝ Արեւմուտքը կողոպտում ա մահմեդական աշխարհը ու դրա հաշվին հարստանում: Օսամա բեն Լադենը Ես

կարծիքի ամենահայտնի հետեւորդն ա: Երկրորդ բացատրությունը, որն ինձ ավելի համոզիչ ա թվում, էն ա, որ մահմեդական աշխարհի հետ մնալը քաղաքակրթական առանձնահատկություններով ա պայմանավորված: Մրցակցությունը, բանավեճը, դիսամիզմը մահմեդական աշխարհին հատուկ չեն, դրանք քրիստոնեական աշխարհի հատկանիշներն են: Իսկ հայերս մեր տարածաշրջանում հենց դրանով ենք հայտնի՝ որպես ակտիվ ու դիսամիկ տարր, որի մեջ ամուր նստած ա մրցակցության ոգին: Բայց Յայաստանի ներսում էսօր ազատ մրցակցություն չկա՝ ոչ տնտեսության մեջ, ոչ քաղաքականության: Մարդիկ, որոնց ձեռքում ա խոշոր բիզնեսի եւ իշխանության մոնոպոլիան, փաստորեն քարոզում են միասնության մահմեդական մոդելը՝ «Մոլլան ինչ ասում ա, գնա հետեւից»: Բայց հայաստանցին երբեք չի ընդունի էս մոդելը, եթե պարտադրեցին, ուրեմն ապստամբելու ա էնքան ժամանակ, մինչեւ վերականգնի ազատ որոշումներ կայացնելու սեփական իրավունքը:

1988-ին մենք Սովետական Միության կազմի մեջ էինք մտնում, էսօր ոչ միայն անկախ ենք, այլեւ ունենք երկու հայկական պետություն: Սա ձեւականություն չի, իրական փաստ ա, Յայաստանի ու Ղարաբաղի միջեւ էսօր կա սահման: Երբ որ էս Ստեփանակերտում եմ լինում եւ մարդկանց փորձում եմ պատմել մարտի 1-ի մասին, ասածս սահմանի գոյությունը զգում եմ շատ շոշափելի, համարյա ֆիզիկապես: Որովհետեւ Ղարաբաղում «Յայլուրին» հավատում են: Մինչեւ վերջերս, քանի դեռ չէի եղել Ղարաբաղում, էս «Յայլուրի» տակտիկան լավ չէի հասկանում, մտածում էի՝ ի՞նչ իմաստ ունի էսքան ակնհայտ ստել, չէ՞ որ ամեն ինչ մարդկանց աչքի առաջ ա կատարվում, ականատեսին չես խաբի: Յիմա հասկանում եմ, որ Յ1-ի համար հայաստանցիներս վաղուց արդեն կորած ենք, իշխանական քարոզչամեքենան Ղարաբաղի եւ Սփյուռքի վրա ա աշխատում, որ մեզ հանկարծ օգնության չգան: Ու պետք ա խոստովանել՝ հաջողության հասնում ա. եթե Ստեփանակերտում անցած ձմեռ հասկանային, թե ինչ ա կատարվում Երեւանում, դժվար թե համաձայնեին, որ Ղարաբաղյան սպեցնազն օգտագործվեր հայաստանցիների դեմ:

Բայց ինչ-որ եղել՝ եղել ա արդեն, պետք ա ապագայի մասին մտածել: Ես, իհարկե, հույս չունեմ, թե իմ էս տեքստով կարող եմ հակազդել հեռուստատեսության պես հզոր քարոզչամեքենային: Ուղղակի ուզեցի գոնե «Անալիտիկոնի» ընթերցողներին բացատրել, որ 2008-ի հայաստանյան շարժումը 1988-ի ուղղակի շարունակությունն ա: 88-ին Ղարաբաղցիները որոշեցին ինքնորոշվել, այսինքն որոշեցին, որ իրանք պետք ա որոշեն սեփական ճակատագիրը: Շարժումը սկսվեց Ստեփանակերտում, շարունակվեց Երեւանում: Պատերազմ սկսվեց, պատերազմում մենք հաղթեցինք միասին: Բայց էսօր հայաստանցին չի զգում իրան հաղթած, չի զգում, որ սեփական երկրում ինքն ա տերը, որոշումներ կայացնողը: 2008-ին սկսված ու մինչեւ էսօր շարունակվող նոր շարժման նպատակը որոշումներ կայացնելու հայ մարդու իրավունքը վերականգնելն ա: Յաղթողը չի կարող լինել իրավագուրկ: Եթե հաղթել էս, բայց իրավագուրկ էս, ուրեմն հաղթանակը քեզանից գողացել են:

Յայաստան-Ղարաբաղ-Սփյուռք համագործակցություն

Իշխան ԲԱԲԱԶԱՆՅԱՆ
ԱՄՆ

Յայաստան

Յայաստանի Յանրապետությունը՝ որպես մի երտասարդ, նորաստեղծ պետություն, ծնվեց Սովետական Միության փլուզումից հետո, եւ հիմա ցանկանում է հաղորդակցել իր մշակույթն աշխարհի հետ, համահունչ դարձնել: Մեր պետությունը տարիներ շարունակ եղել է աշխարհագրապես մեկուսացված, ինչպես նաեւ 70 տարի շարունակ

գտնվել է Սովետական Միության իշխանության տակ: Որոշակի գծեր եւ սովորույթներ էին հարկավոր, որպեսզի այն կարողանար հաղթահարել սովետական ռեժիմի սերմանած մտածելակերպը, որը Նորանկախ պետության համար վնասակար է 21-րդ դարում: Մասնավորապես, նկատի ունեմ կաշառակերությունը եւ ինամի-բարեկամական կապերը, որ խանգարում են մեր ազգին. իսկ սրանք գերիշխող երեւույթներ են: Մեր քաղաքական գործիչները պաշտոնների են հասել նաեւ այս երեւույթների շնորհիվ, որոնք նրանց ստիպում են անողոք եւ խորամանկ հակառակորդներ լինել: Նրանք Սփյուռքի ներուժը չեն պահանջում: Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ընթացող ներկայից գործընթացների ձախողումը վառ օրինակ է այն բանի, որ կա պատրաստվածության եւ փորձի պակաս այս քաղաքական խառնաշփոթի մեջ, որն ապացուցվեց այն բանով, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը ԱՄՆ կառավարության կողմից ձախողվեց: Հաշվի առնելով վերը նշվածը՝ մեր քաղաքական լիդերները պետք է լինեն ավելի զգուշավոր եւ զգաստ՝ ղարաբաղյան եւ այլ հարցերում զիջումների վերաբերյալ՝ ներառելով Ղարաբաղի կառավարությունը հետագա բոլոր գործընթացների մեջ: Առանց Ղարաբաղի մասնակցության բոլոր բանակցությունները կլինեն ապարդյուն: Մեր լիդերները պետք է դիմակայեն քաղաքական բոլոր ճնշումներին եւ պետք է մաներեն Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ:

Ղարաբաղ

Ղարաբաղյան ժողովուրդն իր ներկայիս կարգավիճակը ձեռք է բերել բազմաթիվ զոհաբերությունների եւ հերոսական ջանքերի գնով: Ինչեւէ, դեռեւս շատ մարտահրավերներ կան ծառայած այս նորաստեղծ պետության առաջ, որը պետք է ձգտի ճանաչվել ամբողջ աշխարհի կողմից: Ղարաբաղի կառավարությունը պետք է անձնվիրաբար աշխատի բարելավել իր ժողովրդի եւ բանակի ոգին, նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակը եւ նրանց ունակությունը՝ պաշտպանելու իրենց իսկ հայրենիքը: Ղարաբաղը պետք է վճռականորեն պնդի մասնակցելու յուրաքանչյուր բանակցության, որը կվերաբերի իր ճակատագրին եւ չպետք է տեղի տա ոչ մի առաջարկի առաջ, որը կսպառնա իր անվտանգությանը եւ անկախությանը:

Սփյուռք

Սփյուռքը հիմնականում կազմված է ցեղասպանությունը վերապրած հայերից, մարդիկ, ովքեր ստիպված են եղել ապրել իրենց հայրենիքից դուրս: Նրանք տառապանքներ են կրել՝ ձեռք բերելով փորձ Հայաստանից դուրս: Նրանք բազմաթիվ հաջողակ եւ հայրենասեր զավակներ են պարգեւել, որոնք հաղթահարել են բազմաթիվ մարտահրավերներ եւ թշնամական հանգամանքներ: Օրինակ, ANCA-ն (Ամերիկայի Հայ Դատի Հանձնախումբ) մի կազմակերպություն է, որը հետեւողականորեն եւ հաջողությամբ ձգտում է հասնել Հայ Դատի ճանաչմանը: Դժբախտաբար, Հայաստանի կառավարությունը մերժեց Սփյուռքի օժանդակությունը, ունակությունը, մտքերը, արդյունավետությունը՝ սեւեռելով իր ուշադրությունը ֆինանսական օգնությունների վրա («կթու կով» տարբերակով): Հայաստանի կառավարությունը նույնիսկ հուսախաբ արեց բոլորին՝ չընտրելով Հայաստանի արտգործնախարար մեր սփյուռքահայ շրջանակներից, մարդու, ով ավելի շատ բան կհմանար այս ամենի մասին եւ կկարողանար ավելի լավ նույնանալ Սփյուռքի հետ: Բազմաթիվ նոր երկրներ հաջողությամբ իրենց կառավարության անդամների մոտ կենս ընտրում են արտերկրի իրենց հայրենակիցներից:

Եզրակացություն

1. Հայաստանը պետք է արմատախիլ անի կաշառակերությունը եւ բարելավի իր քաղաքացիների սոցիալ-տնտեսական վիճակը: Հայերը պետք է լինեն շատ զգույշ եւ զգոն, որպեսզի չզիջեն Ղարաբաղի անկախությունը եւ անվտանգությունը՝ արտաքին ճնշումների ազդեցության տակ:
2. Ղարաբաղը պետք է մասնակցի յուրաքանչյուր բանակցության, որը կորոշի իր ճակատագիրը եւ չպետք է կուլ գնա արտաքին ազդեցությանը: Այն պետք է պնդի ինքնորոշման սկզբունքի վրա: Ղարաբաղի անկախությունը պետք է լինի

կենտրոնական հարց յուրաքանչյուր բանակցության մեջ:

3. Սփյուռքահայությունը պետք է շարունակի գործակցել իր հայրենիքների (Հայաստան եւ Ղարաբաղ) հետ: Այն պետք է միանա՝ ազգային շահերը գերադասելով անձնական, քաղաքական եւ կրոնական շահերից:

Հողն ի՞նչ ենք անելու

Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գյումրի

Տարեթիվն ու ժամանակը լավ եմ հիշում: 1979-ի գարունն էր: Ստեփան Չատիկյանի ու իր ընկերների՝ երկու մյուս հայերի՝ Հակոբ Ստեփանյանի եւ Չավեն Բաղդասարյանի գնդակահարությունից մի երկու-երեք ամիս հետո էր: Իսկ հիշողությանս մեջ այդ ամենը լավ մնացել է այն պատճառով, որ այդ օրերին ես ունեցել էի մի հանդիպում, որի շնորհիվ տիրապետում էի չափազանց կարելուր եւ նույնքան էլ՝ այն օրերի իմ պատկերացումներով, վտանգավոր մի գաղտնիքի, որի մասին չէի կարող բարձրաձայնել:

Ինչ-որ փաստաթղթեր ստորագրել տալու համար անհրաժեշտ էր հանդիպել Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դոցենտ Գրիգոր Չատիկյանին, որը, ինչպես պարզվեց մեր հանդիպման ավարտին, հանդիսանում էր Ստեփան Չատիկյանի հարազատ եղբայրը: Դոցենտ Չատիկյանը շատ ու շատ հեռու էր այն հարցերից ու գործունեությունից, ինչի համար 1968-72թթ. գաղութներում էր անցկացրել, իսկ հետագայում, 1977-ին բանտարկվել ու 1979-ին գնդակահարվել էր իր եղբայր Ստեփանը: Չեմ կարող բացատրել, թե հատկապես ի՞նչ շարժվեց այն օրերի խորհրդային պատժիչ մամլիչի ամբողջ անողոք հզորությունը տեսած այդ դասախոսի ներսում, ինչո՞վ արժանացա նրա վստահությանը, բայց մեր, զուտ աշխատանքային հարցերի հետ կապված հանդիպման վերջում, իմ առաջին իսկ, բավականին «թույլ» հարցադրմանն ի պատասխան, նա գրեթե ինքնակամ, առանց զգուշանալու, պատմեց Ստեփանի գնդակահարությունից առաջ կայացած իր եւ եղբոր վերջին հանդիպման, այն է՝ իշխանությունների կողմից պարտադրված-թույլատրված տեսակցության մասին: Երեւանում նրանց եկել-տեղեկացրել էին, որ Ստեփանը դատապարտվել է գնդակահարության եւ կազմակերպել էին մի քանի հարազատների մեկնումը Մոսկվա՝ վերջին տեսակցության: Գրիգորը պատմեց, որ տեսակցության ժամանակ Ստեփանը, քաջ գիտակցելով, որ մահապատիժն իրենց եռյակի նկատմամբ անպայմանորեն ի կատար է ածվելու, եղբորը շատ պարզորոշ ու հստակ ասել էր, որ ամբողջ կատարվածի հետ ինքը բացարձակապես ոչ մի առնչություն չունի, որ տվյալ դեպքում ինքը որեւիցե մեղք չի գործել: Ավելի ճիշտ՝ ոչ թե ասել էր, այլ հազիվ էր հասցրել ասել, քանի որ հսկիչներն ու նշանակված թարգմանիչ հայը խստորեն զգուշացրել էին, որ խոսել կարելի է միայն այն մասին, թե «ո՞վ է ծնվել, ո՞վ է մեռել, ո՞վ է ամուսնացել»: Թույլ էին տվել Բրեժնեւի անունով հեռագիր ուղարկել՝ ներման խնդրանքով: Բայց հաջորդ իսկ առավոտ նրանց առաջարկել-ստիպել էին թողնել Մոսկվան:

Այդ հանդիպումից հետո ես ինձ զգում էի սովորական մահկանացուներից թերեւս միակը, ով, բացի՝ եւ ի տարբերություն, 1979-ի հունվարի 31-ի «Իզվեստիա»-յում տպագրված պաշտոնական տեղեկատվությունը ընթերցածներից, տիրապետում էր լրիվ այլ, ոչ պաշտոնական, ինչպես կասեին այսօր՝ ավտերնատիվ մի տեղեկատվության: Այն էլ՝ հենց սկզբնաղբյուրից եկող:

Եվ ահա, նման ռումբը ներսումս, ես հայտնվել էի մի «կոմպանիա»-յում, որին ծառատակային շաբաթօրյակից հետո իր «դաչա»-յում հյուրընկալել էր նախկին կոմերիտական մի այր:

Բոլորը նրան Վիլյամս-ով էին դիմում: Մենք էլ կպահպանենք այդ դիմելածները, չնայած նրան, որ Վիլյամսի իսկական անունն ամենեւին էլ բուրժուական չէր, այլ

ընդհակառակը՝ չափազանց հեղափոխական: Կոմունիստական քառամիասնություն, մարքսիստական մի հանճարաբույլ: Ոչ ավել, ոչ պակաս՝ Վ-Ի-Ու-Լ-Է-Ս-Ս: Մի մասն այն վերծանում էր որպես Վլադիմիր Իլյիչ Ուլյանով-Լենին,- Էնգելս,- Մարքս,- Ստալին: Մի մասն էլ հակված էր Մ տառի տակ տեսնել Մոլոտով անունը: Դրանից, սակայն, ոչինչ չէր փոխվում՝ բոլորի համար ինքը նույն Վիլյամսն էր:

Իր կյանքի կոմերիտական հատվածում սույն այրը շատ պարտաճանաչ ու ակտիվ էր եղել՝ թե՛ գործնական, թե՛ գաղափարական առումով, եւ, երբ եկել էր այդ կազմակերպությանը հրաժեշտ տալու տարիքը, նրան, ի գնահատումն հասարակությանն ու Հայրենիքին մատուցած ծառայությունների, նշանակել էին «կուկլի գործարան», թե «դրոշակի գործարան» տիպի՝ անհասկանալի ու առեղծվածային հիմնարկություններից մեկի տնօրեն: Խորհրդային ժամանակների այն հիմնարկություններից մեկի, որը չգիտես երբ է աշխատում եւ ինչ է արտադրում, բայց մի օր, սովորաբար, այդտեղ կատարված խոշոր յուրացումների առնչությամբ աղմկահարույց մի «գործ է բացվում»: Իսկ այդ բացահայտումների «արանքներում» ընկած ժամանակահատվածներում նման հիմնարկների պետերը սովորաբար աննկատ «մանրից ու յավաշեն», առանց աչքի ընկնելու, եւ, ինչը մեզանում առավել կարեւոր է՝ առանց «կողքից աչք ծակելու», կարողություն են կուտակում՝ «մերել, մաշինա, սիրուհի, դաչա»: Այդ օրերին Վիլյամսը հենց այդ ժամանակահատվածներից մեկի մեջն էր ընկած եւ, պարզ լեզվով ասած, «իրեն լավ էր զգում»:

Մի երկու բաժակից հետո խոսակցությունը կենտրոնացավ այդ օրերին առավել հաճախակի հիշատակվող, ցավոտ ու բոլոր առումներով ողբերգական «Չատիկյանի գործի» շուրջը: Հետո գրույցը ծավալվեց, ընդլայնվեց ու խորացավ եւ շատ շուտով հասավ իր բնական հանգրվանին՝ սկսեցին քննարկել «մեր հողերի հարցը»: Հավաքին ներկա էին նաեւ Վիլյամսի հասակակից-սերնդակիցները՝ մի մասը իր նման տնօրեններ, մի մասն էլ՝ էլ ավելի վերեւ գնացածներ՝ «կուսակցական եւ սովետական ղեկավար աշխատողներ»: Նրանք հույժ գաղտնի՝ «դե, գիտեք, տղերք ջան, ստե-ընտե խոսել պետք չէ», պատմեցին մեզ Չատիկյանի խմբի ձերբակալման օպերատիվ հանգամանքները, նրանց կողմից մոսկովյան մետրոյի պայթեցման գործողության, օրեր անց՝ նաեւ «Կուրսկի վակզալի» պայթեցման փորձի հետ կապված «մանրամասները»: Ինչպես տարիներ հետո պարզվեց՝ պաշտոնական վարկածին լիովին համապատասխան: Հետո, բնականաբար, հետեւեցին գնահատականներն ու եզրակացությունները.

-Ա՛յ մա՛րդ, ի՛նչ ազգ, ի՛նչ Հայրենիք: Դրանք ազգի ամենամեծ թշնամիներն ու դավաճաններն են: Հիմա ռուսները որտեղ մի հայ տեսնեն, որ ոտան տակ տան, մեղք կունենա՞ն:

- Ինչի՞ ես հեռու գնում: Հենա Կրասնոդարսկի կոայում պատասխանը ստացար, էլի: Եվ պատմություն արվեց մետրոյում ահաբեկչական ակցիային հաջորդած՝ ռուսների կողմից Կրասնոդարի երկրամասում իրականացրած պատասխան ակցիայի մասին: Իբր բեռնատարի մի վարորդ, որի ընտանիքը դպրոցական արձակուրդների այդ օրերին մեկնած է եղել Մոսկվա եւ ամբողջ կազմով զոհ է դարձել հայերի կողմից իրականացված ահաբեկչությանը, նստել է իր բեռնատարը, քշել գնացել հարեւան հայաբնակ ավանը եւ այնտեղ «արցունքն աչքերն առած» վրաերթի ենթարկել հայերից ում որ պատահի: Այդ «վենդետային» վերաբերող որեւիցե մեկ այլ աղբյուրի՝ գրավոր, կամ բանավոր, հետագայում այլեւս հանդիպած չկամ: Բայց այն օրերին դա թվաց ճշմարտանման եւ նույնիսկ՝ միանգամայն հասկանալի:

- Հայրենիք սիրողը Հայրենիքին օգուտ կտա, ոչ թե վնաս: Հիմա քո արածի պատճառով որ Հայաստանն էլ, հայությունն էլ Մոսկվայի աչքից ընկան, բացի վնասից, ի՞նչ շահեց հայ ազգը:

- Բա դրա համար էլ մեզ չեն սիրում , էլի:
- Շատ ճիշտ էլ անում են: Իսկ եղ ի՞նչ մի սիրելու բան ենք որ: Ռուսի հացը ուտում ենք, ռուսի հաշվին ապրում ենք, ռուսի թեւի տակ փրկված ու ապահով ծվարել ենք, եղ նույն ռուսի վրա էլ այսօր ռումբ ենք նետում:
- Ասա՛ տո, ճիճու՛, դու ո՞վ ես, ի՞նչ ես, որ Սովետի դեմ ես ելնում, է՛ս համակարգի դեմ ես ելնում: Աշխարհն է դեմը չոքած, իսկ ինչ-որ մի քոսոտ հայ ազգ, այն էլ մի քանի հոգեկան հիվանդ պացանի տեսքով դրան դեմ է ելնում:

- Թուրքի դեմ չեն ելնում, հե՛, որ մի կերպ հլա հասկանանք: Իրեն փրկողի, իրեն պահողի դեմ են ելնում:
- Անկախություն ես քարոզում: Սովետից դուրս եկար, քանի՞ ժամ ես դիմանալու:
- Հո գոռով չի: Խոզի գլուխը խալուն չի մնում, Էլի: Ուզում են ես մնացածիս էլ թուրքը կոչ տա, մարսի եւ դրանով ամեն ինչ մեկընդմիջտ վերջանա:
- Բա՛, ո՛նց թե, տղերքը հող են ուզում: Ասա տո պացան լակոտներ, ի՞նչ հող եք դուք ուզում, ի՞նչ հող ա ձեզ պակասում: Ընկած քաշ եք գալիս խոպաններում, Հայաստանի կեսն էլ էսօր անմշակ է: Տո, մի հլա արեք՝ վեր ընկեք ձեր տանը, ձեր հող ու երկիրը մշակեք-ծաղկեցրեք: Երբ էլ որ հողն արդեն չհերիքեց, նոր հող ուզեք: Մենք էլ ասենք, թե մարդը ճիշտ ա ասում, հող չունենք, էլի:
- Ախպե՛ր, թող չուզողը հենց մեկը ես ըլնեմ: Ասենք՝ Էգուց Էդ հողերը մեզ տվին: Ու ի՞նչ ենք անելու: Ուրախանա՞նք, թե Հայաստանը ոչ թե երեսուն հազար է, այլ, ասենք, հարյուր հազար: Հետո՞: Ո՞վ ա դրանք բեջարելու, ո՞վ ա տիրություն անելու: Մեր ինչի՞ն ա հող պետք: Էդածի ձեռն ենք մոլորել:
- Հետո հին ընկերները սկսեցին հիշել իրենց կոմերիտական երիտասարդության տարիները: Խոսակցությունը ընթանում էր բավականին անկեղծ ձեռով, եւ անհա եկավ հասավ այն դրվագներին, որոնք ամենավաղ էին տարբեր տարիների ապրիլի 24-ի օրվա հետ կապված նրանց կողմից իրականացված հերթապահություններին: Վիլյամսը, որ մոտ երկու մետրանոց նախկին կարգային վոլեյբոլիստ էր, հռչակեցով պատմում էր.
- Բա էս մի ոտից թոփալ փռչոտ նկարչին հիշում՞ եք: Գիշերվա 3-4-ը կըլներ: Ֆռռում ենք, մեկ էլ տենանք՝ Եսի ինչ-որ թռուցիկներ ա կայցնում: Վոլան ուզեց վազել, ասի՝ սպասի, չնկատելու տուր, հլա տենանք Եսի Էլ ինչ ա անելու: Բայց Եսի մեզ տեսել էր ու վազեց մի ծառի հետեւում կուչ Էկավ, պախկվեց: Վստահ, որ մենք իրեն չենք նկատել: Ասի՝ Վով, կամաց գնում ենք դեպի Էդ կողմ, Ես կազյուլը թող ըտեսց էլ մտածի, որ մենք իրեն չենք տեսել: Վովայիս հետ գրուցելով, իր կողմը ըսկի չնայելով, գնում ենք: Բայց ծիծաղս հազիվ եմ պահում: Հենց որ հասանք էս ծառի մոտ, մի հատ «ռեզկի» շուռ Էկա ու սրա վզիցը բռնեցի: Ու մռուլը՝ գետնին: Հո՞ղ ես ուզում, արա՛: Ահա՛ն, դե կեր Էդ հողը, կեր-կշտացի՛: Հիշում եմ, լավ էլ անձրեւ էր Էկել, երեւի մի երկու կիլո ցեխ կուլ տվեց: Ես Վովաս էլ կանգնել ա, ընեսց պաշտոնական, թե՛ եկեք հլա մի պարզենք, թե ի՞նչ է ուզում այս երիտասարդը: Ասի՝ ո՛նց թե ինչ ա ուզում: Հող ա ուզում: Ես էլ կերցնում եմ, որ կշտանա: Ես Վովաս էլ թե՛ մի վեդրո հող էլ հետը դնենք թող տուն տանի՛ տանեցոնց համար, նրանք էլ կարոտ չմնան:

Ավարտելով իր գվարճալի պատմությունը, թե այդ գիշեր ինչ ծաղր ու ծանակի են ենթարկել դրուժինայի շտաբում այդ նիհարակազմ ու խեղանդամ նկարչին ու հետո՝ խղճացել, քացով մի տեղին տալով տուն վռնդել, Վիլյամսն ամփոփեց.

- Իրոք, անհան, ասենք մեզ հող տվին: Ի՞նչ ա ըլնելու որ, ի՞նչ ենք անելու որ: Ծա՛տ, շատ, էս փրչոտը պտի մի անգամ գնա-գա , մի քանի օր ճղճղա, ու հետո նորից ըստեղ՝ Էս կաֆեներում պտի վեր ընկնի: Էհը՛, վերցրեք, վերցրեք: Էկեք խմենք մեր էսօրվա ունեցածի, Է՛ս հող ու ջրի, Է՛ս երկրի կենացը:
- Եվ Է՛ն բանի կենացը,- ավելացրեց Վովան, - որպեսզի, ախպեր, Սովետի ձեռքն էլ մեր գլխից անպակաս ըլնի...

Խոսակցության հենց ամենասկզբից իմ մեջ մի ներքին ծրագիր էր միացված՝ առ այն, որ ոչ մի պարագայում ես իրավունք չունեմ «բաց թողնելու», որ իրականում Ստեփան Չատիկյանն անմեղ է, որ նրան ու մյուս երկու հայերին գնդակահարել են անիրավորեն: Բայց ներսումս կատարվեց լրիվ այլ մի բան: Ինչքան ծավալվում ու խորանում էր խոսակցությունը, այնքան թուլանում եւ, ասես, աստիճանաբար անհետանում էր նախնականորեն ծրագրավորված «տաբու»-ն պահպանելու ստիպողականությունը: Ես արդեն, կարծես, չէի էլ ուզում, որ հայկական այդ եռյակն անմեղ լիներ: Եվ ոչ մի ճիգեր այլեւս պետք չէր գործադրել այն շուրջ-գաղտնիքը պահպանելու համար, քանզի գաղտնիքն ինքը դուրս էր մղվում իմ միջից, հեռանում էր ու անհետանում:

Լիովին գիտակցելով, որ մետրոյի պայթյունի հետեւանքով զոհվել են բացարձակապես անմեղ մարդիկ, որ «տեռորն իր ցանկացած դրսեւորմամբ դատապարտելի է», եւ հենց այդ դրույթը մատնացույց անելով է խորհրդային դատարանը գնդակահարել մեր 25-30 տարեկան հայրենակիցներին, ես, լսելով այդ կոմսոմոլ-կոմունիստների դատողությունները,- մեղքս խոստովանում եմ,- ավելի ու ավելի էի ցանկանում, որ այդ «տեռակտ»-ը իրականացրած լինեն հենց հայերը: Այդ թվերին դրսից մեկ-մեկ հասնում էին կցկտուր տեղեկություններ, ասենք՝ «ԱՍԱԼԱ»-ի կողմից իրականացրած գործողությունների մասին: Ոչ բանական, բնագոյային ասեմ, թե ենթագիտակցական,

չգիտեմ, բայց պարզորոշ մի ցանկություն էր առաջ գալիս, որպեսզի արձանագրվի, հաստատվի, որ հենց հայերը չեն վախենում նաեւ այս հզորագույն պետական մեքենայից, որ հայերն իրոք կարող են դեմ գնալ նույնիսկ Սովետին՝ հանուն իրենց ազգային նպատակների: Այն Սովետին, որի առջեւ, իրականում էլ, չոքած էր աշխարհը: Եվ այդ ձեւով՝ լուռ, մտովի, ես բանավիճում էի կոմունիստ ընկերների հետ ու ներքուստ էլ պատասխանում նրանց. «Դուք հիմա ինչ ուզում եք ասեք, բայց փաստը կատարված է: Հայերը Սովետին հասցրել են շատ ցավալի ապտակ: Հենց ձեր ձեռակերպմամբ ասած, այդ ապտակով իսկ փշրվեց Սովետի դեմ՝ սեփական ազգային նպատակներին հասնելու համար պայքարելու անհնարինությունն առասպելը»:

Բայց մի հարց, համենայնդեպս, մնաց օդում կախված: Եվ իմ կողմից, այդ լուռ բանավեճի մեջ, թեեւ ներքուստ, բայց, միեւնույն է, մնաց անպատասխան: Դա Վիլյամսի կողմից հնչեցրած այն անիծյալ հարցն էր. «Ահան, ասենք մեզ հող տվին: Ի՞նչ ա ըլնելու որ, ի՞նչ ենք անելու որ»...

Իսկ հետո, ընդամենը մեկ տասնամյակ անց՝ անսասան, հավերժ ու անմահ թվացող Սովետ -ը սկսեց արագորեն քանդվել: «Վիլյամսը & K» չափազանց թույլ դիմադրություն ցուցաբերեցին Սովետ-ի ձեռքն իրենց գլխից անպակաս պահելու համար: Չհաշված երկու շատ կարճատև «ռենեսանս»: Մեկը՝ 1988-1989-ի ձմեռ-գարունը, երբ մեզ մոտ Մոսկվայի կողմից իրականացվեցին մի շարք՝ սկզբում անհասկանալի, իսկ ինչպես հետո պարզվեց՝ լրիվ հասկանալի, այն է՝ Հայաստանում իշխանափոխությունը նախապատրաստող ձեռքակալումներ, մյուսը՝ ԳԿԶՊ-ի օրերը, երբ գրեթե բոլոր հրաժարական տված կոմունիստներն իրար հերթ չտալով նորից վազեցին անդամավճարներ մուծելու: Ի վերջո, բոլորի նման մենք էլ անկախացանք: Մենք ներքաշվեցինք տասնամյակների ընթացքում հասունացող եւ բռնկվելու համար միայն հարմար առիթին սպասող անխուսափելի պատերազմի մեջ, որում մեր ձեռք ու ոտքը չկապեցին, մուրճով էլ գլխներին չտվին: Մեզ թողեցին հակառակորդի հետ մեն-մենակ եւ, դրանով էլ իսկ, մեզ հաջողվեց (գուցեեւ թույլատրվեց) այդ պատերազմում հաղթել եւ Ադրբեյջանի ձեռքից վերցնել տասներկու հազար քառակուսի կիլոմետր տարածք: Ինչպես եւ ցանկացած պատերազմում, ի հայտ եկան հերոսներ, մեծի մասամբ՝ պատերազմի աննկատ, բայց անխոնջ մշակներ: Ի հայտ եկավ նաեւ «ազգի տականքը»՝ ինչպես ցանկացած երկրում, ցանկացած պատերազմի ժամանակ: Այդ պատերազմը յուրահատուկ էր նրանով, որ միմյանց հետ մարտնչում-չափվում էին ռեզուլյար բանակ չունեցող երկու նորանկախ, կարելի է ասել՝ բացի դրոշ- գինանշանից ու օրհներգից, պետության ոչ մի այլ իրական խորհրդանիշ չունեցող երկու երկրներ: Բացառությամբ վերջին մի քանի ամիսների, այդ պատերազմը ոչ այնքան երկու պետությունների, նրանց տնտեսական ներուժերի եւ ռեսուրսների պատերազմ էր, որքան որ երկու ազգերի, այդ պահին՝ հրապարակ իջած նրանց ոգու պատերազմն էր դիմացինի հետ: Վերջին հաշվով, երկու կողմից էլ միմյանց դեմ էին կանգնած, հիմնականում, կամավորները: Եվ այդ պատերազմում մենք հաղթեցինք: Եվ ազգովի բարձրացանք- հայտնվեցինք լրիվ մեկ այլ հարթության վրա: Բարձրացանք մի քանի առումներով. նախ՝ հանեցինք մեր միջից բնազդային, գրեթե կենդանականի հասնող՝ թուրքի հանդեպ ունեցած անհույս սարսափը, եւ՝ ինչը մեզ համար չափազանց անսովոր էր, տարածքային որոշ կորուստներ կրելով հանդերձ, թշնամու ձեռքից մենք կարողացանք վերցնել ավելի շատ տարածքներ, քան ինքը՝ մեզանից:

Հայտնվելով այդ մեծ, համընդհանուր հաղթանակի ծովում, ես շտապում էի տոնել նաեւ իմ անձնական, լոկալ հաղթանակը, պատասխանը տալ ու վերջապես ազատվել տարիներ շարունակ կոտրված նետածայրի պես մեջս խրված, հանգիստ չտվող անիծյալ այն հարցից. «Ահան, ասենք մեզ հող տվին: Ի՞նչ ա ըլնելու որ, ի՞նչ ենք անելու որ»: Բայց, պարզվեց, որ իրոք շտապում եմ, ժամանակից առաջ եմ ընկնում:

... Պատերազմի արդյունքում Ադրբեյջանից վերցրած տասներկու հազարից ութ հազարը, որը շրջապատում է նախկինում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ կոչվող չորս հազարը, մինչ օրս, հենց մեզանում, դեռեւս չունի իր հստակ ու միարժեք սահմանումը. վերադարձված տարածքներ, գրավյալ տարածքներ, վերահսկվող տարածքներ, ազատագրված տարածքներ, մեր պատմական տարածքներ, անվտանգության գոտի, կենսապահովման գոտի եւ էլ ի՞նչ որ խելքդ սեղմի: Դա այդպես է, որովհետեւ հենց մեզանում՝ այդ հողերը՝ պատերազմից տասնհինգ տարի անց էլ, մեր ձեռքում ունենալով, դեռեւս չկա, հենց մեր կողմից բացակայում է այդ տարածքների միարժեք ու որոշակի ընկալման հստակ դրսեւորումը:

Պատերազմի դասերի հետ մեկտեղ հետպատերազմյան տարիները մեզ, ցավոք սրտի,

մատուցանեցին նաեւ մեկ այլ, եւ շատ դառն իրողություն: Պարզվեց, որ պատերազմն այս կյանքում ամենեւին էլ ամենադժվար ու ամենասարսափելի բանը չէ: Պարզվեց, որ եթե անցած պատերազմի շնորհիվ մենք կարողացանք հանել-վանել մեր միջից վախը օտար թշնամու հանդեպ, ապա մեր մեջ դեռեւս շատ ամուր նստած են երկյուղն ու անվճռականությունը մեր սեփական՝ «հարազատ» ու «տնական» դեսպոտների հանդեպ: Պարզվեց, որ հայ տղամարդու համար ավելի հեշտ է միայնակ դուրս գալ թշնամու տանկին ընդառաջ, քան հակադրվել ոտքը կորցրած հաշմանկամից փող շորթող պետական կառույցում բույն դրած մի սրիկայի: Որ մենք հանդուրժում ենք, թույլ ենք տալիս սեփական երկիրն ու սեփական ժողովրդին՝ այն է, հենց մեզ, բացարձակ անօրեն ու անբարո պայմաններում պահելը: Թույլ ենք տալիս ոչ թե օտար զավթչին, ասպատակողին, այլ սեփական՝ մեծ ու փոքր տրամաչափի առաջնորդներին: Մեծի մասամբ՝ հենց մեր հանցավոր, ինքնասպան լոյալության շնորհիվ աճող-ծաղկող Զաջ Նազարներին: Լինի դա Հայաստանի Հանրապետությունում, թե Արցախում: Հասկանալի է, որ մեր կողմից ընտրված նման ապրելաձեւ-վարքագիծը չէր կարող իր հետքը չթողնել նաեւ անցած պատերազմի արդյունքների ամրագրման քաղաքական գործընթացների վրա: Ի՞նչ գրավյալ, առավել եւս, ի՞նչ ազատագրված տարածքներ: Այսօր Լույսիսկ նախկին ԼՂԻՄ-ն է արդեն դրանց հետ միախառնված՝ հողովվում հենց մեր կողմից որպես մի ընդհանուր վիճելի տարածքային հարց: Այսինքն՝ շատ բնականոն ձեւով, անկախ նրանից, թե մեզ համար ինչ էլք է ունեցել պատերազմը, մենք հերթական անգամ՝ մեր ոտքով, մեր կամքով ու ցանկությամբ, եկանք ու կանգնեցինք այդքան ծանոթ եւ այդքան՝ խիստ հայկական բնույթ ունեցող հարցի առաջ. հերթական անգամ հողեր զիջելու՞ ենք, թե՞ ոչ: Ընդ որում, խոշոր հաշվով, ոչ մեկն էլ չի պահանջում, առավել եւս՝ ստիպում մեզ այդ հողերը վերադարձնել: Չգիտես ինչու, հենց մենք ենք շատ պատրաստակամ ու «ջոմարդ» դարձել այդ հարցում՝ հանդես գալով Լույսիսկ ոչ թե ուժի դեմ ընկրկողի, այլ հակառակը՝ առաջարկողի, հոժարակամ հանձնվողի ու զիջողի դերում: Լույսիսկ հեշտացնում ենք հարցը դիմացի կողմի համար: Օրինակ, տաս-տասնհինգ տարիների ընթացքում այդքան մեծ դժվարությամբ. տուն առ տուն բնակեցրած Լաչին-Զաջաթաղն ընդամենը ամիսների ընթացքում կորցրեց բնակչության մոտ կեսը: Երկու կարծիք լինել չի կարող՝ դատախազությունից հեռացված եւ որպես փոխհատուցում նահանգապետ նշանակված ապիկար մի անձի «շնորհիվ»:

Հանդուրժեցինք, մարսեցինք: Ու ոչ ոք էլ պատասխան չտվեց: Դե, իհարկե, Լաչինը մեզ ի՞նչ:

Եկեք մի պահ, ինչպես ասում են, կողքի դնենք գերտերությունների խաղերն ու շահերը, տարածաշրջանային զարգացումները, սիոնիստներին ու մասոններին, ռուսներին ու թուրքերին, մեզ սիրողներին ու չսիրողներին, համամարդկային գլոբալ հարցերն ու «օբյեկտիվ» արտաքին այլ գործոնները եւ ուղղակիորեն՝ նախ ինքներս մեզ, մեր ողջ ազգին, տանք շատ սովորական մի հարց. «Ի՞նչ է հայի համար իրենից ներկայացնում բուն ՀՈՂ հասկացողությունը»: Հայրենիք, պետություն՞, բնակչության մի վաճիր, գերեզմանատուն՞, թալանի տիրու՞յթ, բիզնեսի տարա՞ծք, դաստակերտ-ագարա՞կ, հանդ-արոտավա՞յր... Թե՞ պարզապես մի ֆետիշ, որը պարտադիր-սպեկուլյատիվ ձեւով հիշատակվում ու պահանջվում է, երբ նա հեռու է ու չկա, եւ դառնում է բեռ-գլխացավանք, որից ժամ առաջ՝ ամեն գնով ձգտում են ազատվել, երբ այն հանկարծ հայտնվում է արդեն քո ձեռքում: Լույսիսկ, եթե ձեռք են բերել սեփական արյան գնով: Այն տպավորությունն է այսօր, որ հարյուրամյակների ընթացքում հիվանդ ու ընկճված երեւակայությամբ ստեղծված սին այդ ֆետիշն այն աստիճան դուրս է մղել մեր գիտակցությունից իրականության զգացողությունը, որ մենք ազգովին արդեն, կարծես, չենք էլ գիտակցում ամբողջ խորությամբ, թե մեզ համար իրականում ի՞նչ մասշտաբի աղետ է թաքնված «տարածքների վերադարձ» ասվածի տակ: Գուցե ժամանակն է արդեն ձերբազատվել ոչ մի պատասխանատվություն չենթադրող հողապաշտություն-ֆետիշիզմից եւ վերջապես կանգնել՝ տիրոջ պատասխանատվությամբ, սեփական հողի վրա: Հակառակ դեպքում...

Հակառակ դեպքում կունենանք այն իրականությունը, որ կոմունիստ Վիլյամսի կողմից հնչեցրած անխճալ այն հարցին, թե «Ահան, ասենք մեզ հող տվին: Ի՞նչ ա ըլնելու որ, ի՞նչ ենք անելու որ», այսօր, հարցադրումից երեսուն տարի անց, շահած պատերազմից հետո, մեր ազգի կողմից պատասխանը, կարծես թե, վերջապես, գտնված է.

- Հետ ենք տալու, Վիլյամս ջան: Հետ ենք տալու: Դու միանգամայն ճիշտ էիր: Հողն ի՞նչ ենք անելու:

Պարզապես ժամանակին նման համոզմունքի չեն եղել եւ հարցի վերաբերյալ լրիվ այլ կարծիք ու մոտեցումներ են ունեցել Ստեփան Չատիկյանը, Հակոբ Ստեփանյանն ու Չավեն Բաղդասարյանը...

Բավ չի՞ բաժնեք մեր հայրենիք

Աշխարհում չի եղել եւ չի էլ կարող լինել ազգ, ժողովուրդ, պետություն, հասարակություն եւ, առհասարակ, սոցիալական մի միջավայր, որտեղ չխոսվի, չշոշափվի, իսկ շատ հաճախ՝ նաեւ չհարկավորվի միասնականության գաղափարը: Անկախ նրանից, թե զարգացածության ի՞նչ աստիճանի վրա է գտնվում տվյալ մարդկային զանգվածը, նրա միասնականությունը հզորագույն, թերեւս անզերագանցելի մի ուժ է: Միասնականորեն ու միահամուռ մի ժողովուրդ խաչել սովեց Աստծո որդուն, իսկ բազում այլ ժողովուրդներ արդեն երկու հազար տարի է երկրպագում են նրան՝ միասնական ու միահամուռ: Գերմանացի ժողովուրդը միասնական ու միահամուռ խարույկ նետեց մյուս ազգերի եւ իր սեփական դասականներին: Փոխարենը պաշտեց ֆյուրերին, նրա հետ՝ միասնական ու միահամուռ, հասավ ազգային աղետի ամենավերջին աստիճանին: Այսօր էլ՝ միասնական ու միահամուռ դատապարտում ու մերժում է նացիզմը որպես քաղաքական կատեգորիա: Միասնականության ու պառակտված լինելու թեմաներով ամբողջ աշխարհի, ամբողջ մարդկության համար ուսանելիության առումով քրեստոմատիկ բնույթի օրինակներ ինչքան ուզեք հնարավոր է բերել: Բայց ուրիշինը մեզ ի՞նչ: Իսկ ո՞ր դեպքում ենք մենք միահամուռ ու միասնական:

Մեզանում, մինչեւ երրորդ հազարամյակի նախաշեմն ընկած պատմական ժամանակահատվածում, ազգային միասնականության գազաթնակետային դրսեւորում, ինչի շնորհիվ հասել ենք բարոյական եւ ոչ բարոյական (իմա՝ իրական) հաղթանակների, որպես դասական օրինակներ մատնանշվում են, համապատասխանաբար, Ավարայրն ու Սարդարապատը: Զունենալով եւ ոչ մի մտադրություն, առավել եւս՝ հավակնություն վիճարկելու մասնագետների հետ ինչ-ինչ հարցեր, նշենք միայն, որ մեր՝ շարքային ընթերցողի, կամ էլ ունկնդրի մոտ տպավորություն է ստեղծվում, թե սեփական պատմության մյուս բոլոր հատվածները հայերն անց են կացրել քրոնիկ պառակտված վիճակում:

Կա արմատացած եւ շատերի մտքում հիմնավորված մի կարծիք, որ հայերն ամենից շատ այս աշխարհի վրա սիրում են հարսանիք եւ թաղում: Վերջինը՝ թաղումը, առավելս եւ հատկապես: Ասում են՝ նույնիսկ հանճարեղ Հովսեփ Օրբելին ժամանակին ասել է, որ եթե հայերն ամեն հարցում ցուցաբերեին այնպիսի համախմբվածություն, միասնականություն ու կազմակերպվածություն, ինչպիսին ցուցաբերվում են նրանց կողմից թաղումների ժամանակ, աշխարհում հայերից հզոր ազգ էլ չէր լինի: Տո ի՞նչ ակադեմիկոս, ի՞նչ արեւելագետ: Այդ մասին շատ պարզորոշ այսօր խոսվում է արդեն նույնիսկ հեռուստատեսկրանից՝ մեր հայրենական սիրված սերիալների սիրված հերոսների շուրթերով: Իսկ դրանից դենը մեզանում ավելի բարձր ճշմարտություն հո գոյություն չունի...

Աստծո կողմից ստեղծված այս աշխարհիս երեսին չկա մի հանելուկ, չկա մի առեղծված, որ շուտ թե ուշ չբացահայտվի ու չբացատրվի: Ինչպես, օրինակ, ժամանակին բացահայտվեց Լեւոն Տեր-Պետրոսյանի մամլո խոսնակի դաշնակցական լինելը, կամ էլ, ի վերջո, գրեթե նույն ժամանակներում, իր գիտական մեկնաբանումն ստացավ բերմուղյան եռանկյունու աղետաբեր գաղտնիքը: Գիտությունը տանելի բացատրություններ գտավ անձ-անհատի, ընտանիքի անդամների, սեռերի ու խմբերի, ցեղերի ու ազգերի վարքագծում տեղ գտած նրբերանգների ու նույնիսկ անոմալիաների դրսեւորման դրդապատճառների համար: Բայց լինի այդ գիտությունը հոգեվերլուծություն, կամ էլ Էթնոհոգեբանություն, միեւնույն է, դա ուրիշի համար է, մեր

համար չէ: Մեր ցանկացած վարքագիծ, ցանկացած երեւոյթ ու գործընթաց մեզանում, բնական է՝ բացասական, ունի իր անհերքելի բացատրություն-արդարացումը. «Բա ի՞նչ եք ուզում, յոթ հարյուր տարի (այլ տվյալներով՝ հազար, եւ նույնիսկ հազար հինգ հարյուր տարի) պետականություն չենք ունեցել»: Ելնելով խիստ էմպիրիկ տվյալների վրա խարսխված գիտական այս դրույթից, հեշտությամբ կարելի է բացատրել արդեն նաեւ հայերիս այդ սերը «առ հարսանիք եւ մեռելոց»: Եվ ոչ միայն դրանք:

Ամեն ինչ պարզից էլ պարզ է. հարյուրամյակներ շարունակ մեր քաղաքակրթված խեղճ ու կրակ ազգը ստիպված է եղել ապրել վայրագ եւ բարբարոս օտարների դաժան լծի տակ: Չավթիչների կողմից չեն թույլատրվել ոչ մի տեսակի հավաքներ: Խոսքն այստեղ գնում է, իհարկե, լեզալ հավաքների մասին: Անլեզալ հայկական հավաքները լրիվ այլ՝ առանձնակի ու շատ բարդ, հատուկ խոսակցության մի խնդիր է (որպես ներածական նյութ ի խնդրո առարկա, չէր խանգարի ընթերցել «Ընկ.Փանջունին»):

Չարսանիքն ու թաղումը հայոց ընկճված պատմության ամբողջ ընթացքում եղել են այն միակ արարողությունները, որտեղ, զավթիչ-տիրակալի ամենատեսական ներքո, հնարավոր էր առանց երկյուղելու, առանց գաղտնապահության ու ծածկանունների, փոքրիշատե զգալի քանակով իրար գլխի հավաքվել, գոնե մի կարճ ժամանակահատվածում միասին ուրախանալ կամ տխրել, քեզ զգալ ընդհանուրի մի մաս:

Այս պարագայում հեշտությամբ բացատրվում է նաեւ առանձնակի հակումն ու սերը «առ մեռելոց»: Չարսանիքը, վերջին հաշվով, ուրախություն է, խրախճանք: Եվ օտարները կարող էին մեկ-մեկ նաեւ միջամտել դրան, սահմանափակել այն, իսկ որոշ դեպքերում էլ՝ նույնիսկ խանգարել: Այլ բան է թաղումը: Չավաքվեք ինչքան ուզում եք, որքան ուզում եք: Ո՞ր զավթիչն իրեն թույլ կտա խանգարել-հարամել իր նոքարի հուղարկավորության ծեսն ու արարողությունը: Միջամտել նրա ցավ ու կսկիծին: Կատարեք ձեր թաղումն՝ ազատ ու հանգիստ, անկաշկանդ նշեք յոթն ու քառասունը, մյուս տաղավարները: Ի՞նչ կարիք կա, օրինակ, որ կրկնվի հանկարծ 1965-ի ապրիլի 24-ը: Կկառուցեն համալիր, կկանգնեցնեն կարմիր թելկապներով դրուժինսիկների, որոնց «...արագացրեք, մի կանգնեք, արագացրեք...» ահեղ ու արհամարական հրահանգների ներքո բազմաչարչար հայ ժողովուրդը կուղորդվի զանգվածաբար ծաղիկներ դնելու: Բնականաբար, նման պայմաններում միասնականությունն ու կազմակերպվածությունը սգո առիթով ավելի հզոր էին լինելու եւ ավելի տեսական, քան հարսանիքի առիթով: Եվ մեկը չավարտած՝ սրտատրոփ սպասելու էին արդեն միասնականության դրսեւորման հաջորդ նման մի առիթի:

Նույն գիտական դրույթից ելնելով, առանց մեծ դժվարության հնարավոր է դառնում բացատրել նաեւ մեկ այլ, զուտ հայկական, ավելի ճիշտ՝ առաջադեմ սովետահայ մտավորականությանը պատած մի հակում, մի տենդ: Որի անունն է ԽԱԸ: 1970-ականների կեսերին գիտությունների մի դոկտոր ամենայն լրջությամբ բացատրում էր, բնականաբար՝ խաշի սեղանի շուրջ, որ պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդին միավորել ու պահպանել է եկեղեցին: Սակայն, քանի որ խորհրդային կարգերի օրոք եկեղեցին ամբողջությամբ գտնվում էր ԿԳԲ-ի հսկողության տակ, ապա հայ ազգի համար, համենայնդեպս՝ Խորհրդային Չայաստանում հաստատ, որպես ազգային կոնսոլիդացնող, սոսնձող գործոն այժմ հանդես է գալիս ոչ ավել, ոչ պակաս ԽԱԸԸ: «Խաշային» հավաքներին վերագրվում էր արդեն ոչ միայն մնացած «գորշ հասարակությունից առանձնանալու» միջոց ու հնարավորություն, կամ էլ այլախոհական-հակասովետական երանգ: Ո՞չ: Այդ կիսալեզալ-խորհրդավոր գունազարդում ստացած հավաքները հետզհետե ստանում էին նացիոնալիստական, ազգային-ազատագրական եւ նույնիսկ՝ դրանց միջոցով հայ ազատ ու անկախ պետականության վերականգման գործընթացի սիմվոլիկա: Գրեթե՝ հայ ազգային այլընտրանք համաշխարհական մասոնական օթյակների հանդես: Երեւի դա էր պատճառը, որ երբ սկսվեց «պերեստրոյկան», վրացիների, կիրգիզների, նույնիսկ նենեցների կողմից դարակներից հանվեցին եւ տպագրության հանձնվեցին նախորդ տարիներին գրված ու հասկանալի պատճառներով չհրատարակված բազմաթիվ գործեր, իսկ ճահճացման տարիների մեր ընդհատակյա գրական գոհարներից էին, եթե հիշում եք, խաշի մուտքի աբոնեմենտները:

Եթե հարսանիքի կամ թաղման մասնակցությունը տարեկան կարող էր լինել ընդամենը մեկ-երկու անգամ, նախաձեռնողն էլ դու չէիր, ապա լրիվ այլ բան է խաշը: Սեպտեմբերից մինչեւ ապրիլ ամիսները այն «թույլատրված է օրենքով»,

կազմակերպել էլ դժվար չէ, ծախսն էլ շատ չէ: Ամռան ամիսներին էլ խաշի համար կարելի է ստեղծել համապատասխան պայմաններ: Միանգամայն հասկանալի է, որ ոչ հանուն մանր եւ ունայն որկրամոլության, այլ՝ հանուն ազգանվեր հավաքի: Հայտնի են դեպքեր, երբ մայիս-հունիսին հայերը խաշը տարել-կերել են Մայմեխի դեռ ձնածածկ գագաթին, իսկ հուլիս-օգոստոսին՝ խաշի դազանով իջել են քսան մետր խորությամբ ստորգետնյա մի անձավ: Ի՞նչ դժվարությունների չէս գնա հանուն ազգային գաղափարների: Բաղձալի նպատակին հասնելուց՝ պետական անկախության վերականգնումից հետո, խաշային հավաքներն իրենց քաղաքական նշանակությունը, միեւնույն է, չկորցրեցին: ՀՀԾ-ի կառավարման առաջին ամիսներն ու մեկ-երկու տարին նշանավորվեցին նախեւառաջ նրանով, որ ամեն կիրակի պարտադիր կերպով կազմակերպության վարչության կողմից իրականացվում էր հայոց համազգային խաշակերություն: Հավանաբար, դրանով կոմպենսացվում էր տղաների որոշ մասի մոտ Սովետի թվերին առաջացած խաշային դեֆիցիտը: Հետագայում անկախ Հայաստանն իր զավակների համար ստեղծեց անհրաժեշտ բոլոր պայմանները՝ կլոր տարին անարգելք ու ազատ խաշ ճաշակելու համար: Այդ նպատակով Արագածի կատարին կառուցվեց եւ գործում է՝ ի հեճուկս տարվա եղանակներին, համազգային ամառային խաշարանը:

Արագածը աստղերի մեջ, խաշ-սխտորի թասը ձեռքին,
Օղու գավաթն՝ ամպերեն վեր, Ձեզ է կանչում ամռան շոգին:
Ի դեպ, տարիներ անց, 1990-ականների կեսերին, երբ հանդիպեցի «խաշակերությունը՝ որպես հայ պետականության վերականգման միակ ճանապարհ» տեսակետի այն հեղինակին եւ ակնարկեցի, որ այսօր, պետականության կայացման գործընթացում, նա ընդունել է ճամփեզրից դիտողի ու մեկնաբանողի փուլ կեցվածք, նա ամենայն լրջությամբ, իսկական մտավորականին բնորոշ կուռ տրամաբանությամբ հակադարձեց մոտավորապես հետեւյալը.
- Պետությունը դա ժամանակավոր, մի խումբ մարդկանց շահերն սպասարկելու նպատակով արհեստականորեն ստեղծած մի գոյացում է, շուտ թե ուշ քանդման ենթակա մի համակարգ: Այնպես որ, իմաստ չունի ջանք թափել նման համակարգի ամրապնդման համար: Այլ բան է ԱՉԳԸ: Նա է մնայուն կատեգորիա: Մեր պատմությունն էլ ցույց է տվել, որ մեր ժողովուրդը ճիշտ ուղու վրա է միշտ եղել. պահպանելով հավերժականը՝ ազգը, ազգային ոգին, այլ ոչ թե թուլեականը՝ պետությունը, պետական գաղափարախոսությունը»:
Եվ քաշեց եզրագիծը. «Ու՞ր են այսօր շումբերները, ասորիները, հռոմեացիք, եգիպտացիք: Չկան: Որովհետեւ պետության պոչը բռնեցին: Ու անհետացան իրենց պետությունների հետ միասին: Իսկ մենք կանք: Եվ կլինենք: Ի՞նչ կարելու է, թե որտեղ: Բայց հաստատ կլինենք»:

Տեսանելի անցյալում կատարած դիտարկումներն ու մերօրյա կենդանի շփումները հաստատում են, որ բոլոր նշված հավաքների ժամանակ այս կամ այն կերպ, բայց պարտադիր, խմվել է ու խմվում է մեր Հայրենիքի, մեր հող ու ջրի, մեր ազգի, մեր ժողովրդի կենացը: Ազգի ու ժողովրդի մասով ամեն ինչ պարզ է. դա մենք ենք ու ախպարները: Վերջին քսան տարում էլ ավելացան նաեւ դարաբաղցիք:
Անհասկանալի շիլաշփոթ է՝ Հայրենիքի, հողուջրի հատվածով: Աշխարհագրական ու տարածքային այդ խառնաշփոթն ու անորոշությունը սողոսկել-թափանցել է նույնիսկ մեր պետական օրհներգի մեջ: «Մեր Հայրենիք»: Ո՞րն է, բաբո՛, մեր Հայրենիք: Տիգրան Մեծի՞ Հայրենիքը, թե՞ «Աշխարհացույց»-ի Հայրենիքը, կորուսյա՞լ Հայրենիքը, թե՞ վիրտուալ Հայրենիքը, ծննդավա՞յր Հայրենիքը, թե՞ հանգստավայր Հայրենիքը, Սեւրի՞ պայմանագրի սահմաններով Հայրենիքը, թե՞ Կարսի պայմանագրի սահմաններով Հայրենիքը, մեզանից խլվա՞ծ Հայրենիքը, թե՞ մեր կողմից գիջված Հայրենիքը: Երեւի թե՛ ճիշտ կլինի այդ կենացը խմել «փուլային տարբերակով»՝ նշելով այդ Հայրենիքի երեքհարյուր հազարից մինչեւ երեսուն հազար քառակուսի կիլոմետր հասնելու ամբողջ ուղին, նշելով փուլ առ փուլ. «...թե ինչպես կորավ հայ ազգի գահը»: Առավել եւս, որ ամեն մի փուլի ու տարածքի համար էլ՝ Կիլիկիայից մինչեւ Գետաշեն, իր երգ-ողբամատյանը կա:

Ընդհանուր առմամբ ասած, մինչեւ 1994թ. մայիսը «մեր Հայրենիք» գաղափարի բացատրման առումով զուտ հայկական տեսանկյունից վիճակը ինչ-որ չափով տանելի էր. մեզ կոտորել են, մեր հողերը մեզանից խլել են, բայց այդ տարածքները, միեւնույնն է, մեր Հայրենիքը հայտարարել մեզ ոչ ոք չի խանգարում: Չհաշված օտարի, լավագույն

դեպքում, քմծիծաղը, եթե այդ մասին մեզանից դուրս մի տեղ բարձրաձայնում ենք: Կենացային այդ տեսանկյունից չափազանց անհարմար՝ գրեթե ֆորս-մաժորային իրավիճակ է ստեղծվում այսօրվա իրողությունների պատճառով: Արցախյան պատերազմի արդյունքում մեզ համար գենետիկ սովորություն դարձած կորուստների հետ մեկտեղ, կատարվեց մեզ համար շատ անսովոր մի բան. մեր ձեռքն է անցել երեսուն հազարանոց երկրի մեկ երրորդից ավելին տարածք: Եվ հայտնվել են մոլորության մեջ. այդ տասներկու հազար քառակուսու կենացը պե՞տք է խմվի, թե՞ ոչ: Դա մեր Յայրենի՞քն է, թե՞ ոչ: Առավել եւս, որ օրվան բանախոս՝ երկրիդ Պաշտպանության Նախարարը ժամանակին պարզորոշ հայտարարեց, թե «... հո Աղղա՞մն էլ մեր Յայրենիքը չէ»:

Օտարի ձեռքում գտնվող այն մնացած երկու հարյուր յոթանասուն հազարի հարցը լուծված է, քանզի՝ «Սասուն, Մուշն ու Վանը՝ հայկական հող են»: Ո՞վ, նույնիսկ այդ հողերի այսօրվա իրական տերը, որը չի էլ թաքցնում, որ իր իսկական Յայրենիքը Ալթայն է, կարող է հակաճառել: Քանզի քաջ գիտակցում է, որ անհամաձայնության դեպքում կհետեւի անեղ եւ կործանիչ պատասխանը. «Իստամբուլը պիտի դառնա արյան ծով»: Հաշվի առնելով մեր անցած պատմական ուղին, մեզանում ձեւավորված պատկերացումները իրական Յայրենիքի վերաբերյալ, այսօրվա այդ տասներկու հազարը՝ մնացած այն երկու հարյուր հազար յոթանասունի նման կդառնան մեր իսկական՝ կենացի արժանի Յայրենիքը միայն այն դեպքում, եթե դրանք էլ հայաթափվեն եւ անցնեն օտարի լծի տակ: Այսինքն, նույնպես հայտնվեն Սասուն-Մուշ-Վանի կարգավիճակում: Պատկերացնում եք, թե ի՞նչ լացացնող կենացներ ի հայտ կգան, ի՞նչ ծավալապաշտական պահանջատիրության ասպարեզ կբացվի խեղճ հայուն համար:

Հիմա կասեք, թե, չհասկացանք, բա ու՞ր մնացին այն ամենագոր, ամեն ինչ բացատրող դրույթը, այն մեռելն ու հարսանիքը: Այստեղ է, կա եւ լավ էլ ամեն ինչ բացատրում է: Բարոյական հաղթանակները թողնենք հանգիստ, զի՝ զանոնք ազգային բացարձակ, անձեռնմխելի եւ անքննելի արժեքներն են հայուն համար: Անդրադառնանք ավելի հողեղեն, պարզունակ եւ բուլորի, նաեւ օտարների համար հասկանալի եւ ըմբռնելի դեպքերին: 1918 թվի գարունը դա հարսանիք էր՝ համազգային խրախճանք-հարսանիք. մենք ազգովին վեր կացանք, ցուցաբերեցինք միասնականություն եւ կանգնեցրինք մեզ վերջնականորեն հռչակելու պատրաստ թշնամուն: 1920 թվի աշունը՝ թաղում էր: Հերթը եկավ արդեն՝ բնական է, նույնպես խիստ միասնական ու միահամուռ կարգով, թողնելու այն խրամատներն ու դիրքերը, որ գրավել էինք 1918-ի գարնանը: Եվ քանի որ սգո արարողությունը մեզանում անցնում է ավելի մարդաշատ ու ավելի կազմակերպված, արդյունքն էլ եղավ այն, ինչ որ եղավ:

Արցախյան պատերազմը հարսանիք էր: Հարսանիք էր բառացիորեն: Ամենագոր նախախնամության թելադրանքով Շուշիի ազատագրման օպերացիային տրվեց «ՀԱՐԱՍԱՆԻՔ ՍԱՐԵՐՈՒՄ» անվանումը: Բայց խրախճանքն, ավաղ, եղավ կարճատև: Երբ ժամանակը եկավ՝ ամեն ինչից էլ մեզանից շատ ու շատ անգամ առավել լավատեղյակ աշխարհին տալ փոքրիշատե հողաբաշխ բացատրություն մեր կատարածի համար, մենք ընդունեցինք գողության մեջ տեղում բռնված, իրեն ինչ-որ մի պահ ազատ պատկերացրած, ազատ մարդուն վայել արարքներ կատարած, բայց այժմ այդ ամենն իրեն անհասու համարող ստրուկին վայել մի կեցվածք. «հիմա ստացվել է, ի՞նչ անենք, անպայման հետ կտանք»: Ի՞նչ է, իրո՞ք հիմա եկել է արդեն հաջորդ՝ նեկո-արարողության հերթը: Որտեղ, ինչպես պատմությունը քանիցս ցույց է տվել, մենք միշտ ավելի միահամուռ ենք եղել ու միասնական: Կարս քաղաքը մեզ օրինակ: Եվ նույնիսկ՝ աղ ու հացով: Ալեքսյուր մեզ օրինակ: Դե, իհարկե: Քսան տարվա պետականությունը հայի համար արդեն շատ շատ է: Հոգնեցուցիչ է ու ձանձրալի:

Մանրապատումներ

Արմեն ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ստեփանակերտ

ԱՄԵՆԱՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԸ...

Նայում էի 93-94թթ. թերթերի հավաքածուն: Պատերազմի ժամանակ գրված ամփոփագրերի համառոտ ու չոր տվյալների հետեւում մարդկային ճակատագրեր են՝ ջարդված, խեղված, հաշմված մարդկային հոգիներ: Այրիներ, որդեկորույս մայրեր, որբեր, որոնց համար այս աշխարհի վայելքներն ուրիշ տեսք ու գույն ունեն, ուրիշ համ ու հոտ:

Տարօրինակ բան է մարդ արարածը՝ նա ժամանակ ունի ավերելու, ջարդելու, սպանելու, քաղաքականությամբ զբաղվելու, անգամ ամփոփագրեր կազմելու զոհերի ու վիրավորների թվի վերաբերյալ: Սակայն ժամանակ ու ցանկություն չունի կերտելու սեփական երջանկությունը: Պատերազմը խլեց մեր երջանկության համար տրամադրված ժամանակի մի մասը՝ վճարելով մեզ արյամբ ու արցունքներով: ... Ինչքա՞ն ժամանակ է պետք, որպեսզի մեր հոգիներից ջնջվեն պատերազմի հետքերի ամփոփագրերը...

ՄԱՐԴԱՎՅԻՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՆԵՐ ԶՈՒՆԻ...

Լրագրող ծանոթներիցս մեկը տեղեկացրեց, որ ոմն քիչ հայտնի գրող տեղեկություններ է հավաքում՝ պատերազմի մասին գիրք գրելու նպատակով: Չարմանում եմ, ինչպե՞ս կարելի է գրել մի բանի մասին, որը չես տեսել, չես շոշափել, չես զգացել սեփական կաշվի վրա: Դա նույն է, թե արվեստագետը դիմանկար-կտավ ստեղծի առանց բնորդի: ...Մարդկային երեակայությունը սահմաններ չունի: Բայց ինչպե՞ս կարելի է երեակայել պատերազմը՝ իր ողջ բարդությամբ, ռազմական տեսարաններով, քաղաքական խարդավանքների բազմերանգ գույներով, անհամեմատելի ծանր տարողությամբ ու աննկարագրելի այլանդակությամբ: Թող ինձ ների գրչեղբայրս, բայց ոչ բոլորն իրավունք ունեն գրելու պատերազմի մասին...

ԴԱԺԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուրիս մեջ նստած է ե՛լ մարդը, ե՛լ մարդասպանը: Խաղաղության ու պատերազմի տարիների միջեւ եղած տարբերությունն այն է, որ մարդասպան լինելու մասին հիշողությունը մեզ ավելի շատ հալածում է խաղաղության ժամանակ, որովհետեւ պատերազմի տարիների օրենքները, խաղաղության տարիներին ապրող մարդու համար, անբարոյական են: Պատերազմի մասին հիշողությունը շատ ավելի երկար է, քան՝ ինքը պատերազմը, ու թողնում է ավելի խոր սպիներ (նաեւ՝ սերունդների հոգեւոր ու բարոյական նկարագրի վրա): Դաժան հիշողություն... որ հալածել ու դեռ հալածելու է մեզ պեսներին մինչեւ մահ:

ՄԱՐԴԻԿ ԶԵՆ ԼՍՈՒՄ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԻՆ

Պլատոնն այն կարծիքին էր, որ հասարակության եվոլյուցիայի ընթացքում մարդկային միտքը միշտ ընթանում է ավելի առջեւից, քան ինքը՝ մարդը: Այդ դեպքում բնագոյի՞, թե՞ մտքի ծնունդ են պատերազմները: Այբեր Զամյուն պնդում է, թե «երկրների քաղաքականությունը եւ մարդկանց ճակատագրերը միշտ գտնվում են անհատների ձեռքին, որոնք զուրկ են իդեալից եւ առաքինությունից»: Այս դեպքում, մտածող մարդկության մեծ մասը ինչո՞ւ է հանդուրժում, որ իրենց ճակատագիրը տնօրինեն առաքինությունից զուրկ անհատները: ... Մարդիկ չեն լսում իմաստուններին, եթե լսեին, ապա բանականությունը եւ բնագոյն իր մեջ կրող մարդը չէր կանգնի ինքն իրեն ոչնչացնելու արդեն իրական փաստի առջեւ:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅ

Ղարաբաղյան շարժման լարված օրերն էին, Մոսկվայից եկած մտավորականների հետ հանդիպում էր Ստեփանակերտի դահլիճներից մեկում: Ելույթ ունեցավ ուկրաինացի բանաստեղծ Բորիս Օլեյնիկը: Հիմնական ասելիքն այն էր, որ արցախցիներիս պայքարն առավել շատ սոցիալ-տնտեսական բնույթ ունի, այլ ոչ թե անկախության ու ազատության հարց է:

Պատասխան ելույթի ժամանակ Ավետիս Գրիգորյանն ասաց. «Իսկ մի՞թե տարբեր համ ունեն ազատությունը եւ հացը...»:

ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Ինչպես բոլոր պատերազմների, այնպես էլ մեր պատերազմի ժամանակ նահատակվեցին լավագույնները:

... Այս ճշմարտությունը գիտենք բոլորս, ու զարմանում ենք, թե ինչո՞ւ է գնալով՝ կյանքը դաժանանում, իսկ բնությունն արհավիրքներ տեղում աշխարհի վրա: Ամենայն հավանականությամբ, խախտվում է բնության ու տիեզերքի փոխազդեցության բնական օրենքը: Այս իրողությունը կանխազգում ենք բոլորս ու չենք խոստովանում, որովհետեւ ամենքս ունենք մեր բաժին մեղքը...

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Դառն է գիտության արմատը, բայց քաղցր է նրա պտուղը»: Այս եզրակացական ասացվածքը 5000-ից ավելի տարեկան է:

Գիտությունը մարդուն, իրոք, դարձնում է իմաստուն, հասուն: Մարդը ճանաչում է կյանքն ու աշխարհը: Սա ճշմարիտ է: Բայց ոչինչ մարդուն այնքան իմաստուն ու իմաստասեր չի դարձնում, ինչպես պատերազմը:

Նրանք, ովքեր տեսել են պատերազմը, ժամանակից շուտ են հասունանում: Բայց երեւոյթն այս ունի եւ իր բացասական կողմը: Մանկությունը խառնվում է պատանեկությանը, պատանեկությունը՝ երիտասարդությանը, երիտասարդությունը՝ հասունությանը, հասունությունը՝ ծերությանը: Այսինքն՝ մենք մի սերունդ շուտ ենք «ծերանում», առաջ ենք անցնում ժամանակից, իսկ ժամանակից առաջ անցնելը միշտ էլ հղի է վտանգներով: Դուք տեսե՞լ եք, թե ինչպես է փետրվարյան տաք օրերին երբեմն ծաղկում ծիրանին, իսկ երբ նորից օրերը ցրտում են, ցրտահարվում են ծաղիկ ու պտուղը:

... Դառն է պատերազմի տված գիտության եւ իմաստության արմատը, ինչպես նաեւ նրա պտուղը: Սա է պատերազմի փիլիսոփայության հիմնական օրենքը: Ամեն ինչ աշխարհում ծնվում է սիրուց, սիրո հիմքի վրա, իսկ պատերազմները ծնվում են ատելությունից: Սա է պատերազմի էվոլյուցիայի ողջ պատմությունը:

ԻՐԱՐ ՎԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԻ՛ ԱՐԵՔ...

Մարտակերտի շրջանի գյուղերի ազատագրման համար մղված մարտերում զոհվեցին տասնյակ տղաներ: Նրանց մի մասը ընտանիքի տեր մարդիկ էին: Մի օր գումարտակի շտաբի պետ Արզամ Հարությունյանն ասաց.

- Պատերազմից հետո կանգնելու ենք դառը փաստի առաջ. պետք է պատասխան տանք բոլորի ծնողներին, այրիներին, զավակներին: Ինչպե՞ս ենք նայելու նրանց աչքերին՝ կենդանի մնացածներս: Կա՞ մի միջոց, որով հևարավոր է լինելու մեղմել նրանց ցավը: Ամենաձանր ու դաժան ողբերգությունը դեռ չոքելու է բոլորիս դռանը: Հիմա դեռ «տաք» ենք, այս մի վերքը հետո է մոմալու...

... Արզամ Հարությունյանը մասնակցել էր բազմաթիվ մարտերի: Չոհվեց ականի պայթյունից, 1994 թվականի մարտի 8-ին, ողբերգականորեն:

Կենդանի մնացածներս ի՞նչ ենք անում հարազատներ կորցրածների ցավը կիսելու համար: Իսկ կա՞ մեկը, որ հարազատ չի կորցրել: Ամեն օր, քնելուց առաջ, մտածեք այդ մասին ու իրար վատություն մի՛ արեք:

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Պատերազմը եւ կռվելուն դատապարտված լինելու զգացողությունը բոլորիս դարձրեց մի բռունցք, մի մարմին, մի հոգի:

Խաղաղությունը եւ բարեկեցիկ ապրելու ցանկությունը տարանջատեց բոլորիս՝ ազգը բաժանելով հարյուրավոր կուսակցությունների, միությունների, ընկերությունների, աղանդավորական խմբերի:

Որպիսի՞ անհեթեթ հակադրություն: Մարդկային բանականության հանդեպ որչա՞փ արհամարհանք է թաքնված այս հակադրության մեջ, երբ գիտակցում ես մտածող մարդու արարքների դրդապատճառները: Կենդանական աշխարհի եւ մտածող մարդու գոյաբանության առանցքը, պարզվում է, անցնում է միեւնույն հորիզոնականով, եթե բացակայում է միտքը, տվյալ դեպքում՝ ազգային միասնության գաղափարը: Մեր ժողովրդի ողջ պատմության ընթացքում այդ գաղափարն առկայծել է ճակատագրական պահերին: Այդ կայծը հավերժական կրակ դարձնելու համար դեռ քանի՞ սերունդ պիտի տառապի, կամ ինչքա՞ն ժամանակ է պետք, որպեսզի ազգը գիտակցի Պրոմեթեոսի առասպելի ողջ գաղափարական իմաստը:

Մեր փրկության բոլոր ճանապարհների «Յոռմը»՝ ազգային միասնության գաղափարն է: Իսկ պատերազմը եւ խաղաղությունը հարաբերական հասկացություններ են՝ կախյալ նույն գաղափարից: Մի՞թե նոր Արքիմեդ է պետք, որպեսզի «Եվրիկա» գոռա, եւ մենք հասկանանք այս ամենը, ապրենք հավերժական արժեքի՝ գաղափարի գիտակցումով:

ՓՈՒԿՈՒՄ ԵՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ, ԲԱՅՑ ՈՉ ԲԱՐՔԵՐԸ

Կան հավաստի վկայություններ, որ Ֆաշիստները համակենտրոնացման ճամբարներում տանջում ու կտտանքների էին ենթարկում մարդկանց եւ ստիպում հանրահայտ օպերային երգիչներին այդ ընթացքում արիաներ երգել:

... Արցախյան շարժման եռուն շրջանում Շահբուլադի բանտում նույն կերպ էին վարվում հայազգի բանտարկյալների հետ, որոնց մեծ մասն անմեղ քաղաքացիներ էին եւ ոչ մի հանցանք չէին գործել: Բանտարկյալները պատմում են, որ իրենց ստիպում էին շան պես ուտել հացն ու կերակուրը փսխեից, իսկ մի մասին ստիպում էին այդ ընթացքում երգել ադրբեջանական մուղամներ:

... Փոխվում են ժամանակները, բայց ոչ բարքերը: Բարբարոսությունն ամենուր եւ ամեն ժամ ունի նույն կերպարանքը: Ցիցերոնը կասեր՝ օ՛ ժամանակներ, օ՛ բարքեր:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ

Իմ բարեկամուհիներից մեկի հետ զրուցում էի կյանքի ու երջանկության մասին: Նա աչքերը հառեց մի կետի ու շշնջալով ասաց.

- Զեզ թվում է՝ շատ մեծ բա՞ն է պետք երջանկության համար: Ամենքին պետք է մի քիչ, շա՛տ քիչ բան: Մեկին՝ հաց, մեկին՝ սեր, մեկին՝ որ ժամանակը շուտ կամ ուշ անցնի:

Շատ հաճախ չափանիշներն այնքան կարելորդ չեն, որքան ինքը՝ ցանկալիքը: Օրինակ՝ ինձ պետք է, որ ամուսինս կողքիս լիներ, այլ ոչ թե զոհված, որ կողքիս լինի մեկը, որին դժվար պահերին հենվեմ... Ամենքին պետք է այն, ինչ ինքը չունի:

Անդրե Մորուան մի առիթով գրել է. «Երբ խոսում եք դժբախտության կամ երջանկության մասին, ուշադիր նայեցեք ձեր շուրջը, ուր կան կույրեր, հաշմանդամներ, որբեր, մահվան դատապարտվածներ, ամեն ինչ դրեք համեմատության նժարին եւ հետո, նոր միայն ասացեք, թե դուք ինչքանով եք դժբախտ կամ երջանիկ»:

Երջանկության չափանիշը... Այն, իրավ, չունի տարածական ու ժամանակային կշիռ ու չափ, բայց ունի ձեւ ու բովանդակություն: Սակայն այդ ձեւն ու բովանդակությունը կախյալ են հենց իրենից՝ մարդուց, որը հորինում, սկսում ու ավարտում է պատերազմը՝ թաղելով ոմանց երջանկությունն արժեքորող ՑԱՆԿԱԼԻԹԸ, սպանելով ոմանց ժամանակը, «կտրելով» ոմանց հացը, «գողանալով» ոմանց սերը...

ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՈՒՍՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ցանկացած կրոն կամ ուսմունք ունի իր դոգմաները՝ ուսմունքի հիմնական դրույթները, որոնք հետապնդում են որոշակի քարոզչական նպատակներ, ձեւավորում

են աշխարհայացք, դառնում մտածելակերպի ու գործունեության առանցք:
Դավանանքի եռությունը՝ մարդկանց հոգեւոր նախապատրաստումն է: Ինչքա՞ն
մարդասիրություն կամ մարդատյացություն, հոռետեսություն կամ լավատեսություն կա
որեւէ ուսմունքում: Այս հարցի ճշմարիտ պատասխանը տալիս է պատմությունը:
Բոլոր տեսակի հակամարտությունների ժամանակ կռիվ սանձագերծողները
դավանանքն օգտագործել են որպես միջոց զանգվածներին միաբանելու եւ
այլադավաններին ոչնչացնելու համար: Սակայն յուրաքանչյուր դավանանքի հետևորդ
կամ քարոզիչ համոզված է եղել (եւ է), որ իր ուսմունքն ամենամարդասիրականն է:
... Յոր գյուղի ազատագրումից հետո, թուրքերից առգրավված վագոն-տնակում գտա մի
Ղուրան եւ Անդրե Մորուայի «Նամակներ երիտասարդներին» գիրքը: Ըստ եռության,
երկու գրքերը պարունակում են մարդասիրական շատ դրույթներ, խրատներ,
խորհուրդներ: Մորուան աշխարհի ամենահումանիստ գրողներից մեկն է:
Մահմեդականների համար՝ Ղուրանն ամենահումանիստական գիրքն է: Բայց
տարօրինակն այն է, որ հենց այս գրքերը կարդացողները (շատ հավանական է) մի
քանի օր առաջ ավերել էին Յոր գյուղի... գերեզմանոցը: Գերեզմանաքարերի մի մասը
հանված էին, մի մասը՝ չարդոտված:
Սա չի խոսում, արդյո՞ք, այն մասին, որ ցանկացած դավանանք ներգործում է մարդու
վրա մինչ այն պահը, երբ դրա անհրաժեշտությունը բխում է մարդու «ես»-ի
հասարակական ցուցադրման պահանջից, իսկ երբ մարդու մեջ խոսում է գազանը՝
դավանանքը, ուսմունքը դառնում են սուտ եւ կեղծ կատեգորիաներ:
... Ամենակարող ուսմունքն անգամ պատերազմի ժամանակ անհեթեթություն է՝ որպես
մարդասիրական պատվիրանների քարոզչություն:

«ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՄ ՅՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է»

Այս իմաստուն բառերը պատկանում են մեծ զորավար Նապոլեոն Բոնապարտին,
մարդու, որն իրականում գրեթե ժամանակ ու հնարավորություն չի ունեցել անձնական
երջանկությունը կառուցելու ու վայելելու համար: Չորավարն աշխատում էր օրվա մեջ
մոտ 16-17 ժամ, քնում՝ 4-5 ժամ:

Արցախյան շարժման ու պատերազմի ժամանակ հանուն ազատ, անկախ ու միացյալ
հայրենիք ունենալու գաղափարի, ազգովին (մեծամասամբ) գործում, պայքարում,
կռվում էինք մեր հնարավորությունների մեծագույն չափանիշներով՝ անտեսելով
անձնականը, ու հասանք մեծագույն արդյունքի: Անձնական կյանքում ունեցանք
անդառնալի կորուստներ...

Այսօր շատերիս երջանկության ուղիները կարծես շրջափակված են շուկայական
հարաբերությունների տոկոսային ու վարկային ցանցերով, եւ այդ իսկ պատճառով չենք
կարողանում հասնել որեւէ դրական արդյունքի: Պատերազմի ավարտից հետո
գաղափարի դաշտը մնաց թափուր, նրա տեղը լրացրել է դրամատենչությունը: Հիմա
ազգովին (մեծամասամբ) մեր հնարավորություններն օգտագործում ենք անձնական
արդյունքների հասնելու համար, բայց ազգովին տուժում ենք:

«Իսկական մեծ մարդը պետք է միշտ վեր լինի իրադարձություններից, որոնք
հանդիսացել են նրա գործողությունների հետեւանքը»: Այս խոսքը նույնպես
պատկանում է Նապոլեոնին եւ տեղին է ասված (մեզ համար): Չենք կարողանում վեր
լինել իրադարձություններից, որոնք մեր իսկ գործողությունների արդյունք են: Մեծ
Գաղափարի՝ ազգային շահերի առաջնահերթությունը չընդունելու իրողությունը
կործանարար է: Սա կարծես գիտակցում են շատերը, բայց արդյունք չկա... Շատ
ցավալի է, աններելի...

«Ե՛Վ ԿՅԱՆՔ, Ե՛Վ ԱՐՅՈՒՆՔՆԵՐ, Ե՛Վ ՍԵՐ...»

Պատերազմի ամենածանր օրերին առաջին գումարտակի տղաներից մեկը որոշում է
ամուսնանալ: Մտերիմ ընկերոջ հետ մեկնում են սիրածի ծնողներից խնդրելու աղջկա
ձեռքը:

Աղջկա հայրը, որ բավականին հասկացող ու բարեկիրթ մարդ է լինում, ապագա
փեսային չվիրավորելու համար, բացատրում է, որ ամեն ինչ կարելի է կազմակերպել
պատերազմի ավարտից հետո:

Տղան քիչ խորհում է ու ասում.

- Ես ուզում եմ վայելել իմ բաժին երջանկությունը, կարող է, չէ՞, վաղը մի գնդակ էլ ինձ

տանի: Ես երջանկության իրավունք ունե՞մ, թե՞ ոչ...

Այս խոսքերից հետո աղջկա հայրն անզոր տարածում է ձեռքերը եւ տալիս իր համաձայնությունը:

... Նրանք ընդամենը մեկ տարի են ապրում միասին: Տղան գոհվում է մարտում: Ճակատագրի դառը հեգնանք՝ «եւ՛ կյանք, եւ՛ սեր, եւ արցունքներ...»

«ՍԻՐԵՑԷԸ ՉՄԻՄԵԱՆԱ»

Առաջին վաշտի կազմավորման (1991 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) սկզբնական շրջանում ամեն ինչի պակաս էր զգացվում՝ զենքի, զինամթերքի, զինվորական հագուստի, հանդերձանքի, հացի ու սննդի: Այդ պակաս ու պռատ օրերին սննդի հարցով վաշտին օգնության են հասնում Ղարաբաղի գյուղերի բնակիչները: Մարտունու շրջանի Աշան, Ասկերանի շրջանի Նախիջեւանիկ եւ Ավետարանոց գյուղերում կազմակերպվում է սննդահավաք, գյուղացիները հանգանակածն իրենց տեխնիկայով տեղափոխում են առաջին վաշտ: Մեկ շաբաթվա ընթացքում ճաշարանի պահեստը լցվում է ամեն տեսակ բերք ու բարիքով՝ ալյուր, չամիչ, չիր, կարագ, պանիր, ընկույզ, անգամ՝ չորթան ու թթու: Պատերազմը, ցավը, համազգային իղձը մարդկանց դարձրել էր մի տուն, մի օջախ: Ռմբակոծությունների ժամանակ մի քանի ընտանիքներով միասին պատսպարվում էին փոքրիկ նկուղներում, այնտեղ սնվում միասին՝ մի կաթսայից: Մարդիկ իրար հետ կիսում էին վերջին կտոր լավաշն ու հացը: (Պատերազմի տարիներին հոսանքի, էներգակիրների բացակայության պատճառով քաղաքի հացի փոշերը հիմնականում չէին աշխատում, եւ մարդիկ ստիպված երկաթյա վառարաններում ու սաջերի վրա թխում էին լավաշ հաց՝ դարաբաղյան յոխա: Ստեփանակերտ քաղաքի բոլոր բնակիչներն ականատեսն ու վկան են այս իրողությունների):

Պատերազմից հետո՝ խաղաղության պայմաններում, երբ ապրելն ու միմյանց օգնելը դարձել է ավելի դյուրին եւ հնարավոր, մարդիկ խուսափում են միմյանցից, մարդիկ մեծամասամբ օտարացել են իրարից, մոռացել Զիսուսի գլխավոր պատվիրանը՝ սիրեցեք զմիմեանս: Ասելիքս երեւի դաժան է հնչելու. բայց մի՞թե պետք է նորից ցավ ու պատերազմ լինի, որ ազգովին միաբանվենք ու սիրենք միմյանց, օգնենք ու սատարենք մեկմեկու: Ահավոր ճնշող են սոցիալական հակադրությունները, տարբեր խավերի ապրելակերպը: Իրար կողքի չեն տեղավորվում վեհակերտ պալատները եւ փողոցում մուրացող որբուկների աղերսական խնդրանքը:

Ո՞վ ենք մենք այսօր,
ՍԻՐԵՑԷԸ ՉՄԻՄԵԱՆԱ...

Վաթան, վաթան, վաթան...

(հատված՝ անտիպ գրքից)

Արամ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երեւան

Ռաֆիկի աշխարհն սկսվում է «Սոցիալիզմ» խանութից ու ավարտվում է «Սեննոյ» շուկայի մայթեգրին:

Ռաֆիկի ու Չոյայի գրպանում հին խորհրդային անձնագիրն է՝ Զադրուբ, Սեւան, Դոնի Ռոստով, Սարատովի մարզ, Տատիչչեւո կիսակայարան գրանցումներով:

Ընդամենը մի մարդկային կյանքի կարճ ժամանակահատվածում հին երկրի քաղաքացին անցնելով վերոթվարկյալ բնակավայրերի միջով, հայտնվել է նոր երկրում ու ապրում է նոր երկրի նոր կանոնով: Ավելի ճիշտ, վեց տասնամյակը բոլորած մարդ ու կին փորձում են ներդրվել նոր կարգ ու բարքով ապրող ռուսական կյանքի մեջ:

Տատիչչեւո-Սարատով, Սարատով-Տատիչչեւո առաջին էլեկտրագնացքի հետ սկսվում է նրանց շարժումը, վերջինի հետ հանգրվանում մեծ կայսրության մայրաքաղաքից ութ

հարյուր կիլոմետր հեռու գտնվող ստանցիայում:

Հաղորդվեց, որ աշխարհի կենտրոնն չի, որ նեղվի այնտեղ ծնված մարդը քաղաքակիրթ կենտրոնից կտրված լինելու համար: Տեղավայրը չի նեղում Ռաֆիկին: Մեկ-մեկ վատ եղանակին բողբոջում է թիակի տակի աղի կուտակումից ու մի քիչ էլ ապրելավարձի թանկությունից:

Ռաֆիկի ամենասիրած անեկոտը էշի ու ուղտի մասին պատումն է: Ռաֆիկի կատարմամբ այն հնչում է այսպես.

«Էշն ու ուղտը որոշում են փախչել իրենց անգթորեն աշխատեցնող տիրոջ մոտից: Բավականին հեռանալով ու հայտնվելով առատ մարգագետնում, արածելով ու ըմբռնվելով ազատ կյանքը, մոռանում են երբեմնի անազատ օրերը: Էշի մոտ երգելու ցանկությունն է առաջանում»:

Ռաֆիկը պատումի այդ մասը նկարագրում է առանձնակի շեշտադրմամբ: Նրա տեսնող մի աչքը փայլատակում է «ազատություն» բառն արտաբերելիս, ու կարճ դադարից հետո ավելի բարձրաձայն նա շարունակում է.

- Երգելս գալիս է, ուղտ ախպեր, ուզում եմ երգել, - անկարող իր ոգեւորությունը գսպել, իրագրելում է էշը:

- Դու որ երգես, կլսեն քո ձայնը, կգան մեզ կրռնեն ու կտանեն, նորից կլծեն տաժանակիր աշխատանքի: Արի՛, դու մի երգի, էշ ախպեր, - հորդորում է ուղտը:

Էշը չի լսում ու սկսում է երգել:

- Ի՛ ա, ի՛ ա, ի՛ ա...

Ռաֆիկը նմանակում էր էշին բարձրաձայն, բոլորին լսելի: Նմանակելիս նա կտրվում, հեռանում էր իրական իր վիճակից, հետո, երբ հետ էր գալիս ռեալ կյանք, իր արածի վրա ծիծաղում էր Ռաֆիկը, նրա հետ էլ ծիծաղում էինք մենք՝ լսողներս: Նրա ու մեր ծիծաղը սկիզբ էր առնում սարատովյան փոշեծածկ փողոցից, սավառնում էր բերնեբերան մարդկային ամբոխով լցված շուկայի հրապարակի վրա, թռչում անցնում էր տարիների միջով ու թաղվում անտեսանելի հեռվում՝ մի տեղ, ուր Ռաֆիկի ու նրա պատումը լսողների Հայրենիքն է: Էշին նմանակող այդ գոռոցի հետ նա դուրս էր թափում չապրած տարիների ողջ մաղձը՝ դառնաղի, անիրավ...

Հետո հանդարտվում էր, ներքին խռովահույզ ապրումը մեղմանում էր, ուղղվում էին դիմազծերը ու համակերպված, կիսաձայն ավարտում էր իր պատումը:

- Էշի երգի վրա գալիս, բռնում են նրանց երկուսին էլ ու տանում են նորից տիրոջ մոտ:

* * *

Ռաֆիկին կարելի է տեսնել օրվա համարյա բոլոր ժամերին «Սեննոյից» դեպի «Սոցիալիզմ» վեր ու վար անելիս: Բիզնեսի բյուջեն է սուղ: Պահեստամասը, շրջանառու միջոցը, հավելյալ արժեքը ներառյալ տեղավորվում է Չոյայի պարուսիներ, հաստ կտորից կարված պայուսակի մեջ: Վաճառվող ապրանքաքանակը վերականգնվում է առավոտյան, կեսօրին ու երեկոյան՝ երկու-երեք ժամը մեկ: Տրանսպորտի միակ ծախսը էլեկտրագնացի արևմտեմետի յոթանասունինը ռուբլի վարձն է: Սևուկը, ապրելավարձ ու տրանսպորտ՝ սա է ընտանեկան ձեռնարկի ողջ հաշվապահությունը:

Նրանք, իմը, էլի շատ շատերի վիճակը նմանաչափ ու նմանատիպ են, չնչին տարբերություններով: Վտարանդու, օտարության մեջ հայտնվածի ապրելակերպի լավն ու վատը ես չեմ կարողացել տարբերակել: Ոչ տաք խանութը, ոչ էլ լավ մեքենան Հայրենիք չեն դառնում: Զեզ են օտար, դու ես օտար:

Լավ ու վատ լեզվիմացությունը չի կապում մարդկանց: Վտարանդի մարդկանց կապող ուրիշ բաներ կան:

* * *

«Բուլշայա Գորնայա» ու «Ունիվերսիտետսկայա» փողոցների խաչմերուկում կանգնած եկեղեցին գործող է: «Սոցիալիզմ» խանութը համարյա այդ եկեղեցու դիմացն է:

Ժամանակ առ ժամանակ ես մտնում էի այդ եկեղեցին: Ու չգիտեմ որ տոնի առիթով եկեղեցի գնալու մտադրությամբ ես միացա Ռաֆիկի հերթական «Սեննոյ»-

«Սոցիալիզմ» մարշրուտին:

- Սալամ-սալամ, գրդավստվույ-գրդավստվույ, բարեւ-բարեւ, - ողջագուրվեցինք ջերմ ու նույն ջերմությամբ էլ երեք լեզվով բարձրաձայնեցինք իրար տեսնելու ուրախ տրամադրությունը՝ կովկասյան դեմքով երեք տղամարդ՝ Ռաֆիկը, Իբրահիմը, ես:

Ռաֆիկը 10 ռուբլով «Սոցիալիզմից» առած սիգարետն էր վաճառում «Սեննոյի» առաջ՝

12 ռուբլով, իսկ Իբրահիմը «Սեննոյից» 5 ռուբլով առած կանաչին էր վաճառում «Սոցիալիզմ» խանութի առաջ՝ 7 ռուբլով: Եկամուտը դառնում էր Էժանագին սպիրտ, որը Իբրահիմը խմում էր չբացած: Նա ու Ռաֆիկը լիքը բաժակները ձեռքներին նայում էին ինձ: Ես եկեղեցի մտնելս պատճառաբանելով, հրաժարվեցի, ինչը համոզեց երկուսին էլ: Նրանք մտան առանձնագրույցի մեջ ու խոսում էին ադրբեջաներենով: Ջրի երկու կաթիլ են Ռաֆիկն ու Իբրահիմը: Նրանց քաղցր գրույցից ես հասկանում էի մի բան. վաթան, վաթան, վաթան...

Ժպտում էի ու մտածում, որ իր «վաթանին» կարոտողի համար երեւի թե նշանակություն էլ չունի, թե ո՞ր քաղաքում, ո՞ր ծառի տակ ինքն ինչ է ուտում կամ էլ ինչ է խմում: Նրանց տան ու հողակտորի կարոտն ամբողջացնող բաժակի գնգոցին միախառնված եկեղեցու գանգերի կոչի հետ գնաց հայացքս ու կանգ առավ եկեղեցու բակում հավաքված, օրհնված ջրի հերթում ծփացող ամբոխի վրա: Մտածեցի, որ առածգական է Սարատովը՝ լցվում է, ինչքան լցնում ես, ինչքան գալիս են՝ պարունակում է: Տեղավորում, գտում, մաքրում է նաեւ քիչ-քիչ, որ պարունակությունը չփչանա: Նա փողոցն արագ չի մաքրում ռաֆիկներից ու իբրահիմներից: Նա այդ գործը թողնում է ժամանակին: Սարատովը հասկանում է, Սարատովի բնակիչն է հասկանում, Սարատովի տերն է հասկանում: Մտածեցի տխուր, որ ժամանակն անշտապ մաքրել-տանելու ու անցյալում է թողնելու Ռաֆիկին, Իբրահիմին, ինձ...

Արցախյան քրոնիկոն Մայիս

Մայիսի առաջին օրերին ԼՂՀ ԱԺ թվով 20 պատգամավորներ հանդես էին եկել նախաձեռնությամբ՝ մայիսի 4-ին արտահերթ նիստ հրավիրելու եւ քննարկելու իրենց իսկ կողմից մշակված հայտարարության նախագիծը, որում հիմնականում նշվում էր, որ դարաբաղյան կողմը չի կարող պարտավորություն ստանձնել առանց իր մասնակցության ձեռք բերված ցանկացած պայմանավորվածության կամ համաձայնագրի համար, դարաբաղյան կողմը ոչ մեկին չի լիազորել ներկայացնելու իր շահերը եւ որ ժամանակն է, որ ԼՂՀ-ի ու ՀՀ-ի միջեւ կնքվի միջպետական պայմանագիր՝ ռազմավարական գործընկերության մասին, սակայն մինչեւ նիստի օրը դիմումը ստորագրած 20 պատգամավորներից 11-ը /հիմնականում «Հայրենիք» խմբակցությունից եւ «Արցախատուն» պատգամավորական խմբից/ ետ վերցրեցին իրենց ստորագրությունները, եւ նիստն այդպես էլ չկայացավ:

Մայիսի 4-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ՀՀ նախկին արտգործնախարար, այժմ «Սիվիլիթաս» հիմնադրամի նախագահ Վարդան Օսկանյանի դիվանագիտական 10-ամյա աշխատանքն ամփոփող «Անավարտ տասնամյակ» գրքի շնորհանդեսը, որն Արցախում կազմակերպելու գաղափարը հեղինակը կապում է նրա հետ, որ գրքի բովանդակության սովոր հատվածը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին:

ԼՂՀ արտգործնախարարության հյուպատոսական ծառայության տվյալների համաձայն, այս տարվա առաջին եռամսյակում, 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գրեթե երկու անգամ ավելացել է ԼՂՀ այցելած օտարերկրյա քաղաքացիների թիվը, որոնց գերակշիռ մասը Ֆրանսիայի, Իրանի, Մեծ Բրիտանիայի, Հունգարիայի, Ռուսաստանի, Լեհաստանի քաղաքացիներ են:

Մայիսի 8-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում արցախյան պատերազմի առաջին կարգի 8 հաշմանդամներ ստացան ձեռքի կառավարման ավտոմեքենաների բանալիները, որոնք հանձնեց անձամբ բարերարը՝ Սուրեն Ավագյանը:

Եռատոնի նախօրյակին Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում բացվեց բրիտանացի հայտնի լուսանկարիչ Պոլ Մելորի լուսանկարների ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին հեղինակի՝ Ղարաբաղի եւ Հայաստանի կյանքն, առօրյան եւ

կենցաղը պատկերող գործեր:

Մայիսի 9-ին ԼՂՀ-ում նշել են Եռատոնը՝ Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրման օրը:

Եռատոնի նախօրեին նախագահ Բակո Սահակյանը Արկաղի Տեր-Թադևոսյանին է շնորհել ԼՂՀ բարձրագույն՝ «Արցախի հերոս» կոչում, պարգևատրելով «Ոսկե Արծիվ» շքանշանով, որին արժանացել է նաեւ ԼՂՀ նախկին նախագահ Արկաղի Ղուկասյանը:

«**Այս տարի** դարաբաղյան բանակի դիրքերը բարելավվել են. աջ թեւում՝ Արաքսի ափին, դիրքերը մոտ 4 կմ առաջ են տարվել», - այս մասին մայիսի 11-ին հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է ԼՂՀ պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանը:

Մայիսի 11-14-ը տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Արցախյան քառօրյակը, որի շրջանակներում Արցախ ժամանած պատվիրակության անդամները, ովքեր հիմնականում հիմնադրամի տեղական մարմինների ատենապետեր էին եւ ներկայացուցիչներ, մասնակիցը դարձան իրենց իսկ հանգանակություններով կառուցված տարբեր օբյեկտների բացմանը եւ ծանոթացան ինչպես կատարված, այնպես էլ ընթացիկ աշխատանքներին:

Մայիսի 17-ին «Զեզ համար, Հայաստան» ծրագրի շրջանակներում Արցախում եր գտնվում աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը, ով Արցախի ղեկավարության ուղեկցությամբ այցելեց իր անունը կրող մշակույթի կենտրոնը, որտեղ մասնակցեց կենտրոնի բացման արարողությանը:

Ղարաբաղի ոչ կառավարական կազմակերպությունների երկրորդ համաժողովի մասնակիցները հռչակագիր են ընդունել, որում մասնավորապես նշված է. «Մենք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոչ կառավարական կազմակերպությունների առաջնորդներս եւ փորձագետներս, հայտարարում ենք միջազգային խաղաղարար ծրագրերին մեր մասնակցության սկզբունքները.

-չմասնակցել միջհամայնքայնության շրջանակներում կամ մեր՝ որպես ԼՂՀ քաղաքացիների, ինքնանույնականացմանը հակասող եւ այն սահմանափակող որեւէ այլ ձեւաչափով նախատեսված ծրագրերին,

-համագործակցել միջազգային կազմակերպությունների եւ դոնորների հետ փոխադարձ թափանցիկության ու բացահայտության հիման վրա՝ հաշվի առնելով առկա իրողությունները»:

Մայիսի 28-ին Ստեփանակերտ պիտի ժամանեին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, սակայն «եղանակային վատ պայմանների պատճառով» այցը չկայացավ: